



ISSN 2579 - 2555

**ՖԻՆԱՆՍՆԵՐ ԵՎ  
ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՈՒՄ**

**2**

**ԵՐԵՎԱՆ - 2018**  
**[www.iatc.am](http://www.iatc.am)**



ՀԱՇՎԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ  
ԿԵՆՏՐՈՆ  
INTERNATIONAL ACCOUNTANCY TRAINING CENTRE  
МЕЖДУНАРОДНЫЙ ЦЕНТР ПО ОБУЧЕНИЮ  
БУХГАЛТЕРИИ

ՖԻՆԱՆՍՆԵՐ ԵՎ ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ  
ՀԱՇՎԱՌՈՒՄ

ԳԻՏԱԿԱՆ ՀԱՆՐԵՍ

2 (2)

FINANCE AND ACCOUNTING

SCIENTIFIC JOURNAL

ФИНАНСЫ И БУХГАЛТЕРСКИЙ УЧЕТ

НАУЧНЫЙ ЖУРНАЛ

ԵՐԵՎԱՆ 2018

«ՀՈՒՄԿ» ՀԻՄՆԱԴՐԱՍ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

«Ֆինանսներ և հաշվապահական հաշվառում» գիտական  
հանդեսը լույս է տեսնում տարեկան երկու անգամ:  
Հրատարակվում է 2018 թվականից:

The scientific journal "Finance and accounting" is published  
twice a year. It has been published since 2018.

Научный журнал "Финансы и бухгалтерский учет" выходит  
два раза в год. Издается с 2018 года.

### **Խմբագրություն՝**

Գլխավոր խմբագիր՝ Ճուղուրյան Արմեն (տ.գ.դ., պրոֆ.)

Գլխ. խմբագրի տեղակալ՝ Սահակյան Հասմիկ

Պատասխ. քարտուղար՝ Մխիթարյան Մելինե

Պատասխ. խմբագիր՝ Առաքելյան Անի

### **Խմբագրական խորհուրդ.**

Թավադյան Աշոտ (տ.գ.դ., պրոֆ.), Հակոբյան Արմեն (տ.գ.դ.)

Գրիգորյան Լիանա (տ.գ.դ., պրոֆ.), Սահակյան Մելս (ֆ.-

մ.գ.թ., պրոֆ.), Խաչատրյան Նոննա (տ.գ.թ.)

© ՖԻՆԱՆՍՆԵՐ ԵՎ ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՈՒՄ • FINANCE  
AND ACCOUNTING • ФИНАНСЫ И БУХГАЛТЕРСКИЙ УЧЕТ

**Edition:**

Editor –in-chief: Tshuguryan Armen (Sc.D. in Economics, Professor)

Deputy editor –in-chief: Sahakyan Hasmik

Executive Secretary: Mkhitaryan Meline

Managing Editor: Arakelyan Ani

**Editorial Board:**

Tavadyan Ashot (Sc.D. in Economics, Professor), Hakobyan Armen (Sc.D. in Economics), Grigoryan Liana (Sc.D. in Economics, Professor), Sahakyan Mels (Ph.D. in Phys.- Math. Sciences, Professor), Khachatryan Nonna (Ph.D. in Economics)

**Редакция:**

Главный редактор: Джугурян Армен (д.э.н., проф.)

Зам. главного редактора: Саакян Асмик

Ответственный секретарь: Мхитарян Мелине

Ответ. редактор: Аракелян Ани

**Редакционная коллегия:**

Тавадян Ашот (д.э.н., проф.), Акопян Армен (д.э.н.), Григорян Лиана (д.э.н., проф.), Саакян Мелс (к.ф.-м.н., проф.), Хачатрян Нонна (к.э.н.)

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Հայկ Մակարյան «ՀՈՒՄԿ» հիմնադրամ	Բիզնեսի արժեքի գնահատման հաշվապահական մոտեցումները .....	6
Կարինե Զուրաբյան, ԵՊՀ	Ծախսումների և ծախսերի հաշվառման հիմնախնդիրները .....	13
Արթուր Հարությունյան «ՀՈՒՄԿ» հիմնադրամ	Բյուջեյն տեխնոլոգիայի զարգացման հնարավոր ազդեցությունը հաշվապահական հաշվառման, ֆինանսական հաշվետվությունների և աուդիտի վրա .....	37
Սոնա Բալոյան «ՀՈՒՄԿ» հիմնադրամ	Ընթացիկ ակտիվների շրջանառելիության վերլուծություն .....	46
Արմեն Ճուղուրյան ԵՀՍ	Հաշվապահական հաշվառման համակարգի և ՀՀ հարկային օրենսգրքի փոխկապակցման խնդիրները .....	60
Արա Քառյան ԵՏԿԱ	Հարկային համակարգի Էկոլոգացումը Հայաստանում. տնտեսական գերակայություններ .....	68
Գնել Խաչատրյան BDO Հայաստան	Աուդիտի միջազգային ստանդարտների փոփոխությունների կիրառումը ՀՀ-ում 2017-2018 թթ-ներին .....	91
Նարինե Մելիքյան Կորպորատիվ Կառավարման Կենտրոն	Կորպորատիվ կառավարումը փոքր և միջին ձեռնարկություններում .....	102

Վանո Ղազազյան ասպիրանտ	Օտարերկրյա ներդրումների խթանման ուղիները ՀՀ-ում .....	115
Գառնիկ Հարությունյան Հակոբ Թովիչյան Ալբերտ Սահակյան	Դեղերի գների պետական կարգավոր- ման համակարգում մեծածախ և մանրա- ծախ առավելագույն հավելագների (Mark-ups) սահմանման մասին .....	129
Սվետլանա Մուրադյան ԵՀՍ	Հարկազանձման միտումները ՀՀ լեռնային արդյունաբերությունում .....	143
Farnoosh Khoshbakht EREA	Woman managers and work forces versus men counterparts .....	155

## ԲԻԶՆԵՍԻ ԱՐԺԵՔԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ

*Հիմնաբառեր – հաշվապահական հաշվեկշիռ, գնահատման ռիսկեր, կառավարչական որոշումներ, ոչ նյութական ակտիվներ*

«Բիզնեսի արժեքի գնահատումը» կամ պարզապես «բիզնեսի գնահատումը» ժամանակի որոշակի պահի դրությամբ ձեռնարկության թվային արժեքային գնահատականի որոշումն է: Ինչպես սեփականության ցանկացած այլ օբյեկտի, այնպես էլ բիզնեսի արժեքի գնահատումն իրենից ներկայացնում է կարգավորված և նպատակաուղղված գործընթաց, որի արդյունքում որոշվում է դրամական արտահայտությամբ օբյեկտի արժեքը՝ հաշվի առնելով դրա վրա ազդող գործոնները ժամանակի որոշակի պահի կոնկրետ շուկայի պայմաններում:

Կարելի է տարանջատել այս գործընթացին բնորոշ յուրահատուկ գծեր՝

1. Ինչպես արդեն նշվել է, առհասարակ, գնահատում տերմինը ենթադրում է որոշակի գործընթաց, այսինքն՝ արդյունք ստանալու համար իրականացվում են մի շարք գործառնություններ, որոնց բովանդակությունն ու հերթականությունը կախված են օբյեկտի բնութագրող գծերից և ընտրված մեթոդներից:

2. Հնարավոր է առանձնացնել տարբեր դեպքերը համախմբող գնահատման ընդհանուր փուլեր, օրինակ՝ գնահատման նպատակը, գնահատման ենթակա արժեքի ձևը,

անհրաժեշտ տեղեկատվության հավաքագրումն ու մշակումը, գնահատման մեթոդի ընտրությունն ու հիմնավորումը, օբյեկտի արժեքի հաշվարկը, ճշգրտումները, վերջնական արդյունքի ստացումը, ստացված արդյունքների ստուգումն ու համաձայնեցումը: Նշյալ փուլերից ոչ մեկը հնարավոր չէ բաց թողնել կամ փոխել դրա իրականացման հերթական կարգը, քանի որ դա կհանգեցնի վերջնական արդյունքի խեղաթյուրման, որտեղից էլ բխում է գնահատման բնութագրող կարգը, այսինքն՝ այն կարգավորված գործընթաց է, և բոլոր ընթացակարգերն իրականացվում են կոնկրետ կանխորոշված հերթականությամբ:

3. Գնահատումը նպատակաուղղված գործընթաց է, քանի որ պայմանավորված է որոշակի գործարքի իրականացման համար: Բնականաբար, որոշվում է օբյեկտի արժեքը, սակայն, թե որ արժեքն է հարկավոր որոշել, կախված է ինչպես գնահատման նպատակներից, այնպես էլ գնահատվող օբյեկտի բնորոշ գծերից: Օրինակ, եթե ձեռնարկության արժեքի գնահատումն իրականացվում է գնման կամ վաճառքի գործարքի կնքման նպատակով, ապա կհաշվարկվի շուկայական արժեքը, իսկ եթե գնահատման նպատակը բիզնեսի արժեքի որոշումն է դրա լիկվիդացիայի պարագայում, ապա հաշվարկվում է լիկվիդացիոն արժեքը:

4. Արժեքի չափը մշտապես որոշվում է դրամական արտահայտությամբ, հետևաբար բոլոր արժեքային բնութագրիչները պետք է ներկայացվեն քանակապես, անկախ այն հանգամանքից, թե որքան սուբյեկտիվ բնույթ է կրում այդ գնահատականների ճշգրիտ որոշման հնարավորությունը և դրամական համարժեքով ներկայացումը:

5. Արժեքային գնահատականը բխում է դրա շուկայական բնույթից: Նշանակում է, որ չպետք է բավարարվել լոկ գնահատվող օբյեկտի ստեղծման կամ ձեռքբերման ծախսումներով, դրա տեխնիկական բնութագրերով, աշխարհագրական դիրքով, դրա միջոցով ստեղծվող եկամու-



տով, ակտիվների և պարտավորությունների բնույթով ու կառուցվածքով: Անհրաժեշտ է հաշվի առնել մի շարք այլ գործոնների համախմբություն՝ շուկայական կոնյունկտուրան, մրցակցության բնույթը, գնահատվող բիզնեսի ոլորտը, մակրո և միկրո միջավայրը, եկամուտների ստացման հետ կապակցվող ռիսկերը, ճյուղային միջին եկամտաբերությունը, նմանատիպ կամ փոխարինող օբյեկտների գները, տվյալ ոլորտում և ողջ տնտեսությունում տիրող իրադրությունը և այլն: Հիմնական շուկայական գործոններն են հանդիսանում ժամանակը և ռիսկը: Շուկայական տնտեսությանը բնորոշ է դինամիկությունը, որն էլ ժամանակը դարձնում է շուկայական գործընթացներին ներագոյող կարևորագույն գործոն՝ ներառյալ բիզնեսի (ձեռնարկության) արժեքի գնահատումը: Եկամուտների ստացումը չափվում է որոշակի ժամանակամիջոցներով կամ ժամանակի ինտերվալներով: Ենթադրվող ինտերվալի երկարությունն ազդում է շուկայական արժեքի վրա առաջին հերթին այն պատճառով, որ հաշվի է առնվում դիսկոնտավորման դեպքում: Բիզնեսի շուկայական արժեքը փոխվում է ժամանակի ընթացքում բազմաթիվ գործոնների ազդեցությամբ, այդ պատճառով այն գնահատվում է ժամանակի կոնկրետ պահի դրությամբ: Շուկայական արժեքի հաջորդ եական գործոնը ռիսկն է: Ռիսկ ասելով հասկանում ենք շուկայի կոնյուկտուրային և մակրոտնտեսական պրոցեսներին առնչվող անորոշությունն ու փոփոխականությունը: Այլ կերպ ասած՝ ռիսկն այն հավանականությունն է, որ գնահատվող բիզնեսում կատարված ներդրումներից փաստացի հատույցը տարբեր կլինի կանխատեսված մեծությունից: Գոյություն ունեն ռիսկի բազմաթիվ տեսակներ, և ցանկացած ներդրում շուկայական տնտեսության պայմաններում չի հանդիսանում բացարձակ ռիսկազերծ: Գնահատման արդյունքը շուկայական արժեքի կամ դրա մոդիֆիկացիայի դուրսբերումն է: Շուկայական արժեք կատեգորիան բնու-

թագրվում է որպես ամենահավանական գին, որով գնահատվող օբյեկտը կարող է օտարվել ազատ շուկայական պայմաններում գործարքին լավատեղյակ և պատրաստակամ կողմերի միջև, և գործարքի գինը չի արտահայտում որոշակի ծայրահեղ հանգամանքներ<sup>1</sup>:

6. Շուկայական արժեքը գնահատվում է ՀՀ դրամով կամ անհրաժեշտության դեպքում արտարժույթով, օրինակ՝ ԱՄՆ դոլարով օտարերկրյա ներդրումների պարագայում, ընդ որում նպատակահարմար է հաշվարկներն իրականացնել ընտրված արժույթով հենց գնահատման գործընթացի սկզբից, որն առավել ճշգրիտ հաշվարկների հնարավորություն կընձեռի և կնվազեցնի փոխարժեքային տատանումներից առաջացող խեղաթյուրումները:

Սկզբունքային նշանակություն ունի այն փաստը, որ շուկայական արժեքի որոշումը չի սահմանափակվում ծախսումների որոշմամբ: Հաշվի է առնվում տնտեսական գործոնների մի ամբողջ համախմբություն՝ կազմակերպության դիրքը շուկայում, ժամանակային գործոնը, ռիսկերը, մրցակցությունը և այլն: Հարկավոր է շուկայական արժեքի գնահատումը դիտարկել տնտեսագիտության տեսանկյունից: Ի տարբերություն հաշվապահական մոդելի, այն թույլ կտա ստացված արդյունքում արտահայտել այնպիսի գործոններ, ինչպես ժամանակը, ռիսկը, ոչ նյութական ակտիվները, արտաքին մրցակցային միջավայրը և գնահատվող օբյեկտին ներհատուկ ցուցանիշներ: Համաձայն նման մոտեցման՝ եկամուտ կամ կանխիկի ներհույք ապահովող ցանկացած օբյեկտի շուկայական արժեք որոշվում է որպես ապագայում սպասվող հոսքերի ներկա արժեք՝ դիսկոնտավորված (գեղչված) այն դրույքաչափով, որն արտահայտում է ներդրողի կողմից պահանջվող շահութաբերությունը համա-

---

<sup>1</sup> Jay E. Fishman, Shannon P. Pratt, J. Clifford Griffith, D. Keith Wilson and others. Guide to Business Valuations. Practitioners Pub Co; Lslf edition, 1998

նման ռիսկայնությամբ ներդրումներին: Հաշվապահական գնահատականի պարագայում կազմակերպության ակտիվները հավասար են պարտավորություններին գումարած սեփական կապիտալի գուտ մեծությունը՝

$$U = \Omega + UV \tag{1.1}$$

Շուկայական արժեքի դեպքում հավասարմանը մասնակցում է նա մեկ գումարելի՝ ոչ նյութական ակտիվները, և (1.1) հավասարումը կստանա հետևյալ տեսքը՝

$$U + \Omega U = \Omega + UV \tag{1.2}$$

Ոչ նյութական ակտիվներ ասելով տվյալ կոնտեքստում նկատի չեն առնվում այն ոչ նյութական ակտիվները, որոնք հաշվառվում են ընկերության ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, այսինքն՝ հաշվապահական հաշվեկշռում: Ներառվում են այնպիսի տարրեր, ինչպիսիք են երաշխիքների արժեքը, ապահովագրությունը, գործընկերների հետ դրական հարաբերությունները, ընկերության վարկանիշը, գուդվիլը և այլն: Շուկայական մոդելի ներկայացմամբ սեփական կապիտալի իրական արժեքը կարելի է ներկայացնել հետևյալ տեսքով՝

$$UV = (U - \Omega) + \Omega U \tag{1.3}$$

(1.3) հավասարման օգնությամբ հեշտ է բացատրել, թե ինչու են սեփական կապիտալի բացասական հաշվեկշռային արժեք ունեցող որոշակի ընկերություններ շուկայի կողմից ընդունվում որպես արժեք ներկայացնող, օրինակ՝ անվճարունակ դեպոզիտային ինստիտուտներ, սնանկացման եզրին գտնվող վարկային կազմակերպություններ և այլն: Եթե սեփական կապիտալի հաշվեկշռային և իրական (շուկայական) արժեքները տարբերվում են, ապա պետք է գոյություն ունենա թաքնված կամ արտահաշվեկշռային կապիտալ, որն ունի ձևավորման երկու աղբյուր՝

1) շուկայական և հաշվեկշռային գնահատականների միջև տարբերություն՝  $(U^* - U)$ ,

2) այնպիսի ոչ նյութական ակտիվների չարտացոլումը ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, որոնք, համաձայն հաշվապահական հաշվառման համընդհանուր ընդունելի սկզբունքների, ենթակա չեն գրանցման հաշվեկշռում (ՈԱ):

Քննարկված հաշվապահական մոդելը չի բացատրում նաև ռիսկը, քանի որ (1.1) հավասարման մեջ, կարելի է ասել, միևնույն ռիսկայնությունը բնորոշ է բոլոր դեպքերին: Իրականում, սակայն, յուրաքանչյուր ընկերություն եկամուտ ստանալիս փաստացի բախվում է ռիսկերի տարբեր տեսակների: Հետևաբար, նման մոտեցմամբ հնարավոր չէ ստանալ իրական գնահատականը:<sup>2</sup>

## ԱՄՓՈՓՈՒՄ

Այսպիսով, շուկայական արժեքի գնահատմամբ ապրանքի գնի որոշումը հնարավորություն է տալիս գնորդին և վաճառողին հիմնվել նշանակալի տեղեկատվության վրա, քանի որ այն ոչ միայն հաշվի է առնում վերագրված ծախսումներն ու սպասումները, այլև վիճակը ընդհանուր շուկայում, մասնակիցների սպասումները, տնտեսության աճի տեմպերը, շուկայի արձագանքը կնքվող գործարքին: Շուկայական արժեքի գիտակցումը սեփականատերերին հնարավորություն է ընձեռում կատարելագործել արտադրության գործընթացը, ձեռնարկել բիզնեսի շուկայական արժեքը մեծացնելուն միտված միջոցառումների համախըմբություն և այլն: Իսկ գնահատման ընթացակարգերի պարբերական բնույթը թույլ է տալիս բարձրացնել կազմա-

---

<sup>2</sup> Damodaran A. Investment Valuation. Tools and Techniques for Determining the Value of Any Asset. Second Edition: John Wiley & Sons, Inc., 2002

կերպության կառավարման արդյունավետությունը և, հետևաբար, խուսափել անվճարունակությունից և սնանկությունից: Գնահատումը նաև թույլ է տալիս կայացնել ճշգրիտ ներդրումային որոշում՝ նվազագույնի հասցնելով ծախսերը:

**Гайк Макарян**

магистр финансов, к.э.н., 'МЦОБ' Образовательный Фонд

## **БУХГАЛТЕРСКИЙ ПОДХОД ОЦЕНКИ СТОИМОСТИ БИЗНЕСА**

**Ключевые слова** – бухгалтерский баланс, риски оценки, управленческие решения, активы бизнеса

Оценка бизнеса имеет важное значение для рыночного рейтинга и конкурентоспособности предприятий. Одним из традиционных способов оценки бизнеса является анализ бухгалтерского баланса, что представляет важную информацию для управленческих решений по слиянию, или продаже предприятий. В статье рассматриваются бухгалтерские подходы в процессе оценки бизнеса.

**Hayk Makaryan**

Master of Finance, Ph.D. in Economics,  
'IATC' Educational Fund

## **ACCOUNTING APPROACH IN BUSINESS PRICE VALUATION**

**Keywords** – balance sheet, valuation risks, decision making solutions, business assets

Business valuation is important for the market and the rating of competitiveness of enterprises. One of the traditional methods of business valuation is an analysis of the balance sheet, which provides important information for management decisions in case of merging or acquisition or sale of business. The article deals with accounting approaches in the process of business valuation.

*Ներկայացվել է՝ 30.11.2018 թ.  
Ընդունվել է տպագրության՝ 21.12.2018 թ.*

**Կարինե Զուրաբյան**

Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի  
ֆինանսահաշվային ամբիոնի դոցենտ, տ.գ.թ., ԵՊՀ

## **ԾԱԽՍՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ**

***Հիմնաբառեր** – ծախսումներ, ծախսեր, ՖՀՄՄ-ներ, Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն*

Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն. Ժամանակակից աշխարհում կազմակերպությունների նորմալ գործունեությունը պահանջում է համակարգված մոտեցում դրանց ֆինանսական վիճակի վերլուծության նկատմամբ, իսկ կազմակերպության ֆինանսական ռեսուրսների գրագետ կառավարումն, իր հերթին, պահանջում է ֆինանսական ռազմավարության մշակում և իրականացում:

ՀՀ տնտեսական զարգացման ներկա փուլում տնտեսական աճի ապահովման համար առանցքային նշանակություն են ձեռք բերում հատկապես տնտեսության իրական հատվածում գործող կազմակերպությունների արդյունավետության և շահութաբերության բարձրացման հիմնահարցերի լուծմանն ուղղված ուսումնասիրություններն ու մշակումները: Այս պայմաններում հատկապես արդիա-կան են դառնում ոչ միայն արտադրական կազմակերպությունների գործունեության ֆինանսական արդյունքների գնահատման, ծախսումների և ծախսերի դասակարգման, այլև դրանց հաշվառման գործընթացների ճիշտ կազմակերպումը, քանի որ ծախսումների և ծախսերի մանրակրկիտ ուսումնասիրությունից և գործնական կիրառումից է կախված արտադրանքի ինքնարժեքի իջեցմանն ուղիների բացահայտումը, որն էլ իր անմիջական արտացոլումն է գտնում կազմակերպության եկամտաբերության և շահութաբերության ցուցանիշների վրա: Այս առումով հաշվապահական հաշվառման խնդիրն ավելի է բարդանում, քանի որ անհրաժեշտ է, որ այն ծառայի ոչ միայն արտադրական ծախսումների յուրաքանչյուր միավորի շահութաբերության մակարդակի բարձրացման հնարավոր ուղիների բացահայտմանը, այլև ուղղորդի տնտեսական գործընթացներում գործող կապիտալի արդյունավետ տեղաբաշխմանը:

Սակայն հարկ է նշել, որ և՛ հայրենական, և՛ արտասահմանյան հեղինակների հետազոտություններում դեռևս չկա միասնական մոտեցում ծախսումների բովանդակության ձևակերպումների նկատմամբ: Նորմատիվային փաստաթղթերում և տնտեսագիտական գրականության մեջ հաճախ նույնականացվում են «ծախսեր», «ծախսումներ» և «ինքնարժեք» հասկացությունները, չնայած այդ կատեգորիաների մանրակրկիտ ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դրանք էականորեն տարբերվում են միմյանցից: Հաճախ ենք գրականության մեջ հանդիպում նաև

«արտադրական ծախս», «կապիտալացվող ծախս» բառակապակցությունները, որոնք անհամատեղելի են և իրենց հիմքում բովանդակային սխալ են պարունակում:

Ելնելով գործող ՖՀՄՄ-ներից և Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ներկայացման հայեցակարգային հիմունքներից փորձենք ներկայացնել մեր մոտեցումներն այս հարցի վերաբերյալ՝ հիմնավորելով այն էական և սկզբունքային տարբերությունները, որոնք գոյություն ունեն այդ երկու տնտեսագիտական կարևոր կատեգորիաների միջև:

Այսպես, ըստ մեր մոտեցման, ծախսումներն իրենցից ներկայացնում են ակտիվների վերափոխում այլ տիպի ակտիվների, ակտիվների ավելացում դրամական միջոցների արտահոսքի հաշվին, կամ ակտիվների և պարտավորությունների միաժամանակյա ավելացում կամ նվազում, որոնք չեն հանգեցնում սեփական կապիտալի նվազմանը: Արտադրանքի արտադրության գործընթացում ծախսվում են արտադրության միջոցներ և կենդանի աշխատանք, որոնք հանդես են գալիս արտադրական ծախսումների տեսքով: Այդպես ձևավորվում է կազմակերպության արտադրական ծախսումների հատուկ կատեգորիա: Ծախսումն ավելի լայն հասկացություն է, քան ծախսը: Արտադրական ծախսումների կուտակման փուլի ավարտը պայմանավորում է դրանց՝ որպես ակտիվ կամ ծախս ճանաչելու անհրաժեշտությունը: Բոլոր այն ծախսումները, որոնք չեն հանգեցնում ակտիվի ստեղծմանը կամ գերազանցում են սպասվելիք ապագա տնտեսական օգուտները, վերագրվում են ժամանակաշրջանի ծախսերին: Ծախսումները չեն ազդում շահույթի վրա, վերջինս պայմանավորված է միայն ծախսերով: Այսպիսով, եթե ծախսումները, չբավարարելով ակտիվի ճանաչման չափանիշներին, դուրս են գրվում որպես ծախս, ապա ծախսերը ոչ մի դեպքում չեն կարող ծախսում դառնալ: Ծախսումն ու ծախսն իրենց արտացոլումն են



գտնում տարբեր ֆինանսական հաշվետվություններում, ծախսումը՝ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, ծախսը՝ Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

Փաստորեն, արտադրական ծախսումները կատարված արտոբակտ աշխատանքն է, որն արտահայտվում է աշխատանքի միջոցների, առարկաների, աշխատավարձի և այլ ծախսումների տեսքով, կամ, այլ կերպ, դա ծախսված նյութական, աշխատանքային և ֆինանսական ռեսուրսներն են, որոնք դրամական արտահայտությամբ հանդես են գալիս արտադրանքի ինքնարժեքի տեսքով, հանդիսանում են տնտեսական կատեգորիա և դասվում են կազմակերպության տնտեսաարտադրական գործունեության կարևորագույն քանակական ցուցանիշների թվին: Դրանք արտահայտում են կազմակերպության արտադրական և ֆինանսական գործունեության բոլոր կողմերը:

Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներով (ՖՀՄՍ-ներով) և Հաշվապահական հաշվառման նոր պլանով հստակ առանձնացված են ծախսումներ և ծախսեր տերմինները: Վերջիններիս սահմանազատման հետ կապված խնդիրների լուծմանը մեծապես նպաստում են «Պաշարներ» ՀՀՄՍ 2-ը, «Հիմնական միջոցներ» ՀՀՄՍ 16-ը «Ոչ նյութական ակտիվներ» ՀՀՄՍ 38-ը և ստորև ներկայացրած այլ հաշվապահական ստանդարտները:

Ներկայացնենք «Պաշարներ» ՀՀՄՍ2-ում բերված հասկացություններից մեր հետազոտության համար հետաքրքրություն ներկայացնող հիմնական դրույթները:

Պաշարների հաշվառման հիմնական խնդիրն ակտիվ ճանաչված ծախսումների որոշումն է, որը պետք է մնա այդպիսին, մինչև դրանց իրացումից հասույթի ճանաչման պահը: Այսինքն, ստանդարտն, ըստ էության, նպատակ է հետապնդում կարգավորելու նաև արտադրական

ծախսումների և արտադրանքի ինքնարժեքի որոշման հետ կապված մոտեցումները: Պաշարների ձեռք բերման ծախսումները ներառում են ձեռքբերման գինը, ներկրման տուրքերը և հարկերը (բացառությամբ նրանց, որոնք հարկային մարմինների կողմից ենթակա են կազմակերպությանը ետ վերադարձման), ինչպես նաև տրանսպորտային, բեռնման-բեռնաթափման և այլ ծախսումները, որոնք ուղղակիորեն կապված են ապրանքների, նյութերի և ծառայությունների ձեռքբերման հետ: Ձեռքբերման ծախսումները որոշելիս առևտրային գեղջերը, գների իջեցումները և նմանատիպ այլ ճշգրտումները հանվում են:

Պաշարների վերամշակման ծախսումները ներառում են արտադրանքի վերամշակման հետ ուղղակիորեն կապված ծախսումները:

Հաստատուն արտադրական վերադիր ծախսումները արտադրության այնպիսի անուղղակի ծախսումներն են, որոնք համեմատաբար կայուն են, անկախ արտադրության ծավալից, ինչպես, օրինակ՝ արտադրական շենքերի և սարքավորումների մաշվածությունը, արտադրամասի ղեկավարման և ընդհանուր արտադրական այլ ծախսումները: Դրանց բաշխումը վերամշակման ծախսումների վրա կատարվում է՝ ելնելով արտադրական սարքավորումների նորմատիվային հզորությունից: Չբաշխված վերադիր ծախսումները ճանաչվում են որպես ծախս այն հաշվետու ժամանակաշրջանում, որի ընթացքում դրանք կատարվել են:

Փոփոխուն արտադրական վերադիր ծախսումներն արտադրության այնպիսի անուղղակի ծախսումներն են, որոնք ուղղակիորեն կամ համարյա ուղղակիորեն փոփոխվում են արտադրության ծավալին համամասնորեն, ինչպես, օրինակ՝ արտադրության օժանդակ նյութերի ծախսումները, օժանդակ անձնակազմի աշխատանքի վարձատրությունը: Այդ ծախսումները յուրաքանչյուր

միավոր արտադրանքի վրա բաշխվում են արտադրական հզորությունների փաստացի օգտագործման հիման վրա:

Պաշարների ինքնարժեքի մեջ այլ ծախսումները ներառվում են միայն այն դեպքում, եթե դրանք կատարվել են պաշարները ներկա գտնվելու վայր և պատշաճ վիճակի բերելու համար: Պաշարների ինքնարժեքի մեջ չներառվող և դրանց կատարման ժամանակաշրջանում ծախս ճանաչվող ծախսումների օրինակներ են՝

ա) գերնորմատիվային ծախսումները՝ կապված նյութերի, աշխատուժի և արտադրական այլ ծախսումների գերա-ծախսի հետ,

բ) պահպանման ծախսումները, բացառությամբ եթե դրանք անհրաժեշտ են արտադրության գործընթացում՝ նախքան հաջորդ արտադրական փուլին անցնելը,

գ) վարչական վերադիր ծախսումները, որոնք կապված չեն պաշարները ներկա գտնվելու վայր հասցնելու կամ պատշաճ վիճակի բերելու հետ,

դ) վաճառքի ծախսումները:<sup>3</sup>

Այսպիսով, արտադրանքի արտադրության համար ծախսված նյութական, աշխատանքային և դրամական միջոցները համարվում են արտադրական ծախսումներ, կազմում են թողարկվող արտադրանքի ինքնարժեքը և ճանաչվում են որպես պաշար ու իրենց արտացոլումն են գտնում Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում: Իսկ երբ պաշարները վաճառվում են, դրանց հաշվեկշռային արժեքը ճանաչվում է որպես ծախս Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում այն ժամանակաշրջանում, երբ ճանաչվում է դրանց հետ կապված հասույթը:

Այսպիսով, եթե ծախսումները կառավարչական հաշվառման կողմից ուսումնասիրվում են ինքնարժեքի

---

<sup>3</sup> ՀՀՄՍ 2 «Պաշարներ»

ձևավորման և թողարկման կալկուլյացիայի շրջանակներում, ապա ծախսերը գնահատվում են տնտեսավարման ֆինանսական հետևանքները որոշելիս:<sup>4</sup>

Արտադրանքի վրա կատարված ծախսումները անմիջականորեն կապված են կազմակերպության արտադրական գործունեության իրականացման հետ: Ժամանակաշրջանի ծախսերը կապված են ավելի շատ հաշվետու ժամանակաշրջանի երկարատևության հետ, քան արտադրանքի թողարկման հետ: Ժամանակաշրջանի ծախսերի օրինակներ են վարչական և իրացման ծախսերը: Արտադրանքի ինքնարժեքի և հաշվետու ժամանակաշրջանի ծախսերի միջև եղած հիմնական տարբերությունը ժամանակի տարբերությունն է, որով դրանք ճանաչվում են՝ արտադրական ծախսումները վերածվում են ծախսերի միայն արտադրանքի վաճառքի ժամանակ, իսկ ժամանակաշրջանի ծախսերը ճանաչվում են Համապարփակ Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, երբ դրանք կրում են:

Ծախսումների հանրագումարով են որոշվում նաև կազմակերպությունում կառուցված (ստեղծված) հիմնական միջոցների և ներստեղծված ոչ նյութական ակտիվների ինքնարժեքը: Հիմնական միջոցների միավորի սկզբնական արժեքն ընդգրկում է՝

ա) գնման գինը, ներառյալ ներկրման տուրքերը և չփոխհատուցվող հարկերը՝ հանած առևտրային գեղչերը և արտոնությունները.

բ) ակտիվը համապատասխան վայր հասցնելու և ղեկավարության նախանշած նպատակներով օգտագործման համար աշխատանքային վիճակի բերելու հետ ուղղակիորեն կապված ցանկացած ծախսում.

---

<sup>4</sup> Ա.Գ. Ճուղուրյան, «Հաշվապահական հաշվառումը կազմակերպություններում», Երևան 2004, 3-րդ հրատարակություն, էջ 366:

գ) հիմնական միջոցների ապատեղակայման և քանդման, ինչպես նաև իր զբաղեցրած տեղանքի վերականգնման սկզբնապես գնահատված ծախսումների գումարը, որոնց գծով կազմակերպության պարտականությունը առաջանում է կամ միավորի ձեռքբերման ժամանակ, կամ միավորները որոշակի ժամանակաշրջանում օգտագործման հետևանքով, որի նպատակը տարբեր է, քան այդ ժամանակաշրջանի ընթացքում պաշարների արտադրությունը:

Ուղղակիորեն վերագրելի ծախսումների օրինակներ են՝

ա) աշխատակիցների հատուցումների գծով ծախսումները, որոնք առաջանում են ուղղակիորեն հիմնական միջոցի կառուցման կամ ձեռքբերման արդյունքում.

բ) տեղանքի նախապատրաստման ծախսումները.

գ) տրանսպորտային, բեռնման և բեռնաթափման սկզբնական ծախսումները.

դ) տեղակայման և հավաքման ծախսումները.

ե) ակտիվի անխափան աշխատանքի տեստավորման ծախսումները՝ հանած ակտիվը համապատասխան վայր և վիճակի բերելու ընթացքում արտադրված միավորների վաճառքից ստացված գուտ հասույթը (օրինակ՝ սարքավորումը տեստավորելու ընթացքում արտադրված նմուշները).

զ) մասնագետների վարձատրությունը:

Հիմնական միջոցի միավորի սկզբնական արժեքում չներառվող և Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում որպես ծախս ճանաչվող ծախսումների օրինակներ են՝

ա) նոր արտադրամաս բացելու հետ կապված ծախսումները,

բ) նոր արտադրատեսակ կամ ծառայություն ներդնելու հետ կապված ծախսումները (ներառյալ գովազդի և առաջխաղացման գծով ծախսումները),

գ) նոր վայրում կամ հաճախորդների նոր խմբի հետ գործունեություն իրականացնելու ծախսումները (ներառյալ աշխատակիցների պատրաստման և վերապատրաստման գծով ծախսումները),

դ) վարչական և այլ ընդհանուր վերադիր ծախսումները: Հիմնական միջոցի միավորի հաշվեկշռային արժեքում ծախսումների ճանաչումը դադարեցվում է, երբ միավորը գտնվում է այն վայրում և վիճակում, որն անհրաժեշտ է, որպեսզի այն հնարավոր լինի օգտագործել դեկավարության նախանշած նպատակներով: Հետևաբար, միավորի օգտագործման կամ վերատեղափոխման ընթացքում կրած ծախսումները չեն ներառվում այդ միավորի հաշվեկշռային արժեքում:

Սեփական ուժերով կառուցված ակտիվի սկզբնական արժեքը որոշվում է նույն սկզբունքներով, որոնք կիրառվում են ձեռք բերվող ակտիվի համար: Եթե կազմակերպությունը համանման ակտիվներ է պատրաստում տնտեսական գործունեության բնականոն ընթացքում վաճառքի համար, ապա այդ ակտիվի ինքնարժեքը սովորաբար նույնն է, ինչ վաճառքի համար կառուցվող ակտիվինը (տե՛ս ՀՀՄՍ 2-ը): Հետևաբար, ցանկացած ներքին շահույթ չի ներառվում ինքնարժեքում: Նմանապես, սեփական ուժերով կառուցվող ակտիվի գծով նյութերի, աշխատուժի և այլ ծախսումների նորմալ մակարդակից բարձր ծախսումները (գերնորմատիվային ծախսումները) չեն ներառվում այդ ակտիվի ինքնարժեքում: «Փոխառության ծախսումներ» ՀՀՄՍ 23-ով սահմանվում են չափանիշներ՝ սեփական ուժերով կառուցվող հիմնական միջոցի միավորի սկզբնական արժեքում, որպես բաղկացուցիչ, տոկոսների գծով ծախսումները ճանաչելու համար:<sup>5</sup>

---

<sup>5</sup> ՀՀՄՍ 16 «Հիմնական միջոցներ»

Հիմնական միջոցների շահագործման ընթացքում դրանց սպասարկման, նորոգման, վերակառուցման, արդիականացման նպատակով կատարում են հետագա ծախսումներ: Վերոհիշյալ ծախսումների մի մասը կապիտալացվում է և վերագրվում ակտիվ ճանաչված միջոցին, իսկ մյուս մասը ճանաչվում է որպես ժամանակաշրջանի ծախս և վերագրվում հաշվետու ժամանակաշրջանի շահույթին կամ վնասին:

Հետագա ծախսումները, որոնք վերաբերում են արդեն ճանաչված հիմնական միջոցների միավորին, ավելացնում են ակտիվի հաշվեկշռային արժեքը, երբ հավանական է, որ դրանց շնորհիվ ապագա տնտեսական օգուտները ավելի շատ կհոսեն դեպի կազմակերպություն, քան ակնկալվում էր առկա ակտիվի նորմատիվային ցուցանիշների սկզբնական գնահատումից: Հիմնական միջոցների վրա կատարված հետագա ծախսումները ճանաչվում են որպես ակտիվ միայն այն դեպքում, երբ դրանք բարելավում են ակտիվի վիճակը՝ բարձրացնելով նրանցից տնտեսական օգուտների ստացման սկզբնապես գնահատված ցուցանիշները:

Այն ծախսը, որը պարզապես վերականգնում կամ պահպանում է գոյություն ունեցող ակտիվի գործունեության արդյունքների նորմատիվային ցուցանիշների սկզբնական գնահատականը, հաշվեգրվում է ծախսերին այն ժամանակ, երբ կատարվում է:<sup>6</sup>

Ոչ նյութական ակտիվների խմբում առանձնացվում են ներստեղծված ոչ նյութական ակտիվները: Դրանք այնպիսի ծախսումներ են, որոնք հնարավոր են դարձնում ապագա տնտեսական օգուտների ստացումը, և որոնց հնարավոր է առանձնացնել: Այդպիսիք են հետազոտության և մշակման

---

<sup>6</sup> «Հաշվապահական հաշվառում»: Ուսումնական ձեռնարկ տնտեսագիտական մասնագիտությունների համար / Ա.Մարգսյան, ԱՄարջանյան, Ն.Օգանեզովա; ՀՊՏՀ-Երեան 2014, էջ 87:

ծախսումները: Հետազոտությունը նոր գիտական կամ տեխնիկական գիտելիքներ և պլանավորված ուսումնասիրություն է: Մշակումը հետազոտության արդյունքների կամ այլ գիտելիքների կիրառումն է՝ նոր կամ էականորեն բարելավված նյութերի, սարքավորումների, արտադրատեսակների, գործընթացի, համակարգերի կամ ծառայությունների արտադրությունը (մատուցումը) պլանավորելու և նախագծելու համար՝ մինչև դրանց առևտրային արտադրության կամ օգտագործման սկիզբը:

Թեև հետազոտություն և մշակում տերմիններն ունեն իրենց հստակ սահմանումները, «Ոչ նյութական ակտիվներ» ՀՀՄՍ 38-ի նպատակների համար հետազոտության փուլ և մշակման փուլ տերմիններն ավելի լայն իմաստ են կրում:

Եթե կազմակերպությունն ի վիճակի չէ ոչ նյութական ակտիվի ստեղծման ներքին նախագծի հետազոտության փուլը տարանջատել մշակման փուլից, ապա կազմակերպությունն այդ նախագծի ծախսումները դիտարկում է այնպես, կարծես դրանք տեղի են ունեցել միայն հետազոտության փուլում: Հետազոտության փուլի ծախսումները որպես ոչ նյութական ակտիվ չեն ճանաչվում, այլ ճանաչվում են տվյալ ժամանակաշրջանի ծախս, քանի որ կազմակերպությունը չի կարող ասել, որ այդ փուլում ստեղծվել է ակտիվ, որը կառաջացնի ապագա հավանական տնտեսական օգուտներ:

Հետազոտության գործունեության օրինակներ են՝

- ա) գործունեություն նոր գիտելիքների ձեռքբերման նպատակով,
- բ) հետազոտության արդյունքների կամ այլ գիտելիքների կիրառման հնարավորությունների որոնում, գնահատում և վերջնական ընտրություն,
- գ) նյութերի, սարքավորումների, արտադրատեսակների, գործընթացների, համակարգերի կամ ծառայությունների համար այլընտրանքների որոնում,



դ) նոր կամ բարելավված նյութերի, սարքավորումների, արտադրատեսակների, գործընթացների, համակարգերի կամ ծառայությունների համար հնարավոր այլընտրանքների ձևակերպում, նախագծում, գնահատում և վերջնական ընտրություն: Մշակման փուլում հետազոտության փուլի արդյունքները փորձարկվում են և դրվում գործողության մեջ: Այդ փուլում կատարվում է նոր արտադրանքի փորձանմուշի արտադրությունը կամ նոր տեխնոլոգիաների փորձարկումը: Եթե փորձարկման արդյունքը դրական է և հավանական է, որ դրա զանգվածային արտադրությունից և օգտագործումից կազմակերպությունը կստանա տնտեսական օգուտներ, ապա ծախսումների այդ բաժինը կապիտալացվում է ու ամորտիզացվում: Մշակումից առաջացող ոչ նյութական ակտիվը պետք է ճանաչվի միմիայն այն դեպքում, երբ կազմակերպությունը կարող է ցուցադրել ստորև բերվածն ամբողջությամբ

ա) ոչ նյութական ակտիվն այնպիսի ավարտուն վիճակի հասցնելու տեխնիկական իրագործելիությունը, որ այն մատչելի լինի օգտագործման կամ վաճառքի համար,

բ) ոչ նյութական ակտիվն ավարտին հասցնելու և այն օգտագործելու կամ վաճառելու իր մտադրությունը,

գ) ոչ նյութական ակտիվն օգտագործելու կամ վաճառելու իր կարողությունը,

դ) այն, թե ինչպես է ոչ նյութական ակտիվն առաջացնելու հնարավոր ապագա տնտեսական օգուտներ: Ի թիվս այլոց, կազմակերպությունը պետք է ցուցադրի ոչ նյութական ակտիվի միջոցով ստեղծվող արդյունքի կամ հենց այդ ոչ նյութական ակտիվի համար շուկայի առկայությունը, կամ, եթե ակտիվը օգտագործվելու է կազմակերպության ներսում, ապա ոչ նյութական ակտիվի օգտակարությունը,

ե) մշակումն ավարտին հասցնելու և ոչ նյութական ակտիվն օգտագործելու կամ վաճառելու համար անհրա-

Ժշտ համապատասխան տեխնիկական, ֆինանսական և այլ միջոցների առկայությունը,

զ) ոչ նյութական ակտիվին մշակման ընթացքում վերագրելի ծախսումներն արժանահավատորեն չափելու իր կարողությունը:<sup>7</sup>

Եթե նշված կետերից որևէ մեկը կազմակերպությունը չի կարողանում հիմնավորել կամ ցուցադրել, ապա ժամանակաշրջանի ընթացքում կուտակված բոլոր մշակման ծախսումները դուրս են գրվում որպես հետազոտության ծախս:

Որպես ոչ նյութական ակտիվ ճանաչված հետազոտության կամ մշակման անավարտ նախագծի հետ կապված հետագա ծախսումը.

ա) ճանաչվում է ծախս, երբ տեղի է ունենում, եթե դա հետազոտության ծախսում է.

բ) ճանաչվում է ծախս, երբ տեղի է ունենում, եթե դա մշակման ծախսում է, որը չի բավարարում որպես ոչ նյութական ակտիվ ճանաչելու չափանիշներին.

գ) ավելացվում է ձեռք բերված մշակման անավարտ նախագծի հաշվեկշռային արժեքին, եթե դա մշակման ծախսում է, որը բավարարում է ճանաչման մշակման փուլի չափանիշներին:<sup>8</sup>

Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ներկայացման հայեցակարգային հիմունքներում ծախսերը սահմանցած են որպես՝ հաշվառման ժամանակաշրջանում տնտեսական օգուտների նվազումներ՝ ակտիվների արտահոսքի կամ սպառման կամ պարտավորությունների առաջացման ձևով, որը հանգեցնում է սեփական կապիտալի նվազեցման, բացառությամբ սեփականատերերի միջև

---

<sup>7</sup> ՀՀՄՍ 38 «Ոչ նյութական ակտիվներ»

<sup>8</sup> Նույնը

սեփական կապիտալի բաշխման հետևանքով դրա նվազման դեպքի:<sup>9</sup>

Ծախսերի սահմանումն իր մեջ ներառում է կորուստները, ինչպես նաև այն ծախսերը, որոնք առաջանում են կազմակերպության սովորական գործունեության ընթացքում: Դրանց մեջ են մտնում վաճառված ապրանքների ինքնարժեքը, աշխատավարձը, մաշվածությունը, և դրանք սովորաբար ներկայանում են այնպիսի ակտիվների արտահոսքի կամ սպառման ձևով, ինչպիսիք են դրամական միջոցները կամ դրանց համարժեքները, պաշարները, հիմնական միջոցները:

Կորուստները ներկայացնում են այլ հոդվածներ, որոնք բավարարում են ծախսերի սահմանմանը և կարող են ծագել կամ չծագել կազմակերպության սովորական գործունեության ընթացքում: Կորուստներն իրենցից ներկայացնում են տնտեսական օգուտներում նվազեցումներ և, որպես այդպիսին, իրենց բնույթով չեն տարբերվում այլ ծախսերից: Հետևաբար, «Հայեցակարգային հիմունքներ» փաստաթղթում դրանք չեն դիտվում որպես առանձին տարր:

Կորուստները կարող են առաջանալ, օրինակ, աղետների հետևանքով, ինչպիսիք են հրդեհը և ջրհեղեղը, ինչպես նաև՝ ոչ ընթացիկ ակտիվների վաճառքի հետևանքով: Ծախսերի սահմանումը ներառում է նաև չիրացված կորուստներ, օրինակ, կորուստներ, որոնք առաջանում են արտարժույթի փոխանակման փոխարժեքի բարձրացման հետևանքով, այդ արտարժույթով կազմակերպության փոխառությունների հետ կապված: Երբ կորուստները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, դրանք սովորաբար ներկայացվում են առանձին, քանի որ դրանց վերաբերյալ

---

<sup>9</sup> Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ներկայացման հայեցակարգային հիմունքներ, 4.25

տեղեկատվությունը շատ օգտակար է տնտեսական որոշումներ կայացնելու համար: Կորուստները հաճախ ներկայացվում են առանց դրանց դիմաց ստացված համապատասխան եկամտի:<sup>10</sup>

Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության մեջ ծախսերը ճանաչվում են, երբ սպագա տնտեսական օգուտների նվազումը կապված է ակտիվների նվազման կամ պարտավորությունների աճի հետ, որը կարելի է արժանահավատորեն չափել: Մա նշանակում է, որ ծախսերի ճանաչումը տեղի է ունենում պարտավորությունների աճի կամ ակտիվների նվազման ճանաչման հետ միաժամանակ: Ծախսերը ճանաչվում են կատարված ծախսերի և եկամտի որոշակի հոդվածներով մուտքերի միջև անմիջական կապի հիման վրա, օրինակ՝ վաճառված ապրանքների արժեքը կազմող ծախսի բազմաթիվ բաղադրիչները ճանաչվում են միևնույն ժամանակ, երբ ճանաչվում է ապրանքների վաճառքից առաջացած եկամուտը: Այնուամենայնիվ, Հայեցակարգային հիմունքներ փաստաթղթի համապատասխանության հասկացության կիրառումը թույլ չի տալիս հաշվապահական հաշվեկշռում այնպիսի հոդվածների ճանաչումը, որոնք չեն համապատասխանում ակտիվների կամ պարտավորությունների սահմանմանը:

Այն դեպքում, երբ սպասվում է տնտեսական օգուտների առաջացում մի քանի հաշվետու ժամանակաշրջանների ընթացքում, և եկամտի հետ կապը կարող է որոշվել միայն ընդհանուր կամ անուղղակի ձևով, ծախսերը ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության մեջ ճանաչվում են պարբերաբար և խելամիտ բաշխման ընթացակարգերի հիման վրա: Մա հաճախ անհրաժեշտ է ծախսերի ճանաչման համար, որոնք կապված են ակտիվների օգտագործման հետ, ինչպիսիք են հիմնական միջոցները, գուղվիլը,

---

<sup>10</sup> Նույնը, 4.33-4.35

պատենտները և ապրանքանիշերը: Այսպիսի դեպքերում ծախսը դիտվում է որպես մաշվածություն կամ ամորտիզացիա: Բաշխման այս ընթացակարգերը միտում ունեն ծախսերը ճանաչելու այն հաշվառման ժամանակաշրջաններում, որի ընթացքում այս հոդվածների հետ կապված տնտեսական օգուտները ծախսված կամ սպառված են:

Ծախսն անմիջապես ճանաչվում է Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության մեջ այն դեպքերում, երբ ծախսումը չի առաջացնում ապագա տնտեսական օգուտներ, կամ երբ և այն չափով, որ այդ տնտեսական օգուտներն այնպիսին են, որ չեն բավարարում կամ դադարում են բավարարել հաշվապահական հաշվեկշռում որպես ակտիվ ճանաչման չափանիշներին: Այն ճանաչվում է նաև այն դեպքերում, երբ պարտավորություն է առաջանում առանց ակտիվի ճանաչման և երբ պարտավորություն է առաջանում արտադրանքի որակի երաշխիքի համար:<sup>11</sup>

ՀՀ Ֆինանսների նախարարի 17.04.2012 թիվ 353-Ն հրամանով հաստատվեց ՖՀՄՄ-ների հիման վրա լրամշակված նոր հաշվային պլան, որն ուժի մեջ է մտել 2012թ. ապրիլի 27-ից: Հին հաշվային պլանը համալրվել է բացարձակապես նոր հաշիվներով, ինչպես նաև կրել է ցանկային և անվանական փոփոխություններ: Ընդ որում, զգալի փոփոխություններ է կրել ծախսերի հաշվառման համար նախատեսված յոթերորդ հաշվային դասը:

Ներկայումս, 2012թ. ընդունված հաշվային պլանով ծախսերը, ըստ ստացման բնույթի, դասակարգվում են 6 խմբի.

- Գործառնական գործունեությունից ծախսեր
- Շարունակվող գործունեության այլ ծախսեր
- Ընդհատված գործունեությունից ծախսեր
- Վերադասակարգման ճշգրտումներ. կորուստներ

---

<sup>11</sup> Նույնը, 4.49-4.53:

- Շահութահարկի գծով ծախս
- Այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչվող ծախսեր:

Գործառնական գործունեությունից ծախսերը ներառում են իրացված արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների ինքնարժեքը, իրացման, վարչական, գործառնական այլ ծախսերը, որոնք չեն ենթարկվել որևէ փոփոխության: Դրանք համալրվել են «Գյուղատնտեսական գործունեությունից ծախսեր» նոր հաշվով, ինչը պայմանավորված էր ՀՀՄՍ 41 «Գյուղատնտեսություն» նոր ստանդարտի ընդունմամբ:

Շարունակվող գործունեության այլ ծախսերը ներառում են ոչ ընթացիկ ակտիվների օտարումից ծախսերը, ընթացիկ ֆինանսական ակտիվների օտարումից ծախսերը, ոչ ընթացիկ նյութական ակտիվների և ոչ նյութական ակտիվների վերաչափումից կորուստները, արտարժույթի փոխարժեքային տարբերություններից կորուստները, ոչ գործառնական ֆինանսական գործիքների վերաչափումից և արժեզրկման (անհավաքելիության) հակադարձումից կորուստները, ֆինանսական ծախսերը, անհատույց տրված ակտիվների գծով ծախսերը ու այլ ծախսեր: Շարունակվող գործունեության այլ ծախսերի ճանաչման, չափման և գնահատման մոտեցումները նկարագրված են «Հիմնական միջոցներ» ՀՀՄՍ 16-ում, «Պետական շնորհների հաշվառում և պետական օգնության բացահայտում» ՀՀՄՍ 20-ում, «Արտարժույթի փոխանակման փոխարժեքի փոփոխությունների հետևանքներ» ՀՀՄՍ 21-ում, «Համախմբված և առանձին ֆինանսական հաշվետվություններ» ՀՀՄՍ 27-ում, «Ներդրումներ ասոցիացված կազմակերպություններում» ՀՀՄՍ 28-ում, «Մասնակցություն համատեղ ձեռնարկումներում» ՀՀՄՍ 31-ում, «Ակտիվների արժեզրկում» ՀՀՄՍ 36-ում, «Ֆինանսական գործիքներ» ՖՀՄՍ 9-ում, «Վաճառքի

համար պահվող ոչ ընթացիկ ակտիվներ և ընդհատված գործունեություն» ՖՀՄՍ 5-ում, «Հաճախորդների հետ պայմանագրերից հասույթ» ՖՀՄՍ 15-ում:

Ընդհատված գործունեությունից ծախսեր խմբերն իրենց մեջ ներառում են ընդհատված գործունեությունից, ընդհատված գործունեությունը կազմող ակտիվների կամ օտարման խմբերի օտարումից և (կամ) վերաչափումից ծախսերը, ինչպես նաև ընդհատված գործունեությանը վերագրվող ծախսերի հաշվառման համար նախատեսված համանման հաշիվները, որոնք եզրափակվում են «Շահութահարկ ընդհատված գործունեության» հաշվով: Ընդհատված գործունեություն հասկացությունը, դրան վերաբերող ծախսերի ճանաչման, չափման և ներկայացման գծով առանձնահատկությունները սահմանված են «Վաճառքի համար պահվող ոչ ընթացիկ ակտիվներ և ընդհատված գործունեություն» ՖՀՄՍ 5-ում:

Վերադասակարգման ճշգրտումներն այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված և ընթացիկ ժամանակաշրջանում սեփական կապիտալից շահույթին կամ վնասին վերադասակարգված գումարներն են: Դրանց հաշվապահական հաշվառման մոտեցումները նկարագրված են «Ֆինանսական հաշվետվությունների ներկայացումները» ՀՀՄՍ 1-ում, «Արտարժույթի փոխանակման փոխարժեքի փոփոխությունների հետևանքները» ՀՀՄՍ 21-ում, «Ֆինանսական գործիքներ» ՖՀՄՍ 9-ում:

Շահութահարկի գծով ծախս խումբը նախատեսված է շահութահարկի գծով ծախսերի վերաբերյալ տեղեկատվության ընդհանրացման համար: Շահույթից կամ վնասից դուրս (կամ այլ համապարփակ ֆինանսական արդյունքում, կամ ուղղակիորեն սեփական կապիտալում) ճանաչված գործարքների և այլ իրադարձությունների հետ կապված հարկային հետևանքները ևս ճանաչվում են շահույթից կամ վնասից դուրս:

Այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչվող ծախսերը ներառում են հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների վերաչափումից կորուստները, վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների՝ իրական արժեքով վերաչափումից կորուստները, հեջավորման գործիքների՝ իրական արժեքով վերաչափումից կորուստները, արտերկրյա ստորաբաժանումների հետ կապված փոխարժեքային կորուստները, ակտուարային վնասները:

Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների վերագնահատումից, արժեզրկումից կորստի և արժեզրկման հակադարձումից օգուտների հաշվապահական հաշվառման մեջ արտացոլման մոտեցումները (մասնավորապես, այն, թե օգուտի կամ կորստի ո՞ր մասն է ենթակա ճանաչման շահույթում կամ վնասում, և ո՞ր մասը՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքում) նկարագրված են «Հիմնական միջոցներ» ՀՀՄՍ 16-ում և «Ոչ նյութական ակտիվներ» ՀՀՄՍ 38-ում:

Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների իրական արժեքով վերաչափումից կորուստների հաշվապահական հաշվառման մեջ արտացոլման մոտեցումները, ինչպես նաև որպես հեջավորման գործիք նախատեսված ֆինանսական ակտիվների և պարտավորությունների՝ իրական արժեքով վերաչափումից չիրացված օգուտների և կորուստների հաշվապահական հաշվառման մեջ արտացոլման մոտեցումները նկարագրված են «Ֆինանսական գործիքներ» ՖՀՄՍ 9-ում:

Արտերկրյա ստորաբաժանումների հետ կապված փոխարժեքային կորուստները ներառում են արտերկրյա ստորաբաժանումների ֆինանսական հաշվետվությունների վերահաշվարկումից առաջացող փոխարժեքային տարբերություններից կորուստները, և արտերկրյա ստորաբաժանումներում գուտ ներդրման հեջում հեջավորման գործիքի



գծով փոխարժեքային տարբերություններից կորուստները: Դրանց հաշվառման մոտեցումները նկարագրված են «Արտարժույթի փոխանակման փոխարժեքի փոփոխությունների հետևանքները» ՀՀՄՄ 21-ում և «Ֆինանսական գործիքներ» ՖՀՄՄ 9-ում:

Ակտուարային վնասներ հաշիվը նախատեսված է հետաշխատանքային սահմանված հատուցումների պլանների ներքո վնասների վերաբերյալ տեղեկատվության ընդհանրացման համար, որոնք «Աշխատակիցների հատուցումներ» ՀՀՄՄ 19-ին և կազմակերպության ընտրած հաշվապահական հաշվառման քաղաքականության համաձայն՝ ճանաչվում են առաջացման ժամանակաշրջանում՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում:<sup>12</sup>

Այսպիսով, նոր հաշվային պլանում կատարվել են ծախսերի հոդվածների զգալի փոփոխություններ, ինչը պայմանավորված էր, ինչպես վերը նշվեց, նոր ՖՀՄՄ-ների ընդունմամբ: Նախկինում Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը բաղկացած էր միայն մեկ բաժնից, որտեղ ներառված էին գործառնական գործունեությունից եկամուտները և ծախսերը, ոչ գործառնական եկամուտները և ծախսերը, արտաստվոր եկամուտները և ծախսերը, նախորդ տարիների եկամուտներն ու ծախսերը, ինչպես նաև շահութահարկի գծով ծախսը: «Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում» ՀՀՄՄ 1-ի ընդունմամբ այդ հաշվետվությունը փոխարինվեց Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունով, որը բաղկացած է Ժամանակաշրջանի շահույթ կամ վնաս և Ժամանակաշրջանի այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ բաժիններից:

---

<sup>12</sup> Կազմակերպությունների ֆինանսատնտեսական գործունեության հաշվապահական հաշվառման հաշվային պլան, 2012թ.

Ամփոփելով վերը շարադրածը, կարելի է անել հետևյալ ընդհանրացումները:

Ծախսումներն, ինչպես վերը ներկայացվեց, իրենցից ներկայացնում են ակտիվների վերափոխում մեկ այլ տիպի ակտիվների, ակտիվների ավելացում դրամական միջոցների արտահոսքի հաշվին, կամ ակտիվների և պարտավորությունների միաժամանակյա ավելացում կամ նվազում, որոնք չեն հանգեցնում սեփական կապիտալի նվազմանը: Ծախսումներն ավելի լայն հասկացությունն են, քան ծախսերը՝ վերջիններս երբեք չեն կարող ծախսում դառնալ, իսկ ծախսումները կարող են դառնալ ծախս, եթե չեն պահպանվել ակտիվի ճանաչման պայմանները: Կատարված ծախսումների կուտակման փուլի ավարտը պայմանավորում է դրանց որպես ակտիվ կամ ծախս ճանաչելու անհրաժեշտությունը: Բոլոր այն ծախսումները, որոնք չեն հանգեցնում ակտիվի ստեղծմանը կամ գերազանցում են սպասվելիք ապագա տնտեսական օգուտները, դուրս են գրվում ժամանակաշրջանի ծախսերին: Ծախսումները չեն ազդում շահույթի վրա, վերջինս պայմանավորված է միայն ծախսերով:

Ծախսերը ներկայացնում են տնտեսական օգուտների նվազում և հանգեցնում են կապիտալի նվազմանը: Դրանք ճանաչվում են այն ժամանակաշրջանում, երբ ակտիվները վաճառվում են, անհատույց հանձնվում են նոր սեփականատիրոջը, կամ էլ դուրս են գրվում այս կամ այն պատճառներով: Այդ երկու կարևորագույն կատեգորիաներն իրենց արտացոլումն են գտնում տարբեր ֆինանսական հաշվետվություններում:

## ԱՍՓՈՓՈՒՄ

Արտադրական ծախսումների հաշվառումը և արտադրանքի ինքնարժեքի կալկուլյացիան համարվում են կազմակերպության գործունեության հաշվառման ամենա-

բարդ հատվածներից մեկը, որն ունի տնտեսության տարբեր ճյուղերում և արտադրություններում իր առանձնահատկությունները: Եվ, չնայած դրան, արտադրական ծախսումների ֆինանսական հաշվառումը պետք է իրականացվի հաշվապահական ստանդարտների հիման վրա և դրանք պետք է արտացոլվեն ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում: Հոդվածում ուսումնասիրվում են արտադրվող արտադրանքի, մատուցված ծառայության ինքնարժեքի, ոչ ընթացիկ նյութական ակտիվների ստեղծման, ոչ նյութական ակտիվների ներստեղծման, դրանց հետագա կապիտալացվող ծախսումների հաշվառումը համաձայն ՀՀՄՍ-ների և ՖՀՄՍ-ների պահանջների: Հոդվածում ուսումնասիրվել են նաև ժամանակաշրջանի ծախսերի հաշվառման առանձնահատկությունները և դրանց արտացոլումը Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում: Ներկայացվել են ծախսումների և ծախսերի միջև առկա տարբերությունները:

**Карине Зурабян**

Ереванский государственный университет, к.э.н., доцент

## **ПРОБЛЕМЫ УЧЕТА ЗАТРАТ И РАСХОДОВ**

*Ключевые слова – затраты, расходы, Международные Стандарты Финансовой Отчетности (МСФО), Отчет о финансовом положении, Отчет о совокупном доходе.*

В статье рассматриваются вопросы исчисления себестоимости выпускаемой продукции, оказанных услуг, учета затрат на создание нетекущих материальных активов и нематериальных активов, капитализируемых последующих затрат в соответствии с требованиями МСФО. Рассматриваются

также вопросы, связанные с особенностями учета расходов текущего периода в соответствии с требованиями МСФО, и отражения их в Отчете о совокупном доходе. Представлены существенные различия между затратами и расходами. Затраты – это перетекание одних видов активов в другие (уменьшение одних активов с равновеликим увеличением других), либо равновеликое увеличение активов и обязательств, что не уменьшает капитал организации. Окончание периода накопления затрат означает необходимость признания активов или расходов. Все те затраты, которые не приводят к образованию активов, или превышают стоимость ожидаемых будущих экономических выгод, списываются в расходы. Затраты не влияют на прибыль, прибыль определяется только расходами. Они находят свое отражение в разных финансовых отчетах.

**Karine Zurabyan**

Ph.D. in Economics, Associate Professor, YSU

## **THE PROBLEMS OF ACCOUNTING OF EXPENDITURE AND EXPENSES**

***Keywords** – expenditure, expenses, IFRS, Statement of financial Position, Statement of Comprehensive Income.*

The article considers issues related to the prime cost of the product produced and services delivered, building of noncurrent assets and costs of internally generated intangible assets in accordance with the requirements of IAS. The article considers also the peculiarities of accounting of the expenses in accordance

with the IFRS and their reflection in the Statement of Comprehensive Income. Differences between expenditures and expenses have been provided. Expenditures represent the exchange of one type of asset for another type, increase in assets resulting from outflow of money, and simultaneous increase or decrease in assets and liabilities, which do not reduce own equity. End of the accumulation phase of production costs conditions the need to recognize the latter as asset or as an expense. All the expenditures that fail to bring about asset creation or exceed the expected future economic benefits are written off as current expenses. Expenditures do not affect the profit amount; the latter is conditioned only by expenses. They are reflected in different financial statements.

*Ներկայացվել է՝ 03.12.2018 թ.  
Ընդունվել է սպազորության՝ 21.12.2018 թ.*

## Արթուր Հարությունյան

Տնտեսագիտության մագիստրոս, «ՀՈՒՄԿ» հիմնադրամ  
Համակարգչային և ինֆորմացիոն գիտությունների մագիստրոս

### ԲԼՈԿՉԵՅՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՅԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ, ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ և ԱՌԻԴԻՏԻ ՎՐԱ

*Հիմնաբառեր – բլոկչեյն, բիթքոին, հաշվառում, հաշվետվու-  
թյուններ, աուդիտ, սմարթ (խելացի) կոնտրակտներ*

#### Ներածություն

Բլոկչեյնը անսպասելի մուտք գործեց ֆինանսական և այլ ոլորտներ, իր հետ բերելով հեղափոխական փոփոխու-  
թյուններ, նոր կանոններ, հնարավորություններ և նաև վտանգներ: Լինելով տիպիկ սև կարապ (ըստ Թալեր Նասսիմի (1)), բլոկչեյնը նախկին, արդեն խարսխված սահմանները տեսականորեն և գործնականորեն ոչնչացնող տեխնոլոգիա և երևույթ է, որը, երևան բերելով նոր հնարավորություններ, բերում է նաև որոշակի անորոշու-  
թյուն, քանի որ ակտիվ զարգացող և դեռևս խիստ ստանդարտներ չունեցող տեխնոլոգիա է:

2008 թ.-ին ոմն Մատոշի Նակամոտո (մարդ կամ մարդկանց խումբ) ստեղծեց բիթքոին կրիպտոարժույթը, որն օգտագործում է բլոկչեյն (2):

Այսօր տարբեր սերունդների բլոկչեյններ փորձարկվում և հաջողությամբ օգտագործվում են տարբեր ոլորտներում, երկրներում և կազմակերպություններում, այդ թվում՝ Հնդկաստանում, Չինաստանում, Հոնկ Կոնգում, ԱՄՆ-ում, Շվեդիայում, Սինգապուրում, Հարավային Աֆրիկայում, Մեծ Բրիտանիայում, Վրաստանում և այլ երկրներում, Մեծ Քառյակում (3) (4) և այլուր:

**Ժամանակակից հաշվապահական հաշվառման պրակտիկայի հնարավոր բարելավումը բլոկչեյնի կիրառման դեպքում:**

Երեք հիմնական առանձնահատկությունները, որոնցով տարբերվում է բլոկչեյնը այսօրվա հայտնի, սովորական գլխավոր գրքերից, հետևյալն են.

1. **Ցրվածություն** (5) . Գոյություն ունեն բլոկչեյն-գրքի բազմաթիվ կրկնօրինակներ, բայց չկա «հիմնական» օրինակ: Գրքի ամբողջական պատճենը հասանելի է բոլոր մասնակիցներին, և բոլոր կրկնօրինակները նույնական են ու համարժեք: Կողմերից և ոչ մեկը վերահսկողություն չունի գրքի նկատմամբ. նոր տրանզակցիաները կարող են արագ ստեղծվել և ուղարկվել բոլոր մասնակիցներին:

2. **Մշտականություն** . Յուրաքանչյուր օգտագործող ունի գրքի իր սեփական օրինակը, և ճշմարտությունը որոշվում է կոնսենսուսով: Նախկին տրանզակցիաները հնարավոր չէ իմբազրել առանց մեծամասնության համաձայնության, ինչը նշանակում է, որ բլոկչեյնի գրանցումները փոփոխության ենթակա չեն: Գիրքն իր ողջ ծավալով պահպանվում է

յուրաքանչյուր մասնակցի մոտ և կարող է վերահսկվել և ստուգվել:

**3. Ծրագրավորելիություն.** Որոշ բլոկչեյններ հնարավորություն են ընձեռում պահպանել ծրագրային կոդ իրենց մեջ, այդ կերպ գրքում ստեղծելով ավտոմատ գրանցումներ, որոնք որոշակի դեպքերում կատարվում են ավտոմատ կերպով: Դրանք այսպես կոչված «ամարթ կոնտրակտներն» են:

Բլոկչեյն տեխնոլոգիայի կիրառումը կարող է դառնալ հաշվապահական հաշվառման հաջորդ քայլը. գործարքների առանձին գրանցումների պահպանման փոխարեն ընկերությունները կարող են գրանցել իրենց գործարքները միասնական ռեեստրում՝ ստեղծելով հաշվապահական հաշվառման շարունակական համակարգ: Քանի որ բոլոր գրառումները բաշխված եւ ծածկագրված են գաղտնագրերով, դրանք կեղծել կամ ոչնչացնել հնարավոր չէ:

Բլոկչեյնի վրա հիմնված հաշվապահություն

Բլոկչեյնը, որպես վստահության աղբյուր՝ կարող է չափազանց օգտակար լինել նաև այսօրվա հաշվապահական պրակտիկայում: Այն կարող է աստիճանաբար ինտեգրվել հաշվապահական ընթացակարգերում՝ գրառումների ամբողջականությունը ապահովելուց սկսած մինչև լիովին հետազօծելի աուդիտ: Ի վերջո լիովին ավտոմատացված աուդիտը կարող է իրականություն դառնալ:

Հարկ եղած դեպքում հարկային մարմինը, կարգավորող մարմինը կամ այլ վերահսկողական մարմին կկարողանա հասանելիություն ունենալ բլոկչեյնին և իրականացնել մշտադիտարկում իրական ժամանակում: Դա



կհանգեցնի ծախսերի կրճատման և համապատասխան գործողությունների արդյունավետության բարձրացման:

Հաշվառման հեռանկարները. բլոկչեյնի ներուժը

Բլոկչեյնը հնարավորություն է ընձեռում բարելավել հաշվապահի աշխատանքը, նվազեցնելով հաշվապահական հաշվառման և հաշվապահական գրքերի համաձայնեցման վրա կատարվող ծախսերը, ինչպես նաև ապահովում է վստահություն ակտիվների սեփականության և պատմության նկատմամբ:

Ավտոմատացման մյուս միտումներին զուգընթաց, ինչպիսին է մեքենայական ուսուցումը, բլոկչեյնը կհանգեցնի տրանզակցիոն մակարդակի հաշվառման ավելի ու ավելի շատ ավտոմատ վարմանը, բացառելով հաշվապահների մասնակցությունը: Այդ դեպքում հաշվապահները ավելի շատ կգրադվեն բլոկչեյնի գրանցումների տնտեսական մեկնաբանությունների գնահատմամբ, համադրելով տնտեսական իրավիճակը և վերջինիս գնահատականը:

Ունիվերսալ կրկնակի գրանցումը ինտեգրացված գլխավոր գրքում:

Ներկայումս ընկերությունների միջև գործարքները հանգեցնում են այսպես կոչված «քառակի գրանցման» հաշվապահության, որտեղ յուրաքանչյուր ընկերություն իր կրկնակի գրանցումներն է անում, և տեսականորեն այդ գրանցումների հավաքածուները հավասար են ըստ արժեքի: Այս մոդելը կարող է զգալիորեն փոփոխվել բլոկչեյնի օգտագործման դեպքում: Գրանցումները անմիջապես բլոկչեյնում կատարելով, հնարավոր կլինի գործարքը հավատարմորեն, հավաստիորեն եւ նույնական կերպով

արձանագրել յուրաքանչյուր կողմի կողմից: Ժամանակի ընթացքում կարող են ներգրավվել բազմաթիվ անձինք, և կատեղծվի այսպես կոչված «ունիվերսալ կրկնակի գրանցումը ինտեգրացված գլխավոր գրքում» կամ հոսքային գրանցումների համակարգը:

Հաշվառման հեռանկարները . հետևանքներ աուդիտորների համար և ապագայի հմտություններ  
Ընկերության ֆինանսական վիճակի հաստատումը կդառնա պակաս անհրաժեշտ, եթե այդ վիճակի հիմքում ընկած բոլոր տրանզակցիաները լինեն տեսանելի բլոկչեյնում:

Փոփոխության կենթարկվի հաշվապահական հաշվառման համար անհրաժեշտ հմտությունների սպեկտրը: Որոշ աշխատանքներ, այդ թվում՝ համաձայնեցումը և ապացուցողականության ապահովումը, կնվազեն ծավալով կամ կվերանան:

Բլոկչեյնի վրա հիմնված նշանակալի քանակի տրանզակցիաներ ունեցող ընկերությունում ճշգրիտ աուդիտ իրականացնելու համար փոփոխություն կկրի աուդիտորի կիզակետը, քանի որ այլևս անհրաժեշտություն չի լինի հաստատել բլոկչեյնի տրանզակցիաների ճշգրտությունը կամ գոյությունը արտաքին աղբյուրներով, սակայն դեռևս մեծ ուշադրություն կպահանջեն ֆինանսական հաշվետվություններում այդ տրանզակցիաների արձանագրումը և ճանաչումը, ինչպես նաև սուբյեկտիվ տարբերի, օրինակ գնահատումների, վերաբերյալ որոշումները:

Սմարթ կոնտրակտներ

Վերջապես, բլոկչեյնի հնարավորություններից են սմարթ կոնտրակտները (6)՝ համակարգչային ծրագրեր, որոնք

կարող են կատարվել որոշակի պայմանների առկայության դեպքում: Սմարթ կոնտրակտի կողք կարող է անմիջականորեն գրառվել բլոկչեյնում և նախապես դիտարկվել կողմերի կողմից, ինչպես և ավանդական իրավաբանական պայմանագրի դեպքում: Եթե համաձայնությունը կայանա, ապա սմարթ կոնտրակտը, օժտված համապատասխան իրավունքներով, ավտոմատ կերպով կիրականացնի իր սեփական պայմանները:

### Եզրակացություններ

1. Արդեն իսկ հաշվապահական տվյալների և հաշվետվությունների սպառողները ոչ միայն մարդիկ են, այլ նաև հաշվողական մեքենաները, որի հետևանքով խնդիր է առաջանում ֆինանսական հաշվետվությունների և ընդհանրապես հաշվետայնության վերախմաստավորման առումով, քանզի հաշվողական մեքենաները հնարավորություն ունեն մտապահելու, վերամշակելու և վերախմաստավորելու անհամեմատ ավելի մեծ քանակությամբ և խորությամբ տեղեկատվություն:

2. Հաշվողական մեքենաների արագագործության աճի օգտագործման խոչնդոտ է մարդկային գործոնը, իսկ բլոկչեյնի կիրառությունը թույլ է տալիս տեղեկատվության մշակման և հաշվետվությունների կազմման գործընթացից բացառել մարդու՝ որպես տեղեկատվության արժանահավատության երաշխավորի, միջամտությունը:

3. Փակ բլոկչեյն ցանցերի կիրառությունը իր գործունեության տրամաբանության հիմքում ունի 3-րդ կողմի անկախ հավաստիացման տարրը, այն է՝ աուդիտորի

ընթացակարգերից դուրս է մնում 3-րդ կողմի հավաստիացումների ստացումը:

4. Աուդիտի գործառույթին սպասվում է փոփոխություն . այն է աուդիտորի հիմնական պարտականությունն է դառնում ոչ թե տվյալների ճշգրտության հավաստիացումը, այլ այդ տվյալներն օգտագործող համակարգի ճշգրիտ աշխատանքի հավաստիացումը:

5. Աուդիտորի պարտականության ձևափոխման հետ ակնկալվում է աուդիտորների հմտությունների սպեկտրի մեջ շարժ դեպի տեղեկատվական տեխնոլոգիաներ (տեխնոլոգիաները դառնում են գրաճանաչության նոր էլեմենտ):

6. Բլոկչեյնը արդեն իսկ վերափոխել է փողի ընկալումը և դրամական փոխանցումների շուկան, ինչը նոր մարտահրավերներ է ուղղում հաշվապահությանը՝ ակտիվների ճանաչման և գնահատման ենթատեքստում:

## ԱՍՓՈՓՈՒՄ

Հողվածը բլոկչեյնի (block chain կամ blockchain) և նրա զարգացման հնարավոր ազդեցության մասին է հաշվապահական հաշվառման, ֆինանսական հաշվետվությունների և աուդիտի վրա:

Դիտարկվում են հաշվառման վարումը բլոկչեյն օգտագործելով, կրկնակիից, այսպես կոչված, «ունիվերսալ կրկնակի գրանցման ինտեգրացված գլխավոր գրքում» հնարավոր անցումը և աուդիտի ոլորտի հնարավոր փոփոխությունները:

## Գրականություն

1. **Taleb, Nassim Nicholas.** *The Black Swan: The Impact of the Highly Improbable.* 2007.
2. **Nakamoto, Satoshi.** Bitcoin: A Peer-to-Peer Electronic Cash System. *bitcoin.org.* [Online] 2008. <https://bitcoin.org/bitcoin.pdf>.
3. **Kirchner, Karin.** EY Switzerland to digitalize itself and become first advisory firm to accept Bitcoins for its services. *webforms.ey.com.* [Անցանց] 2016. [https://webforms.ey.com/Publication/vwLUAssets/ey-news-release-switzerland-accepts-bitcoins-for-payment-of-its-services/\\$FILE/ey-news-release-switzerland-accepts-bitcoins-for-payment-of-its-services.pdf](https://webforms.ey.com/Publication/vwLUAssets/ey-news-release-switzerland-accepts-bitcoins-for-payment-of-its-services/$FILE/ey-news-release-switzerland-accepts-bitcoins-for-payment-of-its-services.pdf).
4. **Young, Joseph.** Ernst & Young Is Going Bitcoin While PwC, Deloitte and KPMG Push Permissioned Blockchains. *cointelegraph.com.* [Անցանց] 15 12, 2016. <https://cointelegraph.com/news/ernst-young-is-going-bitcoin-while-pwc-deloitte-and-kpmg-push-permissioned-blockchains>.
5. **Coulouris, George, and others.** *Distributed Systems: Concepts and Design (5th Edition).* Boston : Addison-Wesley, 2011.
6. **Сабо, Ник.** Умные контракты (Четвертая революция стоимости). *Computerra.ru.* [В Интернете] 29 09 1998 г. <http://old.computerra.ru/1998/266/194332/>.

**Артур Арутюнян**

Магистр экономики, 'МЦОБ' Образовательный Фонд,  
Магистр компьютерных и информационных наук

## **ВОЗМОЖНОЕ ВЛИЯНИЕ РАЗВИТИЯ БЛОКЧЕЙНА НА БУХ. УЧЕТ, ФИНАНСОВУЮ ОТЧЕТНОСТЬ И АУДИТ**

***Ключевые слова** – блокчейн, биткойн, учет, отчетность, аудит, умные контракты*

Статья посвящена блокчейну и возможному влиянию его развития на бухгалтерский учет, финансовую отчетность и аудит. Рассматриваются ведение учета с помощью блокчейна, переход от двойной записи к так называемой двойной записи в интегрированной главной книги и возможные изменения в сфере аудита.

**Artur Arutyunyan**

Master of Economics, 'IATC' Fund  
Master of Computer and Infomation Sciences

## **POSSIBLE INFLUENCE OF BLOCKCHAIN DEVELOPMENT ON ACCOUNTING, FINANCIAL REPORTING AND AUDIT**

***Keywords** – blockchain, bitcoin, accounting, reporting, audit, smart contracts*

The article is devoted to the blockchain and possible influence of its development on accounting, financial reporting and audit. We consider accounting with the help of a blockchain, the transition from a double entry to a so-called double entry in the integrated general ledger, and possible changes in the scope of the audit.

*Ներկայացվել է՝ 12.11.2018 թ.*

*Ընդունվել է սպառողության՝ 21.12.2018 թ.*

## Սոնա Բալոյան

տնտեսագիտության մագիստրոս, «ՀՈՒՄԿ» հիմնադրամ

### ԸՆԹԱՑԻԿ ԱԿՏԻՎՆԵՐԻ ՇՐՋԱՆԱՌԵԼԻՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

*Հիմնաբառեր* – Շրջանառելիություն, շրջանառելիության գործակիցներ, շրջանառու ակտիվ, պաշար, դեբիտորական պարտք, դրամական միջոցներ և կարճաժամկետ ֆինանսական ներդրումներ

Շրջանառելիության վերլուծության նպատակն է գնահատել կազմակերպության եկամուտ բերելու ունակությունը *փող-ապրանք-փող* շրջանառություն կատարելու ճանապարհով:

Շրջանառելիությունը թույլ է տալիս լրացնել հաշվեկշռային համակարգի ուսումնասիրությունը կապված կազմակերպության նյութական ապահովածության, պատրաստի արտադրանքի իրացման, մատակարարների և սպառողների հետ հաշվարկման պայմանների բնութագրման հարցերի շուրջ<sup>13</sup>:

Սույն աշխատանքի նպատակն է ներկայացնել ընթացիկ ակտիվների շրջանառելիության վերլուծության հիմնական սկզբունքներն ու եղանակները:

Շրջանառու միջոցները (ընթացիկ ակտիվներ) կազմակերպության կողմից արտադրության յուրաքանչյուր ցիկլում իրականացվող գործընթացներում ներդրվող միջոցներն են<sup>14</sup>: Շրջանառու միջոցներին բնորոշ հատկանիշներն են՝

---

<sup>13</sup> St´u Савицкая А. В. Анализ активов предприятия. Анализ хозяйственной деятельности предприятия. - 1999 г. - с. 400-441

<sup>14</sup> St´u [www.investopedia.com](http://www.investopedia.com)

• սպառվում են մեկ արտադրական ցիկլի ընթացքում՝ ամբողջությամբ փոխանցելով իրենց արժեքը թողարկվող արտադրանքին,

• գտնվում են անընդհատ շրջանառության մեջ,

• մեկ գործառնական փուլի ընթացքում փոխում են իրենց ձևը փողից ապրանքի և ապրանքից փողի՝ անցնելով հետևյալ երեք փուլերով՝ գնում, սպառում և վաճառք:

Կազմակերպության ֆինանսական վիճակը ուղղակիորեն կախված է այն բանից, թե որքան արագ են ակտիվներում ներդրված միջոցները վերածվում իրական փողի: Դեբիտորների կողմից վճարումների չկատարումը դանդաղեցնում է կազմակերպության բնականոն ընթացքը՝ (նյութերի գնում, աշխատավարձի և այլ ծախսերի վճարում)՝ բերելով դեբիտորական պարտքի աճին: Միևնույն ժամանակ միջոցների ավելորդ բաշխումը արտադրական պաշարներում, անավարտ արտադրանքում, պատրաստի արտադրանքում բերում է ռեսուրսների վատնման և շրջանառու կապիտալի ոչ արդյունավետ օգտագործման<sup>15</sup>:

Շրջանառու ակտիվների շրջանառելիության գնահատման համար կիրառվում է շրջանառելիության գործակիցը, որն իրենից ներկայացնում է ապրանքների վաճառքից հասույթի և վերլուծվող ժամանակաշրջանում շրջանառու ակտիվների միջին մեծության հարաբերակցությունը.

$$AT_r = \frac{R}{A},$$

որտեղ՝

$AT_r$  - ակտիվների շրջանառելիության գործակից,

$R$  - վաճառքից հասույթ,

---

<sup>15</sup> Տե՛ս Н.Н. Селезнева, А.Ф. Ионова, Финансовый анализ. Управление финансами, Москва, 2006, с. 242



$\bar{A}$  - շրջանառու ակտիվների միջին մեծություն:

Շրջանառելիության գործակիցը ցույց է տալիս որոշակի ժամանակահատվածում շրջանառու ակտիվների պտույտների թիվը և բնութագրում շրջանառու միջոցներում ներդրված 1 դրամական միավորին բաժին ընկած հասույթի ծավալը<sup>16</sup>:

Մեկ պտույտի տևողությունն օրերով հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$AT_T = \frac{\bar{A} \times T}{R},$$

որտեղ՝

$AT_T$  - շրջանառու ակտիվների պտույտների տևողությունն օրերով,

$T$  - հաշվետու ժամանակաշրջանը օրերով:

Կազմակերպության տվյալների հիման վրա հաշվարկենք շրջանառու ակտիվների շրջանառելիության գործակիցը և մեկ պտույտի տևողությունը (Աղյուսակ 1):

Այսպիսով, Կազմակերպության մոտ նկատվում է շրջանառու ակտիվների շրջանառելիության աննշան դանդաղում 0.008 անգամ և շրջանառության տևողության ավելացում 2 օրով:

Կապիտալի շրջանառության արագացումը հանգեցնում է շրջանառու ակտիվների պահանջարկի կրճատմանը, արտադրության ծավալների աճին և, հետևաբար, շահույթի ավելացմանը: Արդյունքում բարելավվում է կազմակերպության ֆինանսական վիճակը, ամրապնդվում վճարունակությունը<sup>17</sup>:

---

<sup>16</sup> Ст' у Беллендир М.В., Комплексный Экономический Анализ Хозяйственной Деятельности, Новосибирск, 2008, с. 116

<sup>17</sup> Ст' у [www.grandars.ru](http://www.grandars.ru)

## Աղյուսակ 1

### Շրջանառու ակտիվների շրջանառելիության որոշում

Ցուցանիշներ	Բազիսային տարի	Հաշվետու տարի	Շեղում
Արտադրանքի իրացումից հասույթ (հազար դրամ)	1,876,632	10,686,294	+ 8,809,662
Շրջանառու ակտիվների միջին արժեք (հազար դրամ)	1,520,455	8,714,707	+ 7,194,252
Շրջանառու ակտիվների շրջանառելիություն, (պտույտ)	1.234	1.226	-0.008
Մեկ պտույտի տևողություն (օր)	292	294	+2

*Պաշարների շրջանառելիության գործակիցների հաշվարկ և գնահատում:* Կազմակերպության պաշարներում ներդրված ռեսուրսների շրջանառության տևողության փոփոխության վերլուծությունը հնարավորություն է տալիս որոշել շրջանառու միջոցների պահուստների նկատմամբ պահանջարկի նվազեցման մակարդակը պաշարաների օպտիմալացման, դրանց՝ արտադրության աճի համեմատ հարաբերական կրճատման, հաշվարկների արագացման, կամ, ընդհակառակը, աշխատանքների անբարենպաստ իրավիճակներում շրջանառության նոր միջոցների ներգրավման միջոցով: Շրջանառու միջոցների ընդհանուր ծավալում պաշարների և դրա հետ կապված ծախսերի բացարձակ գումարի և համամասնական կշռի ավելացումը կարող են վկայել հետևյալների մասին՝

- կազմակերպության արտադրական կարողության ընդլայնում,

- ինֆլյացիայի ազդեցությամբ դրամական միջոցների արժեզրկումից պաշտպանում արտադրական պաշարներում ներդրման միջոցով,
- ոչ ռացիոնալ բիզնես ռազմավարության որդեգրում, ինչի հետևանքով ընթացիկ ակտիվների զգալի մասը պարալիզացված է ոչ բարձր իրացվելիություն ունեցող պաշարներում: Չնայած պաշարների և ծախսերի աճը կարող են բերել ընթացիկ ակտիվների իրացվելիության բարձրացմանը, անհրաժեշտ է հայտնաբերել և վերլուծել տնտեսական վերլուծությունից միջոցների շեղումները, քանի որ դա բերում է կրեդիտորական պարտքի ավելացմանը և կազմակերպության ֆինանսական վիճակի վատթարացմանը:

Պաշարների շրջանառելիության գործակիցը որոշում է պաշարների պտույտների քանակը ուսումնասիրվող ժամանակաշրջանի ընթացքում: Այն հնարավոր է հաշվել հետևյալ բանաձևով՝

$$AT_R = \frac{R}{A^I}, \quad \overline{A^I} = \frac{A_0^I + A_1^I}{2}$$

Պաշարների շրջանառելիության ցուցանիշի հաշվարկն առավել ճշգրիտ կլինի, եթե վաճառքից հասույթի փոխարեն կիրառվի վաճառված ապրանքների, ծառայությունների, աշխատանքների ինքնարժեքը: Այդ դեպքում պաշարների շրջանառելիությունը կհաշվարկվի հետևյալ կերպ՝

$$AT_R = \frac{S}{A^I},$$

որտեղ՝

$S$  - վաճառքի ինքնարժեք:

Պաշարների շրջանառությունն օրերով որոշվում է հետևյալ կերպ՝

$$I_D = \frac{\overline{I} \times T}{S},$$

որտեղ՝

$I_D$  - պաշարների շրջանառության տևողությունն օրերով,

$\bar{I}$  - պաշարների միջին մեծություն,

$T$  - վերլուծվող ժամանակահատվածի տևողություն:

Պաշարների շրջանառելիության աճը վկայում է դրանց ինայտդաբար օգտագործման, մատակարարման, արտադրական և վաճառքի գործընթացների ինտենսիվացման մասին, իսկ պաշարների շրջանառելիության նվազումը՝ պաշարների աճի, վաճառքի ինքնարժեքի աճի կամ ինքնարժեքի կրճատման համեմատ պաշարների ավելի դանդաղ կրճատման մասին:

Պաշարների և վաճառված ապրանքների, արտադրանքի, աշխատանքների, ծառայությունների ինքնարժեքի անհամաչափությունն արտահայտվում է հումքի, նյութերի, անավարտ արտադրանքի, պատրաստի արտադրանքի և ապրանքների ավելցուկային մնացորդների տեսքով: Հումքի, նյութերի, անավարտ արտադրանքի պաշարների հարաբերական աճը կարող է նշանակել արտադրության ծավալների աճ, որոնց, սակայն, դեռ չի համապատասխանում վաճառված ապրանքների, արտադրանքի, աշխատանքների, ծառայությունների ծավալները, կամ արտադրական և շրջանառության գործընթացների դանդաղում՝ տեխնոլոգիական պատճառներով պայմանավորված: Պատրաստի արտադրանքի և ապրանքների հարաբերական աճը կարող է վկայել կազմակերպության ապրանքների և պատրաստի արտադրանքի նկատմամբ պահանջարկի կրճատում:

Պաշարների շրջանառելիության գործակցի և շրջանառության տևողության հաշվարկը ներկայացված է Աղյուսակ 2-ում:

**Աղյուսակ 2. Պաշարների շրջանառելիության որոշում**

Ցուցանիշներ	Բազիսային տարի	Հաշվետու տարի	Շեղում
Արտադրանքի վաճառքի ինքնարժեք (հազար դրամ)	1,658,195	7,906,526	+ 6,248,331
Պաշարների միջին արժեք (հազար դրամ)	928,828	2,544,223	+ 1,615,395
Պաշարների շրջանառելիություն, (պտույտ)	1.79	3.11	+ 1.32
Մեկ պտույտի տևողություն (օր)	202	116	-86

Ինչպես պարզ է դառնում, պաշարների շրջանառելիությունն արագացել է: Եթե բազիսային տարում պաշարների միջին ծավալը վաճառվել է տարեկան 1.79 անգամ, ապա հաշվետու տարում՝ 3.11 անգամ: Սա խոսում է Կազմակերպությունում պաշարների խելամիտ օգտագործման և մատակարարման, արտադրական ու վաճառքի արդյունավետ համակարգերի առկայության մասին: Այնուամենայնիվ, որքան կարճ է այս տևողությունը, այնքան ավելի լավ է, քանի որ պաշարների կուտակումը ծախսատար է, դրանց նվազագույն մակարդակը կարող է վկայել լավ կառավարման մասին:

*Դեբիտորական պարտքի շրջանառելիության գործակիցների հաշվարկ և գնահատում:* Դեբիտորական պարտքի շրջանառելիության ցուցանիշների վերլուծության խնդիրն է բացահայտել ժամկետանց պարտավորությունների ծավալը, գնահատել վերջինիս դինամիկան և առաջացման կամ աճի պատճառները: Վաճառքի շրջանառության և իրացվելիության ցուցանիշների համադրելիության ապահովման համար հաշվարկներում պետք է կիրառել վաճառքից հասույթն առանց ԱԱՀ, ակցիզ և այլ պարտադիր վճարների (ինչպես արտացոլված է Ձև2-ում): Միննույն ժամանակ

անհրաժեշտ է հաշվի առնել, որ հաշվապահական հաշվեկշռում դեբիտորական և կրեդիտորական պարտքերն արտացոլված են ԱԱՀ-ն, ակցիզը և այլ պարտադիր վճարները ներառյալ, հետևաբար, խելամիտ է դեբիտորական և կրեդիտորական պարտքերի շրջանառության հաշվարկման ժամանակ կիրառել վաճառքից հասույթը ԱԱՀ-ն և այլ պարտադիր վճարները ներառյալ<sup>18</sup>:

Դեբիտորական պարտքի ավելացումը կարող է պայմանավորված լինել կազմակերպության ոչ հետևողական կրեդիտորական քաղաքականության որդեգրմամբ, գործընկերների սխալ ընտրությամբ, որոշ գնորդների անվճարունակությամբ և սնանկացմամբ, վաճառքների ծավալների չափազանց բարձր տեմպերով, արտադրության իրացման հետ կապված դժվարություններով: Դեբիտորական պարտքի կտրուկ նվազումը կարող է լինել հաճախորդների հետ բացասական հարաբերությունների հետևանք (ապառիկ վաճառքների կրճատում, հաճախորդների կորուստ):

Դեբիտորական պարտքի շրջանառելիության գործակիցը հաշվարկվում է հետևյալ կերպ՝

$$AR_r = \frac{R}{AR}$$

որտեղ՝

$AR_r$  - դեբիտորական պարտքի շրջանառելիության գործակից,

$AR$  - դեբիտորական պարտքի միջին մեծություն:

Դեբիտորական պարտքի շրջանառելիության գործակիցը ցույց է տալիս կազմակերպության տրամադրած առևտրային վարկի ընդլայնումը կամ նվազումը:

---

<sup>18</sup> Տե՛ս Ա.Դ. Шеремет, Е.В. Негашев, Методика финансового анализа деятельности коммерческих организаций, Москва, 2008, с. 103

Դեբիտորական պարտքի շրջանառելիության աճը կարող է արտացոլել գնորդների կողմից վճարումների կատարման կանոնակարգման բարելավում (կազմակերպության նկատմամբ պարտավորության ժամանակին կատարում) և կամ ապառիկ հիմունքով վաճառքի ծավալների կրճատում: Դեբիտորական պարտքի շրջանառելիության կրճատումը վկայում է գնորդների կողմից վճարումների կատարման բարելավման կամ ապառիկ հիմունքով վաճառքների ծավալների աճի մասին:

Դեբիտորական պարտքի ստացման տևողությունն օրերով հաշվարկվում է հետևյալ կերպ՝

$$AR_T = \frac{T}{AR_r}$$

Որքան երկարատև է ստացման տևողությունը, այնքան բարձր է դրա չվճարման ռիսկը: Ընդհանուր առմամբ, որքան կարճ է դեբիտորական պարտքի շրջանառության տևողությունն, այնքան ավելի լավ է, քանի որ, ըստ էության, դեբիտորական պարտքը կազմակերպության գումարն է այլ կազմակերպության մոտ:

Աղյուսակ 3. Դեբիտ. պարտքի շրջանառելիության որոշում

Ցուցանիշներ	Բազիսային տարի	Հաշվետու տարի	Շեղում
Արտադրանքի իրացումից հասույթ <sup>19</sup> (հազար դրամ)	2,661,829	13,600,116	+ 10,938,287
Դեբիտորական պարտքի միջին արժեք (հազար դրամ)	408,273	5,973,786	+ 5,565,513
Դեբիտորական պարտքի շրջանառելիություն, (պտույտ)	6.52	2.28	- 4.24
Մեկ պտույտի տևողություն (օր)	55	158	+ 103

<sup>19</sup> Ներառյալ ԱԱՀ-ը

Աղյուսակ 3-ում ներկայացված հաշվարկներից կարելի է եզրակացնել, որ Կազմակերպությունում առկա է դեբիտորական պարտքի հավաքագրման խնդիր, ինչի մասին վկայում է դեբիտորական պարտքի շրջանառության ստոդոյության կտրուկ աճը: Հետագա վճարունակության և մատակարարների հետ Կազմակերպության հնարավոր խնդիրներից խուսափելու համար կա անհրաժեշտություն վերանայելու իր և իր գնորդի որդեգրած կրեդիտային քաղաքականությունը:

*Դրամական միջոցների և կարճաժամկետ ֆինանսական ներդրումների շրջանառելիության ցուցանիշների հաշվարկ և գնահատում:* Դրամական միջոցների և կարճաժամկետ ֆինանսական ներդրումների շրջանառելիությունը ( $M_r$ ) հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$M_r = \frac{R}{M},$$

որտեղ՝  $M$ - հաշվետու ժամանակաշրջանում դրամական միջոցների և կարճաժամկետ ֆինանսական ներդրումների միջին մեծություն:

Ցուցանիշի առավել ճշգրիտ հաշվարկման համար դիտարկվում է կարճաժամկետ ֆինանսական ներդրումների միայն առավել իրացվելի մասը. այն արագ իրացվելի արժեթղթերը, որոնք կարող են ծառայել որպես վճարման միջոց կամ արագ փոխարկվել դրամական միջոցների: Կարճաժամկետ տրված փոխառությունները, որոնք ընդգրկվում են կարճաժամկետ ֆինանսական ներդրումների կազմում, վերաբերում են դեբիտորական պարտքերին և հաշվի առնվում վերջինիս շրջանառության ցուցանիշների հաշվարկման ժամանակ: Ցուցանիշի հաշվարկման համար սեփական բաժնետոմսերը չեն համարվում բարձր իրացվելի կարճաժամկետ ֆինանսական ներդրում: Այն կարող է համարվել բարձր իրացվելի և դիտարկվել ցուցանիշի



հաշվարկման ժամանակ միայն այն դեպքում, երբ առկա է արագ օտարման հնարավորություն:

Դրամական միջոցների և կարճաժամկետ ֆինանսական ներդրումների շրջանառության միջին ժամկետը ( $M_{\pi}$ ) հաշվարկվում է հետևյալ բանաձևի միջոցով՝

$$M_{\pi} = \frac{\overline{M} \times T}{R}$$

Գործակիցը ցույց է տալիս հաշվետու ժամանակաշրջանում կազմակերպության գործարար ակտիվությունը՝ կախված դրամական միջոցների և կարճաժամկետ ֆինանսական ներդրումների օգտագործման հետ:

Շրջանառելիության կրճատումը և միջին ժամկետի աճը վկայում են ձեռնարկությունում աշխատանքների ոչ ռացիոնալ կազմակերպման մասին, ինչը հանգեցրել է արագ իրացվելի ակտիվների դանդաղ օգտագործմանը, որոնց հիմնական նպատակն էր ապահովել կազմակերպության արտադրատնտեսական շրջանառությունը:

Դրամական միջոցների և կարճաժամկետ ֆինանսական ներդրումների շրջանառելիության գործակցի աճը և շրջանառության միջին ժամկետի կրճատումը վկայում են կազմակերպությունում բարձր իրացվելի ակտիվների կառավարման ռացիոնալության մասին:

Վերլուծվող կազմակերպության համար դրամական միջոցների շրջանառելիության հաշվարկը ներկայացված է Աղյուսակ 4-ում: Միանգամայն ակնհայտ է, որ Կազմակերպությունում «անգործության» մատնված դրամական միջոցներ չկան:

**Աղյուսակ 4.** Դրամական միջոցների շրջանառելիության որոշում

Ցուցանիշներ	Բազիսային տարի	Հաշվետու տարի	Շեղում
Արտադրանքի իրացումից հասույթ (հազար դրամ)	1,876,632	10,686,294	+ 8,809,662
Դրամական միջոցների միջին արժեք (հազար դրամ)	13,436	14,762	+ 1,326
Դրամական միջոցների շրջանառելիություն, (պտույտ)	139.67	723.9	+ 584.23
Մեկ պտույտի տևողություն (օր)	3	0.49	-2.51

**ԱՍՓՈՓՈՒՄ**

Սույն աշխատանքում իրականացվում է ընթացիկ ակտիվների (պաշարներ, դեբիտորական պարտք, դրամական միջոցներ և կարճաժամկետ ֆինանսական ներդրումներ) շրջանառելիության գործակիցների հաշվարկման տարբեր կարգերի համեմատական վերլուծություն: Դիտարկվում են գործակիցների հաշվարկման այլընտրանքային մոտեցումներ, որոնց կիրառման արդյունքում ցուցանիշների ստացված մեծություններն առավել ճշգրիտ կերպով են արտացոլում կազմակերպության գործունեության դիտարկվող ասպեկտի իրական պատկերը: Ներկայացվում են շրջանառելիության գործակիցների հաշվարկված մեծությունների մեկնաբանման հնարավոր այլընտրանքները: Իրական կազմակերպության համապատասխան ցուցանիշների հիման վրա կատարվում է դրա ընթացիկ ակտիվների շրջանառելիության գործակիցների

գնահատում՝ հաշվարկման համար հիմք ընդունելով աշխատանքում առաջարկվող մոտեցումները:

**Сона Балоян**

Магистр экономики, 'МЦОБ' Фонд

## **АНАЛИЗ ОБОРАЧИВАЕМОСТИ ТЕКУЩИХ АКТИВОВ**

***Ключевые слова** – Оборачиваемость, коэффициенты оборота, оборотные активы, запасы, дебиторская задолженность, денежные средства и краткосрочные финансовые вложения*

В этом исследовании проводится сравнительный анализ различных систем расчета коэффициентов оборота текущих активов (запасы, дебиторская задолженность, денежные средства и краткосрочные финансовые вложения). Принимаются во внимание альтернативные подходы к расчету коэффициентов, в результате чего значения показателей более точно отражают реальную картину наблюдаемого аспекта деятельности организации. Приводятся возможные альтернативы интерпретации рассчитанных значений коэффициентов оборота. На основе соответствующих показателей фактической организации рассчитываются коэффициенты оборота ее текущих активов, используя предложенные в этом исследовании подходы.

## **ANALYSIS OF THE TURNOVER RATIOS OF THE CURRENT ASSETS**

***Keywords** – Turnover, turnover ratios, current asset, inventory, receivable, cash and short-term financial investments*

In this study, a comparative analysis is undertaken regarding the different approaches to calculation of the turnover ratios of the current assets (inventories, receivables, cash and short-term financial investments). A thorough examination is carried out for the aforementioned ratio-calculation alternatives, the implementation of which results in values of turnover ratios that more accurately reflect the real picture of the observed aspect of the organization's activities. The possible options for interpreting the resulting values of turnover ratios are presented. Based on the relevant information from an actual organization, the turnover ratios of its current assets are assessed, taking into account the proposed ratio-calculation approaches.

*Ներկայացվել է՝ 06.12.2018 թ.*

*Ընդունվել է տպագրության՝ 21.12.2018 թ.*

## Արմեն Ճուղուրյան

տ.գ.դ., պրոֆեսոր, Երևանի Հյուսիսային համալսարան

### ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԵՎ ՀՀ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍՊՐՔԻ ՓՈԽԿԱՊԱԿՑՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

*Հիմնաքառեր – շահույթահարկ, հարկային և հաշվապահական շահույթ, սինթեթիկ հաշիվներ, ճշտումներ, հարկային հաշվետվություն:*

ՀՀ հարկային օրենսգիրքը հանրային և պառլամենտական ակտիվ քննարկումների արդյունքում ենթարկվելով բազմաթիվ բարեփոխումների, գործնականում իր լիարժեք կիրառումը կգտնի 2018 թվականից: Այն համապարփակ փաստաթուղթ է, որում համախմբված են տարբեր հարկատեսակների գծով օրենսդրական դրույթներ, որոնցով ՀՀ-ում կարգավորվում են հարկային հարաբերությունները: Հատկանշական է նաև, որ օրենսգրքում ներկայացվում են նաև ՀՀ հարկային համակարգի սկզբունքները:

Այսպես, ՀՀ հարկային համակարգի սկզբունքներից է արդյունավետությունը, համաձայն որի հարկային համակարգը պետք է հնարավորություն ընձեռնի, որ հարկ վճարողների մոտ հաշվառումը, իսկ հարկային մարմինների մոտ հարկային հսկողությունը իրականացավեն հնարավորինս փոքր ռեսուրսներով:<sup>20</sup> Մասնագետների կողմից նույնպես ընդգծվում է Օրենսգրքի առավելությունը՝ առաջին անգամ հարկային համակարգի սկզբունքների ներկայացման առումով:<sup>21</sup>

<sup>20</sup> ՀՀ հարկային օրենսգիրք, հոդված 3, կետ 14

<sup>21</sup> Ա. Զիլինգարյան, «Երկու հիմնական հարց Հարկային օրենսգրքի վերաբերյալ», Business Support Center, <http://trainings.am/>

Այս առումով, նորից արդիական է դառնում հարկային հաշվառման ներկայացման խնդիրը՝ որպես հաշվապահական հաշվառման առանձին ուղղություն: Հարկային օրենսգիրքը առանձին անդրադարձ չի կատարում հարկային հաշվառմանը, ընդամենը նշելով, որ ընդունում է հաշվապահական հաշվառման ոլորտը կարգավորող իրավական ակտերի հասկացությունները:<sup>22</sup> Սակայն, կարծում ենք, որ հարկային հաշվառման դիտարկումը տեղին կլիներ հարկային համակարգի արդյունավետության գնահատման դիտարկման տեսանկյունից, քանի որ հաշվառման այս տեսակը էապես կարող է կրճատել հարկային հաշվետվությունների կազմման ուղղված ռեսուրսները՝ հատկապես խոշոր կազմակերպություններում:<sup>23</sup>

Հարկային հաշվառման կազմակերպումը հնարավորություն է ստեղծում համեմատաբար փոքր ռեսուրսներով համակարգելու տեղեկատվական հոսքերը, որոնցով հաշվարկվում է հարկային բազան: Ֆինանսական հաշվառումը, որը թիրախավորված է ֆինանսական հաշվետվությունների կազմմանը, մեր կարծիքով չպետք է իրականացնի հարկային հաշվետվությունների ներկայացման գործառույթներ:


Այսպես, հաշվապահական շահույթի ճշտումները (հարկային շահույթին անցման նպատակով) ընդգրկում են հարկային օրենսդրությամբ նախատեսվող ավելացումներն ու նվազեցումները (տես գծապատկեր 1), քանի որ ֆինանսական հաշվառմամբ արձանագրված ոչ բոլոր ծախսերն ու եկամուտներն են ընդունվում հարկային օրենքներով: Մյուս կողմից, որոշ ծախսեր և եկամուտներ, որոնք չեն արձանագրվում ֆինանսական հաշվառման կողմից, ընդունվում են հարկային օրենսդրությամբ: Հետևաբար, շահութահարկը

---

<sup>22</sup> Նույն տեղը, հոդված 5, կետ 4

<sup>23</sup> [https://www.audit-it.ru/terms/taxation/nalogovyy\\_uchet.html](https://www.audit-it.ru/terms/taxation/nalogovyy_uchet.html)

հաշվառելիս հաշվապահական շահույթը ենթարկվում է ճշգրտումների:



**Գծապատկեր 1.** Հաշվապահական և հարկային շահույթի առաջացման մեխանիզմը

Շահութահարկի հաշվետվության ներկայացումը հարկային հաշվառման խնդիրն է: Սակայն հաշվետվության տեղեկատվական հոսքը ձևավորվում է ֆինանսական հաշվառման համակարգում, քանի որ մինչ այժմ գործող հաշվապահական հաշիվների պլանում հատուկ հաշիվներ չեն նախա-

տեսվում հարկային հաշվառման համար:

Հարկային տեղեկատվական առանձնացված հոսքի ձևավորման առումով նպատակահարմար է.

Առաջին. կիրառել հարկային հաշվարկներում ընդգրկվող եկամուտների և ծախսերի սինթետիկ հատուկ հաշիվներ: Երկրորդ. վերոհիշյալ հաշիվներով և հաշվային թղթակցություններով կազմավորել հարկային հաշվառման համապարփակ համակարգ: Երրորդ, ինտեգրել հարկային և ֆինանսական հաշվառման համակարգերը:

Հարկային սինթետիկ հաշիվների կիրառումը հաշվառման պլանում չի ենթադրում հատուկ դասի ավելացում: Նման խնդրի լուծումը, մեր կարծիքով, հնարավոր է գործող եկամուտների և ծախսերի հաշիվների քառանիշ ծածկագրերին լրացուցիչ «կարգ» ավելացումով: Այսպես, ֆինանսական հաշվառման համակարգում ընդգրկված ծախսերի և եկամուտների ծածկագրերին լրացուցիչ հինգերորդ նիշ չի ավելացվի, իսկ հարկային հաշվառման համակարգում գործող այդ հաշիվների ծածկագրերը հանդես կգան ավելացված 0 նիշով:

Օրինակ, արտադրանքի վաճառքից հասույթը ֆինանսական հաշվառման համակարգում կարձանագրվի 6111 սինթետիկ հաշվում, իսկ հարկային հաշվառման համակարգում՝ 61110 սինթետիկ հաշվում: Նույն կերպ վաճառքի ինքնարժեքը կձևակերպվի համապատասխանաբար 7111 և 71110 հաշիվներով:

Հարկային հաշվառումը կազմակերպվում է հարկվող եկամուտների և նվազեցումների արձանագրման և ամփոփման համար: Հետևաբար, ի տարբերություն ֆինանսական հաշվառման, հարկային հաշվառման եկամուտներն



ու ծախսերը գրանցելիս հաշվային ձևակերպումներում հաշվի չեն առնվում թղթակցող համապատասխան ակտիվները կամ պարտավորությունները, քանի որ տվյալ դեպքում դրանք ուսումնասիրման առարկա չեն:

Հետևաբար, հարկային հաշվառման համակարգում եկամուտների կամ ծախսերի կրկնակի գրանցման նպատակով նպատակահարմար ենք գտնում հաշիվների գործող պլանի երրորդ դասում ընդգրկելու նոր հաշիվ՝ 361 «Հարկային եկամուտներ և նվազեցումներ» անվանմամբ: Հաշվի դեբետում կարձանագրվեն հարկվող եկամուտները, իսկ կրեդիտով՝ նվազեցումները: Փաստորեն, հաշվի դեբետային և կրեդիտային գումարների տարբերությունը իրենից կներկայացնի հարկային շահույթը, որի նկատմամբ հաշվարկվում է շահութահարկ (տես գծապատկեր 2):


Դտ	361	Կտ
հարկվող եկամուտներ (A)	նվազեցումներ (B)	հարկվող շահույթ A - B

**Գծապատկեր 2.** «Հարկային եկամուտներ և նվազեցումներ» հաշվի գործունեության մեխանիզմը

Իսկ շահութահարկի գծով ֆինանսական և հարկային հաշվառման տեղեկատվական հոսքերի ինտեգրումը հնարավոր է իրականացնել գործող հաշվապահական հաշվառման հաշվային պլանի շրջանակում (տես գծապատկեր 3): Ըստ տարբերակված եկամուտների և ծախսերի, ֆինանսական և հարկային հաշվառման տեղեկատվական հոսքերի փոխկապակցումը նպատակահարմար է իրականացնել ոչ

Թե 331 և 361 հաշիվների գրանցումների համադրումով, այլ այդ հոսքերն ապահովող առանձին համասեռ հաշիվների շրջանառությունների համեմատումով:

**Գծապատկեր 3.** Հարկային և ֆինանսական հաշվառումների տեղեկատվական փոխկապակցումը



Նման համեմատումների հիմքում նորից դրվում են հարկային և հաշվապահական շահույթների կապն ապահովող ճշտումները: Այսպես, համադրելով հարկային և ֆինանսական հաշվառման համակարգերի տարբերակված տեղեկատվական հոսքերը ըստ առանձին եկամուտների ու ծախսերի կտրվածքի, կստացվեն այն բոլոր ճշտումները, որոնք արվել են հաշվապահական շահույթից հարկային շահույթին անցում կատարելիս (տես գծապատկեր 4):

Հարկային հաշվառման տեղեկատվական հոսք.

<b>61110</b>	<b>71110</b>	<b>71330</b>	<b>71320</b>	<b>71460</b>	<b>71440</b>	<b>7610</b>
Ֆինանսական հաշվառման տեղեկատվական հոսք						
<b>6111</b>	<b>7111</b>	<b>7133</b>	<b>7132</b>	<b>7146</b>	<b>7144</b>	<b>7610</b>
<b>ՃՇՏՈՒՄՆԵՐ</b>						
a	b	c	d	e	f	g

**Գծապատկեր 4.** Ֆինանսական և հարկային տեղեկատվական հոսքերի համադրումը սինթետիկ հաշիվների օգնությամբ

Քանի որ առաջարկվող 6-րդ և 7-րդ դասերի հնգանիշ հաշիվները փոխկապակցված են 361 «Հարկային եկամուտներ և նվազեցումներ» հարկային հաշվառման հաշվի հետ և թիրախավորված են շահութահարկի հաշվետվության կազմմանը, ապա դրանք ինտեգրված չեն և չեն թղթակցում գործող հաշվային պլանի քառանիշ հաշիվների հետ, այլ պարզապես հաշվետու ժամանակաշրջանի վերջում առանց կրկնակի գրանցման զրոյացվում են՝ հաջորդ ժամանակաշրջանի համար:

### ԱՍՓՈՓՈՒՄ

Հարկային հաշվառման կազմակերպումը բխում է ՀՀ Հարկային օրենսգրքի սկզբունքներից, երբ խնդիր է դրվում հնարավորինս փոքր ռեսուրսներով իրականացնել հաշվառում, որը կսպասարկեր հարկային հարաբերությունները պետության և կազմակերպությունների միջև: Հարկային հաշվառումը հնարավորություն է ստեղծվում ներկայացնելու օպտիմալ տեղեկատվական ձևավորման համակարգ խոշոր կազմակերպություններում:

**Armen Tchughuryan**

Doctor of Science, Professor, Northern University

## **PROBLEMS OF INTERRATION BETWEEN ACCOUNTING SYSTEM AND TAX LEGISLATION RA**

***Keywords** – profit tax, taxable and accounting profit, synthetic accounts, adjustments, tax reporting.*

Tax accounting is derived from the RA Tax Code principles, when it comes necessary with smallest possible resources to carry out accounting that serves tax relations between the state and the organizations. Tax accounting gives an opportunity to introduce the optimal information system in major organizations.

**Армен Джугурян**

д.э.н., профессор, Северный университет

## **ПРОБЛЕМЫ ВЗАИМОСВЯЗИ БУХГАЛТЕРСКОГО УЧЕТА И НАЛОГОВОГО КОДЕКСА РА**

***Ключевые слова** – налог на прибыль, налоговая и бухгалтерская прибыль, синтетические счета, корректировки, налоговая отчетность*

Организация налогового учета исходит из принципов Налогового кодекса РА, когда имеется ввиду ведение бухгалтерского учета по минимально возможным ресурсам в системе налоговых отношений между государством и организациями. Налоговый учет позволяет внедрить оптимальную информационную систему в крупных организациях.

*Ներկայացվել է՝ 05.12.2018 թ.*

*Հնդունվել է տպագրության՝ 21.12.2018 թ.*

**ՀԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԷԿՈՆՈՉԱՑՈՒՄԸ  
ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ. ՏՆՏԵՍԱԿԱՆ  
ԳԵՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

*Հիմնաբառեր* – էկոլոգիական հարկեր, «կրկնակի շահաբաժին» հայեցակարգը, էլեկտրաէներգիայի և բնական գազի ակցիզային հարկ, բնական գազի և էլեկտրաէներգիայի սպառողների համար տարբերակված սակագներ:

Արդյունավետ հարկային քաղաքականությունն ու հարկային վարչարարությունը կայուն տնտեսական աճի և զարգացման կարևոր պայմաններ են կարճ, միջին և երկարաժամկետ հեռանկարում: ՀՀ-ի համար դա հատկապես արդիական է ներկա փուլում, երբ անհրաժեշտ է մոբիլիզացնել երկրի զարգացման ամբողջ ներուժը: ՀՀ-ում 2016թ. նախորդ տարվա համեմատ տնտեսական ակտիվության ցուցանիշը կազմել է 0.5%<sup>24</sup>, իսկ համաձայն ՀԲ կանխատեսման այն 2017թ. չի գերազանցի 2%-ը, իսկ միջնաժամկետ հեռանկարում՝ կլինի 2-2.5% սահմաններում<sup>25</sup>: Դրա հետ մեկտեղ մտահոգիչ է ՀՀ արտաքին պետական պարտքի ցուցանիշը, այսպես 2016թ. դեկտեմբերի դրությամբ պետական

---

<sup>24</sup> Տնտեսական ակտիվության ցուցանիշը, <http://www.armstat.am/am/?nid=126&id=01510>

<sup>25</sup> Տես՝ ՀԲ-ն 2016-ին Հայաստանի համար կանխատեսում է 0% տնտեսական աճ, 2017-ին էլ՝ 2%, «Այսօր», <http://www.aysor.am/am/news/2016/12/09>

Տես՝ ՀՀ-ում սկսվել է տնտեսական ռեցեսիա – ՀԲ-ն կտրուկ իջեցրել է Հայաստանի 2016 թվականի տնտեսական աճի կանխատեսումը, Arm. Info, 9 դեկտեմբերի 2016, [http://finport.info/full\\_news.php?id=27492&lang=1](http://finport.info/full_news.php?id=27492&lang=1)

պարտքի չափը մոտ 5,9 մլրդ ԱՄՆ դոլար է<sup>26</sup>: 2017 թ., ըստ ՀՀ ֆինանսների նախարարության կանխատեսման, ընդհանուր պետական պարտքը կհասնի ՀՆԱ-ի 56.1%-ին<sup>27</sup>, 2017 թ. պետական պարտքի սպասարկմանը կուղղվի պետությունների ծախսերի շուրջ 9 տոկոսը<sup>28</sup>, իսկ 2020 թ. Հայաստանը միայն արտաքին պարտքի սպասարկմանը կուղղի բյուջեի մոտ 30%-ը: Այդ բեռը թեթևացնելու համար ֆինանսների նախարարությունը նախատեսում է նոր եվրաբնդերի թողարկում, և այդ եվրո փոխառության միջոցով հետաձգել վարկերի մի մասի մարումը, ըստ էության, իրականացնել վարկային պարտավորությունների ռեստրուկտուրիզացիա, մինչդեռ հարց է առաջանում՝ արդյո՞ք դա է միակ արդյունավետ միջոցը: Պետական պարտքի մեծությունն ու ՀՆԱ-ի նկատմամբ դրա հարաբերակցությունը ինքնին արտառոց չէ: Զարգացած որոշ երկրներում պետական պարտքն անգամ ավելի մեծ է, քան երկրի ՀՆԱ-ն: Մակայն ՀՀ-ի համար իրավիճակը դառնում է մտահոգիչ, երբ նշվածը զուգակցվում տնտեսության ներկայիս կառուցվածքի և դրա աճի տեմպերի հետ: Ակնհայտ է, որ նման համեստ տնտեսական աճի դեպքում երկիրը չի կարող իրագործել ոչ միայն կայուն զարգացման խնդիրը, այլ նաև ապահովել սոցիալական բազմաթիվ խնդիրների լուծումը, այդ թվում աղքատ-

---

<sup>26</sup> Տես՝ Պետական պարտք, «Ամփոփ», <http://ampop.am/state-debt-of-armenia/>: Համաձայն նույն աղբյուրի 2017 թ. հունվարի 1-ի դրությամբ ՀՀ մշտական բնակչության թվաքանակը կազմում է 2986500 մարդ և ըստ հաշվարկի չորս հոգուց բաղկացած ընտանիքի համար պետական պարտքի բեռը կկազմի 7900 դոլար՝ չհաշված տոկոսադրույքները:

<sup>27</sup> Տես՝ Հայաստանի ընդհանուր պետական պարտքը 2016 թվականի վերջին կհասնի ՀՆԱ-ի 54.6 տոկոսին, իսկ 2017 թվականին՝ 56.1 տոկոսին, Arm. Info, [http://finport.info/full\\_news.php?id=27051&lang=1](http://finport.info/full_news.php?id=27051&lang=1)

<sup>28</sup> Տես՝ ՀՀ ֆինանսների նախարար. Հայաստանի պետական պարտքի գումարը 2016 թվականի վերջին կհասնի ՀՆԱ-ի 55.5%-ին, իսկ 2017-ին՝ 56.8%-ին, Arm. Info, 23 Ռեկտեմբերի 2016,

[http://www.finport.am/full\\_news.php?id=27724&lang=1](http://www.finport.am/full_news.php?id=27724&lang=1)

տության մակարդակի կրճատումը, ինչպես նաև ամրապնդել երկրի պաշտպանության ու անվտանգության անհրաժեշտ մակարդակը: Այս դեպքում անհրաժեշտ են համարժեք լուծումներ, մասնավորապես՝ ինչպես ապահովել պետական բյուջեի հարկային մուտքերի առաջանցիկ աճը տնտեսական ակնհայտ նվազ ակտիվության դեպքում, քանի որ վերջինիս չգոհացնող կանխատեսումը, ինչպես նշվեց, հաստատվել է Համաշխարհային բանկի կողմից:

2016թ. աշնանը ՀՀ-ում առաջին անգամ ընդունվեց «ՀՀ հարկային օրենսգիրքը» (2016թ. հոկտեմբերի 4-ին)<sup>29</sup>, որը կարևոր քայլ հանդիսանացավ հարկային ոլորտի համար: Դրա հետ մեկտեղ այն բազմաթիվ մտահոգություններ առաջացրեց դրա քննարկման ընթացքում: Մեր կարծիքով, առանցքայինը դրանց շարքում այն է, որ Հարկային օրենսգիրքը չի ներմուծել այն փիլիսոփայությունը, որը պետք է ուղղորդի տնտեսական զարգացումներն առնվազն հնգամյա կամ ավելի երկար ժամանակահատվածում: Մինչդեռ երկրում ստեղծված քաղաքական, սոցիալ-տնտեսական, բարոյահոգեբանական իրավիճակը պահանջում է, որպեսզի բարեփոխումների պլատֆորմը այսուհետ նպատակաուղղված լինի կոնկրետ տեսանելի արդյունքների ապահովմանը, իսկ դրա իրականացման գործիքակազմի ընտրության չափորոշիչ ընդունվեն միջազգային պրակտիկայում նորարական արդյունավետ զարգացումներ ապահովող մոտեցումներն ու կառուցակարգերը:

Հարկ եւ համարում շեշտել, որ սույն նախաձեռնությունը այս ձևաչափով ներկայացնելու մոտեցումը առաջացավ 2016թ. ապրիլյան քառօրյա պատերազմից հետո<sup>30</sup>, երբ

---

<sup>29</sup> ՀՀ հարկային օրենսգիրք, <http://www.arlis.am/>

<sup>30</sup> 2016թ. ապրիլի 2-ին Ադրբեջանը լայնամասշտաբ հարձակում իրականացրեց Լեռնային Ղարաբաղի հակամարտության ամբողջ ճակատով, խախտելով դեռևս 1994թ. և 1995թ. միջազգային համաձայնագրերով ստանձնած հրադադարի պահպանումն ու միջազգային միջնորդների

ակնհայտ դարձավ, որ Հայաստանը կարող է պարտվել թիկունքում՝ տնտեսական և ոչ թե ռազմի դաշտում: Դրա մասին պատկերավոր վկայում է ՀՀ պետբյուջի ֆինանսավորման առումով պատերազմի մեկ օրվա արժեքը<sup>31</sup>, որը պետք է ստիպի պետական կառավարման այլ բազմաթիվ խնդիրների հետ մեկտեղ արմատապես վերանայել նաև պետական ֆինանսների առանցքը հանդիսացող հարկային քաղաքականությունը:

Խնդրի բարձրացման համար չափազանց կարևոր էր ՀՀ գործադիր իշանությունում տեղի ունեցող իրադարձությունների ժամանակագրական գործոնը: 2016թ. աշնանը ՀՀ կառավարությունը գլխավորած վարչապետ Կ.Կարապետյանն իր վարած առաջին նիստում (նույն թվականի սեպտեմբերի 15-ին) միանշանակ հանձնարարական ձևակերպեց, կապված՝ բնական գազի և էլեկտրաէներգիայի սակագների խնդրի հետ և շեշտեց, որ դրանց լուծումը չպետք է լինի բյուջեի, այլ դրանց սպասարկումը իրականացնող մասնավոր օպերատորների հաշվին:

2016թ. նոյեմբերի 3-ին վարչապետի և «Գազպրոմ Արմենիա»-ի կողմից հրապարակային հնչեցվեցին դրա իրագործման հնարավորությունները:<sup>32</sup> 2016թ. տարեվերջին ՀՀ

---

ջանքերով իրականացվող խաղաղ բանակցությունների ընթացքում ձեռքբերված կարևոր համաձայնությունները:

<sup>31</sup> Մենք այն էքսպերտային գնահատմամբ հաշվարկել ենք, սակայն որոշ նկատառումներից ելնելով, այդ թվում գաղտնիության առումով այն նպատակահարմար չենք համարում հրապարակել:

<sup>32</sup> Շանուցում գործընթացի վերբերյալ՝ ՀՀ վարչապետի այդ քայլով պայմանավորված հողվածի հեղինակը «Լոգիկա» գործարար և ֆինանսատնտեսական անկախ հետազոտությունների կենտրոն» ՀԿ-ի անունից սեպտեմբերի 19-ին գրությամբ և համապատասխան հիմնավորումներով դիմել է ՀՀ վարչապետին, որպեսզի կառավարությունում բոլոր շահագրգիռ մարմինների մասնակցությամբ քննարկվի ներկայացվող էլեկտրաէներգիայի և բնական գազի ակցիզային հարկը ՀՀ-ում ներդնելու հնարավորությունը, ելնելով վարչապետի համապատասխան հանձնա-



Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից հաստատվեցին բնական գազի և էլեկտրաէներգիայի նոր նվազեցված սակագները<sup>33</sup>:

Այդ նախաձեռնության և քայլերի առկայության դեպքում պահանջվում էր և շարունակվում է պահանջված մնալ այն հստակ և ճշգրիտ միջոցառումների ու լուծումների իրականացումը, որոնց միջոցով կպահպանվեն բոլոր կողմերի շահերը, այն է՝ պետության, տնտեսվարողների, քաղաքացիների և այդ ծառայությունները մատուցող օպերատորների: Գազի և էլեկտրաէներգիայի սակագների արդեն իրականացված իջեցումը հիմնականում ուղղված է նվազեցնելու սոցիալապես անապահով խավերի և բիզնեսի որոշ թիրախային ոլորտների ծախսերը, քանի որ դրանց ընդհանուր նվազումը չնչին է և էական ազդեցություն չունի

---

բարականից ու նաև 2017թ. բյուջեի կազմման վերջնական գործընթացից: Գրության պատասխանը ստացվեց երկու ամիս անց՝ նոյեմբերի 18-ին ՀՀ պետական եկամուտների կոմիտեից: Այդ թնօաքցում, ելնելով խնդրի կարևորությունից և դրա առկախված վիճակից, համապատասխան գրություններ են ուղղվել նաև ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար նախարարի առաջին տեղակալին, ՀՀ ֆինանսների և ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարներին: Դրական արձագանք է ստացվել վերջին կառույցի նախարարից, ով ի դեպ, հարցադրումը դրական է գնահատել տեսամեթոդաբանական առումով, քանի որ խնդիրը դուրս է իր ղեկավարած կառույցի գործնական կիրառության տիրույթից: Խնդրո առարկայի հետ կապված կառավարության ներսում տարբեր դիրքորոշումների առկայությունը արդեն իսկ վկայում է՝ հարցի կարևորության, ոչ միանշանակ ընկալման և այն մասնագիտական տիրույթում լրացուցիչ քննարկելու անհրաժեշտության մասին:

<sup>33</sup> «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի կողմից սպառողներին վաճառվող բնական գազի սակագները, հաստատված է ՀՀ ՀԾԿՀ-ի 25.11.2016թ., №333Ն որոշմամբ, որն ուժի մեջ են 2017թ. հունվարի 1-ից: «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի կողմից սպառողներին վաճառվող էլեկտրական էներգիայի սակագները հաստատված է ՀՀ ՀԾԿՀ-ի 23.12.2016թ., №422Ն որոշմամբ, որն ուժի մեջ է մտնում 2017թ. փետրվարի 1-ից, <http://psrc.am/am/sectors/gas/tariffs>, <http://psrc.am/am/sectors/electric/tariffs>

լայն շահառուների ծախսերի վրա: Մասնավորապես՝ գազի 1 խ/մ սակագինը բիզնեսի թիրախային ոլորտների և սոցիալապես անապահով խավի սպառողների համար կազմում է շուրջ 40 դրամ, որը էական է նրանց ծախսերը կրճատելու առումով:

Էներգակիրների ակցիզային հարկի ներդրումը ապահովելու առումով հարկ է շեշտել, որ այդ քայլը ստեղծում է նաև երկրորդ եզակի ու աննախադեպ հնարավորությունը, այն է՝ հարկային համակարգում ներմուծել էկոլոգիական հարկերի դոկտրինը, որը հարկային և ավելի լայն տնտեսական քաղաքականության մեջ դնում է բոլորովին նոր որակի խնդիրներ և լուծումներ, այդ թվում նաև լուծելով սոցիալապես անապահով խավերի անձանց և բիզնեսի որոշ թիրախային ոլորտների համար առավել հասցեական աջակցության խնդիրը: Հարկ ենք համարում շեշտել, որ նախկինում և ներկայում առկա բնապահպանական և բնօգտագործման հարկերի ու տուրքերի առկայությունը միտված է եղել բացառապես ֆիսկալ խնդիրների լուծմանը և ըստ այդմ դրանք գուրկ են եղել վերը նշված էկոլոգիական հարկերի հայեցակարգից կամ դոկտրինից և, բացի այդ, այն երբևիցե չի պարունակել բնական գազի և էլեկտրաէներգիայի ակցիզային հարկի առաջարկվող բաղադրիչը:

Իշխանությունների կողմից իրագործված գազի և էլեկտրաէներգիայի սակագնի նվազեցումը թույլ է տալիս, ինչ որ չափով, մեղմել հասցեական նպատակադրված՝ սոցիալապես անապահով անձանց և բիզնեսի թիրախային սուբյեկտների գազի և էլեկտրաէներգիայի ծախսերը: Առաջարկվող երկրորդ այլընտրանքը հարկային համակարգի էկոլոգացման ու դրա առաջին կարևոր քայլի՝ բնական գազի և էլեկտրաէներգիայի ակցիզային հարկի ներմուծումն է: Այն պարզագույն նորամուծությունն չէ, այլ հոչակում է հարկային քաղաքականության փիլիսոփայության փոփոխության նպատակադրումը և միտված է նոր որակ հաղորդելու ՀՀ-ում

առաջին անգամ ընդունված «ՀՀ Հարկային օրենսգրքին», որպեսզի, ինչպես վերը նշվեց, այն ուղղորդի տնտեսական զարգացումները առնվազն հնգամյա կամ ավելի երկար ժամանակահատվածում: Դրա հաշվին այն կապահովի այդքան անհրաժեշտ հարկային եկամուտների կտրուկ բարձրացումը, ընդ որում, տնտեսական խիստ նվազ ակտիվության պայմաններում և, ըստ էության, լուծում կտա փակուղային մի շարք խնդիրների՝ մաքսային սահմանի վրա ԱԱՀ գանձման պրակտիկայի դադարեցմանը, ԱԱՀ դրույքաչափի նվազեցման, եկամտահարկի պրոգրեսիվ դրույքաչափից հրաժարման (թվարկումը կարելի է շարունակել) և միաժամանակ բյուջետային նպատակային սուբսիդավորման միջոցով կլուծի նաև սոցիալական նշանակության առաջնահերթ խնդիրներ: Հարկային քաղաքականության էկոլոգացումը որոշակի առումով միտված է նաև էներգետիկ համալիրում առկա կոռուպցիոն դրսևորումների չեզոքացմանը, քանի որ էներգակիրների առաջարկվող հարկերը հակակառույցիոն պայքարի լրացուցիչ ազդակ ունեն:

Խնդրի հիմնավորման առումով հարկ է նշել այն բանաձևը, որին միաձայն հանգել են տեսաբաններն ու պրակտիկ քաղաքականություն իրագործողները, այն է՝ լավ է հարկել «վատ բաները»՝ սպառվող ռեսուրսների օգտագործումը, միջավայրի, այդ թվում՝ օդային ու ջրային ավազանների աղտոտումը, քան թե «լավ բաները»՝ աշխատանքը և կապիտալը: Այդ բանաձևի ջատագողների շարքում են Եվրամիության հանձնաժողովն ու ՏՀԶԿ-ի գլխավոր քարտուղարությունը, տնտեսագիտության մտքի այնպիսի մոհիկաններ, ինչպիսիք են՝ Միքայել Պորտերն ու Ջոզեֆ Մոիզիլիցը և աշխարհագրության սահմանափակում չունեցող շատ ու շատ այլ ծանրակշիռ հեղինակություններ:

Առաջարկվող մոտեցման կիրառման թերահավատության ու մտավախության հիմնական գործոններից մեկը վերաբերում է էներգակիրների հարկումը կիրառող երկրներ-

րի զարգացվածության մակարդակին, ուստի հարկ է նշել, որ դրա կիրառումը իրական «շահաբաժիններ» է բերել ոչ միայն Եվրամիության, այլ նաև այն կիրառող բոլոր երկրներին:

Անդրադառնանք խնդրո առարկայի ընդդիմախոսների այն հիմնական «հակափաստարկին» կամ, ճիշտ կլինի ասել, մտայնությանը, որ գազի և էլեկտրաէներգիայի ակցիզային հարկի ներմուծումը կբարձրացնի դրանց համար վճարվող ծախսերը և դրանց հետ կապված սպառման այլ ապրանքների գները: Միջազգային փորձը վկայում է, որ էլեկտրաէներգիայի և բնական գազի ակցիզային հարկերը տնտեսվարողներն ու բոլոր հարկատուները ընկալում են որպես էլեկտրաէներգիայի և բնական գազի սակագնի մաս, այն դիտարկելով որպես «միասնական սակագին» (սակագին գումարած հարկային դրույքաչափի): Տեսականորեն առկա է երկու այլընտրանք, էներգակիրների հարկերի ներմուծումը ա) բարձրացնում է գործող սակագներիի մակարդակը, բ) «միասնական սակագների» մակարդակը պահպանվում է գործող սակագների մակարդակի վրա: Մեր կողմից հիմնավորված է այն սկզբունքային մոտեցումը, որ էներգակիրների հարկերի ներմուծումը բազմաթիվ գործոնների և կարգավորիչ լծակների կիրառման միջոցով չպետք է բարձրացնի «միասնական սակագները» գործող սակագների համեմատ, որը հնարավորություն կտա առանց քաղաքական շահարկումների և հարկատուների մոտ բացասական սպասումների ներմուծել այդ հարկերը և դրանց միջոցով իրականացնել վերը նշված նպատակադրումները: Հարկ է շեշտել, որ այն պետության և տնտեսության համար կստեղծվի բոլորովին այլ իրավիճակ ու հնարավորություններ:

«Միասնական սակագնի» հարկային բաղադրիչի ազդեցությունը մեր կողմից գնահատվել է 1) հարկային մուտքերի առումով, 2) վերջնական սպառման ապրանքների գների վրա ազդեցության առումով, 3) հարկ վճարողների գործունեության և տնտեսության ռեսուրսատարության և

ծախաստարության ազդեցության առումով, այդ թվում կարճաժամկետ և երկարաժամկետ կտրվածքով: Նշված ազդեցությունների դրական և բացասական արդյունքների գնահատումը վկայում է, որ ՀՀ հարկային համակարգում ենթակիրների՝ էլեկտրաէներգիայի և բնական գազի ակցիզային հարկերի ներմուծումը չի դրսևորում գնահատելի էական բացասական ազդեցություններ, իսկ դրական ազդեցությունները ծանրակշիռ են և, հետևապես, դրանց ներմուծումը հիմնավորված ու արդարացված է:

Հարկային համակարգի էկոլոգացման ուղղությամբ իրականացվող այս քայլը նաև հնարավորություն կստեղծի, որպեսզի ՀՀ պետական բյուջեի առումով նպատակային խնդիրը ձևակերպվի ոչ թե որպես բյուջեի կայունության ապահովման, այդ թվում, արտաքին աճող պետական պարտքի սահուն սպասարկման հնարավորություն (ըստ ֆինանսների նախարարության մեկնաբանության), այլ խնդիրը տեղափոխվի բոլորովին այլ հարթություն: Այն է՝ դոնոր վարկավորող երկրներին հիմնավոր հայտ ներկայացի՝ պետական արտաքին պարտքի կրճատման խնդրով՝ «պարտքը բնապահպանության դիմաց» (Debt-for-Environment Swaps (DFES)) ձևաչափով, որը ինչպես վկայում է անցումային և զարգացող մի շարք երկրների փորձը, ներկայումս հանդիսանում է այդ խնդրի լուծման առավել արդյունավետ գործիքը<sup>34</sup>: Անցումային երկրներից այդ գործիքակազմի կիրառմամբ գործնական քայլեր են իրականացրել մասնավորապես՝ Լեհաստանը, Բուլղարիան, Վրաստանը և Ղրղստանը: Երրորդ երկրների շարքում են, մասնավորապես՝ Լատինական Ամերիկայի երկրները: 2016 թ. ապրիլին այդ ձևաչափով նախաձեռնությունը իրականացրել է

---

<sup>34</sup> Stu` Lessons Learnt from Experience with Debt-for-Environment Swaps in Economies in Transition, OECD, 2007, p. 16,

<https://www.oecd.org/environment/outreach/39352290.pdf>

Լատինական Ամերիկայի և Կարիբյան տարածաշրջանի համակարգող գլխամասը (Economic Commission for Latin America and the Caribbean Subregional Headquarters for the Caribbean)<sup>35</sup>:

Միջազգային պրակտիկայում «Պարտքը բնապահպանության դիմաց» կամ (DFES) ձևաչափի կիրառումը պարտապան երկրներին հնարավորություն է ընձեռում.

ա) կրճատել երկրի արտաքին պարտքը և այդ միջոցները ուղղել երկրի համար առաջնահերթ խնդիրների լուծմանը, որպես կանոն, դրա շրջանակներում դոնոր երկրները զիջում են պարտքի մայր գումարի զգալի մասը (գործնականում կեսը և ավելին),

բ) վարկատու երկրների հետ համաձայնեցված ծրագրերի կատարումը իրականացնել ազգային արժույթով,

գ) այդ ձևաչափով պահպանել մակրոտնտեսական կայունությունը և ի տարբերություն պարտքի մարման այլ ձևաչափերի չխթանել սղաճը,

դ) չնվազեցնել երկրի վարկունակության սուվերեն վարկանիշը և հետևապես չսահմանափակել ապագայում արտաքին պարտքի ներգրավումը և կամ դրա հետագա վերակառուցումը (ռեստրուկտուրիզացիան),

ե) ապահովել երկրի էկոլոգիական խնդիրների իրագործման օրակարգը, այդ թվում ստանձնած միջազգային պարտավորությունների շրջանակում,

---

<sup>35</sup> Sten, ' PROPOSAL ON DEBT FOR CLIMATE ADAPTATION SWAPS: A STRATEGY FOR GROWTH AND ECONOMIC TRANSFORMATION OF CARIBBEAN ECONOMIES, Economic Commission for Latin America and the Caribbean Subregional Headquarters for the Caribbean, Fourth meeting of the Caribbean Development Roundtable, 12 April 2016, [http://repositorio.cepal.org/bitstream/handle/11362/40253/LCCARL492\\_en.pdf?squence=1&isAllowed=y](http://repositorio.cepal.org/bitstream/handle/11362/40253/LCCARL492_en.pdf?squence=1&isAllowed=y)

զ) միաժամանակ լուծել սոցիալ-տնտեսական խնդիրների, մասնավորապես՝ աղքատության ծավալների կրճատումը, ի հաշիվ տեղական ռեսուրսների միջոցով նոր աշխատատեղերի ստեղծման և տեղական համայնքների համար կայուն եկամտի աղբյուրների ձևավորման:

Վերը նշվեց, որ սույն նախաձեռնության նպատակը հարկային քաղաքականության մեջ արմատապես նոր փոփոխության, այն է՝ հարկային համակարգի էկոլոգացման ներմուծումն է, որը նպատակաուղղված է հարկային եկամուտների էական աճի և միաժամանակ դրա դյուրին հավաքագրմանը, բնապահպանական խնդիրների սուբսիդավորման համար համարժեք միջոցների ձևավորմանը, բնապահպանական միջոցառումների ծավալների և արդյունավետության բարձրացմանը, ավանդական հարկերի հարկային բեռի նվազեցմանը՝ ի հաշիվ դրանց դրույքաչափերի նվազեցման և վարչարարության պարզեցման և, հետևապես, հարկային համակարգի ընդհանուր չեզոքության պահպանմանն ու, ըստ այդմ, հարկային բեռի հավասարաչափ ճնշման ապահովմանը:

Նշենք, որ առաջարկվող մոտեցումը հնարավորություն կստեղծի էապես բարձրացնել ՀՀ պետական բյուջեի հարկային եկամուտները, քանակապես այն գնահատվում է տարեկան 29-48 մլրդ. դրամ և ավելի չափով: Նշված մեծ և հնարավոր առավել մեծ միջակայքը պայմանավորված է դրա լուծման հայեցակարգով, մոտեցումներով, չափորոշիչներով ու կառուցակարգերով, որը մեկ այլ ընդարձակ ներկայացման խնդիր է: Համառոտ նշենք, որ էկոլոգացման բարեփոխումների կարևոր սկզբունքներն են աստիճանականությունը, ընտրողական կամ սելեկտիվ մոտեցումը և կանխարգելիչ բնույթը: Դրանք կոչված են ապահովելու:

ա) առևտրային և ոչ առևտրային ընկերությունների գործունեության կայունությունը,

բ) կանխելու արտադրության և ծառայությունների ծավալների անկումը,

գ) էկոլոգիական հարկերի բեռը սպառողների վրա փոխանցելու կանխումը,

դ) տնտեսվարողներին տեխնոլոգիական վերակառուցման համար համարժեք ժամանակի տրամադրումը:

Առաջարկվող մոտեցումների ներդրամաբ տնտեսվարողների մոտ գործի կորվի նորարարությունների հանդեպ ընկալունակ նախաձեռնողական խթաններ, մրցունակության հավասար հնարավորություններ, երկարաժամկետ գործունեության իրատեսական մղումներ ու դրա կանխատեսման ու պլանավորման կառավարման գործիքակազմը, որը կարգավորիչ ազդակներով ուղղորդված լինելով կառավարության կողմից, տնտեսվարողների համար կդառնա պահանջված, այլ ոչ թե պարտադրված և նոր որակ կհաղորդի երկրի տնտեսական աճին:

Հարկ է շեշտել, որ բազմավեկտոր և որոշ առումով հակադիր ուղղվածության ու առաջին հայացքից խիստ հավակնոտ նշված նպատակադրումները հիմնված են էկոլոգիական հարկերի տեսամեթոդական կուռ և փորձություններ անցած հիմքի և դրա կիրառական համարժեք գործիքակազմի վրա: Դրա մեթոդաբանական հիմքը, այսպես կոչված «կրկնակի շահաբաժինների» կամ (Double Dividend) տեսությունն է<sup>36</sup> (առաջ է քաշվել ամերիկայն տնտեսագետ Տալլոկի (Tullock) կողմից 1967թ. և երկարամյա քննադատություններից ու դեգերումներից հետո ամրագրել է իր անհերքելի ճշմարտությունը, առաջին հերթին, դրա անողոք ու ռիսերիմ քննադատների կողմից), վերջինս իր հերթին մեթոդապես հիմնված է արտաքին ազդեցու-

---

<sup>36</sup> Stu` William K. Jaeger 'The double dividend debate', [http://appliedecon.oregonstate.edu/sites/default/files/faculty/jaeger/chapter\\_12\\_jaeger\\_double\\_dividend\\_environmental\\_taxation\\_handbook.pdf](http://appliedecon.oregonstate.edu/sites/default/files/faculty/jaeger/chapter_12_jaeger_double_dividend_environmental_taxation_handbook.pdf)



թյունների դրսևորումների դասական տեսության վրա Պիգու (Pigou), Ալֆրեդ Մարշալ (Alfred Marshall) Concept of Externalities): Ըստ «կրկնակի շահաբաժինների» տեսության, այն մի կողմից ապահովում է էկոլոգիական խնդիրների արդյունավետ լուծումները և մյուս կողմից շահավետ կառուցակարգեր է ապահովում հարկային խնդիրների նպատակային լուծումների համար, և այդ հիմքով նպաստում է նաև տնտեսության մրցունակության մակարդակի բարձրացմանը:

ԵՄ-ի Հանձնաժողովի սահմանմամբ էկոլոգիական հարկը այն հարկն է, որի բազան հանդիսանում է ֆիզիկական միավորը (կամ դրա փոխարինողը) որն ունի ապացուցված բացասական ազդեցություն շրջակա միջավայրի վրա<sup>37</sup>: ՏՀԶԿ-ի մոտեցման հիմքում նույն հայտանիշն է, սակայն այն ավելի լայն է և որոշակիորեն արտահայտում է դրա տեսական բնորոշումը՝ հիմնված «կրկնակի շահաբաժին» (Double dividend) հայեցակարգի վրա, այն է՝ դրա արտաքին օգուտները՝ հարկման արդյունավետության, տնտեսության մրցունակության առումով և բնապահպանական խնդիրների լուծման առումով: Ըստ ՏՀԶԿ-ի մոտեցման, էկոլոգիական հարկերը բնորոշվում են որպես պարտադիր վճարումներ, որոնք գանձվում են շրջակա միջավայրի վրա վնասակար ազդեցություն ունեցող ապրանքների կամ գործընթացների համար, այնպես, որ այդ ապրանքի կամ գործընթացի շուկայական գինը առավել ճշգրիտ արտացոլի դրա բնապահպանական ծախսերը <sup>38</sup> : Միննույն ժամանակ, որպես հայտանիշ է

---

<sup>37</sup> Տե՛ս՝ Patrick ten Brink, Leonardo Mazza, REFORMING ENVIRONMENTAL TAXES AND HARMFUL SUBSIDIES: CHALLENGES AND OPPORTUNITIES, Institute for European Environmental Policy (IEEP), 2013, page 3, [http://www.ieep.eu/assets/1110/Background\\_paper\\_on\\_EFS\\_in\\_the\\_7th\\_EAP.pdf](http://www.ieep.eu/assets/1110/Background_paper_on_EFS_in_the_7th_EAP.pdf)  
Տե՛ս՝ Environmental Taxes, European commission, Eurostat, <http://ec.europa.eu/eurostat/web/environment/environmental-taxes>

<sup>38</sup> Տե՛ս՝ <sup>38</sup> Environmental Taxation. A Guide for Policy Makers, page1,

դիտվում այն, որ էկոլոգիական հարկերից առաջացած եկամուտները կարող են օգտագործվել այլ հարկերի, մասնավորապես՝ աշխատանքի հարկերի (եկամտային հարկի) նվազեցման համար և կամ նվազեցնել էկոլոգիապես շահավետ փոխարինող ապրանքների կամ գործընթացների առաջնային ծախսերը:

Իր հերթին, հարկային համակարգի էկոլոգացման միջազգային պրակտիկան տասնամյակներ արդեն իսկ վկայում է, որ այն զուտ տեսական հայեցողական մոտեցում չէ, այն դարձել է իրողություն և գործնականում ուղորդում է տնտեսական, բնապահպանական, սոցիալական զարգացումների հետազոտող, հիմնվելով իր տեսա-մեթոդական կուռ հիմքերի և արդյունավետությունը ապացուցած գործիքակազմի վրա (սկսած անցած դարի 70-ական թվականներից դրանք համարժեք և հետևողական արտացոլում են ունեցել Եվրամիության առանձին երկրների և ԵՄ-ի Հանձնաժողովի քաղաքականության գործիքակազմում): Այդ ուղին անցած երկրների շարքում են Եվրամիության, ներառյալ դրան նոր միացած Արևելյան Եվրոպայի անցումային երկրները, ինչպես նաև ՏՀԶԿ-ի երկրները: Ի դեպ, հարկային համակարգի էկոլոգացման քաղաքականությանը ոչ պակաս ուշադրություն է հատկացվում Եվրասիական տնտեսական միության երկրների, մասնավորապես՝ ՌԴ-ի, Բելառուսի և Ղազախստանի կողմից: Բնական է դրանց գործնական փորձն ու իրականացված քայլերը դեռևս համադրելի չեն առաջին խմբում նշված երկրների հետ, սակայն այս դեպքում կարևոր է քաղաքականության հայեցողական ուղղվածությունն ու մոտեցումը:

Հարկային համակարգի էկոլոգացման գործնական կիրառումը պահանջում է ՀՀ «Հարկային օրենսգրքում» հա-

մապատասխանաբար երկու նոր՝ «Էլետրաէներգիայի ակցիզային հարկը» և «Բնական գազի ակցիզային հարկը» բաժինների ներմուծում:

Ստորև համեմատական գնահատման կարգով ներկայացված է ՀՀ-ում երկու ձևաչափերով սպառողների համար բնական գազի և էլեկտրաէներգիայի գնի նվազեցման արդյունքներն ու հետևանքները: Առաջինը, սպառողների համար արդեն իսկ կիրառվող լուծումն է՝ բնական գազի և էլեկտրաէներգիայի դիֆերենցված կամ արտոնյալ և ոչ արտոնյալ սակագների կիրառումը, որը ընդունվել է ՀՀ Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից 2016թ. նոյեմբերին և դեկտեմբերին: Այս տարբերակը խոցելի ու անմրցունակ է հետևյալ հիմնավորումներով.

1. Կիրառվում է գազ և էներգակիներ ունեցող զարգացող երկրներում, մեթոդական առումով հանգում է բնափրային սուբսիդավորման ձևաչափին:

2. Մոտեցումը մերժելի է «հարկային ծախսերի» կառուցակարգի առումով: Հարկը զիջվում է արտոնյալ սակագներով ծառայություն մատուցելու դիմաց, որը քանակապես՝ ֆիսկալ, տնտեսական և սոցիալական արդյունքների առումով որևէ կերպ գնահատված չէ:

3. Կառավարությունը սուբսիդավորման կարևոր գործառույթը միջնորդված՝ տարբերակված սակագների ձևաչափով պատվիրակում է օտարերկրյա առևտրային՝ բնական մենաշնորհների ոլորտում գործող կազմակերպությունների՝ «Գազպրոմ Արմենիա»-ին, ինչպես նաև ՀԷՑ-ին: Կառավարության լիազորությունների պատվիրակումը մասնավոր կառույցներին, միջազգային պրակտիկայում, ընդունված ձևաչափ է (հատկապես հակակոռուպցիոն լուծումների առումով), սակայն այս դեպքում միաժամանակ առկա են մի քանի ռիսկեր, կապված՝ ա) պետության ֆինանսական վերաբաշխման անմիջական գործառույթի, բ) բնական մենաշնորհի ոլորտների, գ) ներգրավված սուբյեկտների

անմիջական տնտեսական շահը կապված պատվիրակվող գործառույթի հետ, գ) դրա վարչարարության ակնհայտ բարդացման հետ: Ըստ այդմ, կառավարությունը անհիմն կամավոր զիջում է իր ֆինանսական սուվերենությունը օտարերկրյա ընկերություններին: Դա կարող է խիստ բացասական ազդակ հանդիսանալ ՀՀ-ում օտարերկրյա ներդրողների համար:

4. Այն մերժելի է նաև բնափրային սուբսիդավորման ձևաչափի առումով, որի այլընտրանքը «կոնսոլիդացված սուբսիդավորումն է: Անապահով ընտանիքներին և թիրախային տնտեսվարողներին հատկացվող բնափրային սուբսիդավորող տրանսֆերը դրա հասցեատիրոջը (բացի գազի սպառումից) զրկում է այն այլ ուղղությամբ ծախսելու հնարավորությունից կամ «կոնսոլիդացված սուբսիդավորման» ձևաչափից, երբ ստացողի համար առկա է ծախսերի վերաբաշխման հնարավորությունը:

5. Նման ձևով տնտեսվարողների սուբսիդավորումը կառավարությանը զրկվում է մրցույթային սուբսիդավորման իրականացումից, որը հատկապես նպատահարմար է ՓՄՁ-ի նպատկային սուբսիդավորման դեպքում:

6. Կառավարության կողմից սուբսիդավորման ոլորտների առաջնահերթությունների և դրանց չափերի փոփոխության որոշման դեպքում նա պետք է խնդրանքով դիմի «Գազպրոմ Արմենիա»-ին, որն էլ իր հերթին դիմի ՀՕԿԱ-ին, որպեսզի սահմանվեն տարբերակված նոր սակագներ: Դրա նպատակահարմարությունը, մեղմ ասած, խելամիտ հիմնավորում չունի:

7. Տրամաբանորեն կառավարությունը, բացի սուբսիդավորման գործառույթի պատվիրակումից, առևտրային կազմակերպություններին ինչ որ չափով պատվիրակում է նաև սուբսիդավորվող կազմակերպությունների վերահսկողության կամ մոնիթորինգի գործառույթը, որն ընդունելի չէ,

քանի որ վերջիններս անմիջական շահ ունեն վերահսկողության բուն խնդրի և հարաբերությունների նկատմամբ:

8. Մոտեցման վարչարարությունը, ի սկզբանե, օբյեկտիվորեն խճճված ու բարդ է, ելնելով տարբեր կողմերի տարբեր վեկտորների վրա գտնվող շահերից՝ պետության, բաշխիչ ցանցերի՝ «Գազպրոմ Արմենիա»-ի, ՀԷՑ-ի և գազ ու էլեկտրաէներգիա սպառողների: Խնդիրը հանգում է «Գազպրոմ Արմենիա»-ի կողմից արտոնություններից օգտվող և դրանից չօգտվող սպառողների ծախսված գազի քանակի «գեպի» կամ ճեղքվածքի մեծացնելուն, որի արդյունքում արտոնություններից չօգտվող սպառողները ստիպված ավելի շատ են վճարելու:

9. «Գազպրոմ Արմենիա»-ն և ՀԷՑ-ը, որպես բիզնես ընկերություններ, շահույթը մեծացնելու առումով շահագրգռված են այս պահին և հետագայում կիրառել սակագնային գեղչերի համակարգ՝ կապված սպառողի կողմից գազի սպառման ծավալների հետ: Մինչդեռ, նշված առևտրային ընկերությունները մոտիվացիա չունեն տարբերակված սակագին կիրառել կարիքավոր անապահով անձանց, ջերմոցային տնտեսությունների, վերամշակող կազմակերպությունների համար: Դա պետության նպատակային քաղաքականության խնդիրներից է:

10. «Գազպրոմ-Արմենիա» ընկերության կողմից ցածր սակագների կիրառության ռեզերվներից մեկը պետության գործառույթների մեջ է, այն է՝ Վրաստանի տարածքով բնական գազի տարանցման գնի նվազեցումը: Մյուսը՝ ընկերության ֆինանսական ծախսերի օպտիմալացումը ներդրումային ծրագրերի վերանայմանը, բացի ընկերության կառավարման խնդիրը լինելուց միննույն ժամանակ և առավելապես ՀՀ Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի խնդիրն է: Հաջորդը, ընկերության բաժնետեր ռուսական «Գազպրոմ»-ի կողմից ՀՀ-ին բնական գազի սպառման շուկայի կայունացման և աճի միտումների խթանման

նպատակով ֆինանսավորումը, հիմնադրի այս պահի բիզնես կամքի դրսևրումն է: Այն վաղը կարող է 180 աստիճանով շրջվել, պատճառը էական չէ, և ոչ ոք ռուսական «Գազպրոմ» ընկերությանը չի կարող մեղադրել ինչ որ խախտումներում, քանի որ դա առևտրային ընկերության բիզնես որոշման արդյունք է և ոչ պայմանագրային պարտավորության խախտում:

11. Ընդդիմախոսների մյուս հիմնական փաստարկը այն է, որ ԵՏՄ-ի և ԵՄ-ի միություններում գազի և էլեկտրաէներգիայի ակցիզային հարկով հարկումը կիրառվում է միայն այն դեպքում, երբ բոլոր անդամ երկրները կիրառում են դա: Հարկային քաղաքականությունն ու հարկերի հավաքագրումը ԵՄ և ԵՏՄ-ի անդամ պետությունների ինքնիշխանության առանցքային հարցն է, այս ոլորտում անդամ երկրները միայն սահմանափակ լիազորություններ են պատվիրակում միությանը: Ի տարբերություն մաքսային ոլորտի, հարկային ոլորտին վերաբերվող փաստաթղթերը հանդիսանում են խորհրդատվական, շրջանակային և հայեցողական: Էներգակիրների հարկերի կիրառման հայեցակարգերը, մոտեցումները, կառուցակարգերը և հատկապես դրույքաչափերը ԵՄ-ի երկրներում խիստ տարբեր են:

Վերը նշված փաստարկները վկայում են բնական գազի և էլեկտրաէներգիայի սպառողների համար տարբերակված սակագների՝ արտոնյալ և ոչ արտոնյալ, կիրառումը խոցելի է, և անմրցունակ, քանի որ հիմնավորված չէ քանակական գնահատումներով, առաջացնում է բազմաթիվ բարդ և լուծում չունեցող հարցադրումներ, անդրադարձ չի կատարում երկարաժամկետ խնդիրներին: Ըստ այդմ, ստորև ներկայացվում է նախընտրելի տարբերակի՝ բնական գազի և էլեկտրաէներգիայի ակցիզային հարկի ներմուծման հիմնավորումները:

1. Մոտեցումը հիմնված է տեսամեթոդական հիմնավոր և անժխտելի հիմքի վրա (Duble Dividend) և լայնորեն ու

տասնամյակների (40 տարուց ավելի) ընթացքում կիրառվում է միջազգային պրակտիկայում:

2. Արդյունավետ է հատկապես այն երկրներում, որոնք չունեն եներգակիրների՝ նավթի, գազի պաշարներ և կախված չէ երկրի զարգացման մակարդակից:

3. Զգալի չափով, մի քանի տոկոսային կետով, արտահայտված բարձրացնում է հարկային եկամուտներ / ՀՆԱ հարաբերակցությունը, որը երկրի հարկաբյուջետային կառավարման գնահատման առավել կարևոր ցուցիչներից է:

4. Բոլոր վճարողների համար «գրոյական միասնական սակագինը» (սակագին գումարած հարկ) մնում է նույնը, հավաքագրման վարչարարությունը պարզ է և նվազ ծախսատար: Ընդդիմախոսները չեն ցանկանում նկատել դա, այն է՝ սակագին գումարած հարկ մեծությունը չի գերազանցում մինչ այդ գործող սակագինը, որի լուծման հիմքը տրվել է վարչապետ Կ. Կարապետյանի կողմից:

5. Պետությունը ստանում է լրացուցիչ զգալի հարկային եկամուտներ: ՀՀ պետական բյուջեի հարկային եկամուտները կաճեն տարեկան 29-48 մլրդ. դրամ և ավելի չափով:

6. Ի հաշիվ լրացուցիչ հարկային եկամուտների լուծվում են կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ խնդիրներ, մասնավորապես.

ա) նպատակային սուբսիդավորում են ստանում կարիքավոր անապահով անձինք և թիրախային տնտեսվարողները: Այն, ինչ նախատեսվում է իրականցնել բարդ տարբերակված սակագների միջոցով:

բ) լրացուցիչ հարկային եկամուտների հաշվին կարող են լուծվել, մասնավորապես՝ մաքսային սահմանի վրա ԱԱՀ գանձման կրճատումը և դրա վերացումը և կամ եկամտային հարկի պրոգրեսիվ դրույքաչափի փոխարինումը համաչափ դրույքաչափով և կամ ԱԱՀ դրույքաչափի նվազեցումը և կամ այլ առաջնահերթություններ:

գ) Հնարավոր կլինի անդրադառնալ պետական արտաքին պարտքի կրճատման արմատական լուծմանը, «պարտքը բնապահպանության դիմաց» (Debt-for-Environment Swaps (DFES)) ալգորիթմով (շեշտում ենք կրճատման):

7. Ակցիզային հարկի ազդեցության գնահատումը դրական է՝ 1) հարկային մուտքերի, 2) վերջնական սպառման ապրանքների գների վրա ազդեցության, 3) հարկ վճարողների գործունեության և տնտեսության ռեսուրսատարության և ծախսատարության ազդեցության առումով, կարճաժամկետ և երկարաժամկետ կտրվածքով:

8. ՀՀ Հարկային օրենսգրքի հիմքում կդրվի արմատապես նոր փիլիսոփայություն, կամ տնտեսական քաղաքականության խթանման բովանդակային բաղադրիչ, որը կապահովի հարկային եկամուտների էական աճ և դրանց դյուրին հավաքագրում, ավանդական հարկերի հարկային բեռի նվազեցում, հարկային համակարգի ընդհանուր չեզոքության պահպանում և, ըստ այդմ, հարկային բեռի հավասարաչափ ճնշման ապահովում:

9. Լուծվում է ֆիսկալ եկամուտների էական աճի խնդիրը, միաժամանակ ապահովվում է էկոլոգիական խմբի հարկերի չեզոքությունը և բոլոր հարկերի հավասարակշռությունը:

10. Բիզնեսը ապահովում է. ա) նորարարությունների հանդեպ ընկալունակ նախաձեռնողական խթաններ, բ) երկարաժամկետ գործունեության իրատեսական մղումներ, գ) մրցունակության հավասար հնարավորություններ:

11. Առաջարկվող լուծումը հնարավորինս հիմնվում է բոլոր կողմերի շահերի հաշվի առնման վրա և առաջացնում ցանկալի սիներգիկ կամ բազմապատիկ արդյունք:

12. Բնական գազի և էլեկտրաէներգիայի ակցիզային հարկի ձևաչափի ներդրումը նախընտրելի է և մրցունակ, քանի որ լուծում է առաջադրված խնդիրը, շրջադարձ է կատարում դեպի կառավարության և տնտեսության համար



կարևորագույն միջնաժամկետ և երկարաժամկետ խնդիրները:

13. Էկոլոգիական հարկերից (էներգակիրների խմբի) ստացվող եկամուտները իրենց բնույթով հաստատուն են, ենթակա չեն տատանումների, ի տարբերություն, սովորական հարկային եկամուտների: Դա պայմանավորված է նրանով, որ գազի և էլեկտրաէներգիայի ակցիզի հարկային եկամուտները հիմնված են սպառման վրա, որոնք «ցնդող չեն» ի տարբերություն այլ եկամուտների (կամ ՀՆԱ-ի աճի): Այսպիսով, էկոլոգիական հարկերից գեներացվող հարկային եկամուտները առավել նվազ հեղհեղուկ են և ունեն ցածր շեղումներ՝ համեմատած սովորական եկամուտների ու շահույթի հարկման (ՀՆԱ-ի նկատմամբ):

14. Ի վերջո առաջարկվող հարկումը կնպաստի ՀՀ վճարային հաշվեկշռի բարելավմանը ի հաշիվ՝

- ամբողջությամբ ներկրվող գազի հարկման, որը կմեղմի ճնշումը ՀՀ ԿԲ արտարժույթային պահուստների վրա,

- կխթանի արտահանող ոչ էներգետիկ ընկերությունների մրցունակության բարձրացումը և, հետևապես, նրանց արտահանման ծավալների աճը:

## ԱՍՓՈՓՈՒՄ

Հոդվածում բացահայտվել է ՀՀ-ում հարկային համակարգի էկոլոգիզացիայի նպատակադրման կարևորությունը, դրա տեսամեթոդական հիմքերը, միջազգային պրակտիկայում դրա կիրառության նպատակներն ու մոտեցումները: Համեմատական գնահատմամբ ներկայացվել է բնական գազի և էլեկտրաէներգիայի սակագների տարբերակված սակագների կիրառմամբ դրանց նվազեցումը և նույն էներգակիրների համար ակցիզային հարկի ներդրման սկզբունքային տարբերությունները և հիմնավորվել է ակցիզային հարկի ձևաչափի ներդրման առավելությունները՝

դրանց անմիջական շահառուների և գործընթացի բոլոր մասնակիցների համար:

**Արա Կարյան**

к.э.н., доцент ЕРОА

## ЭКОЛОГИЗАЦИЯ НАЛОГОВОЙ СИСТЕМЫ АРМЕНИИ – ЭКОМИЧЕСКИЕ ИМПЕРАТИВЫ

*Ключевые слова – экологические налоги, концепция "двойного дивиденда", акцизный налог на электроэнергию и природный газ, дифференцированные тарифы природного газа и электроэнергии для потребителей.*

В статье раскрыта важность целеполагания экологизации налоговой системы РА, представлены ее теоретически-методологические основы, цели и подходы ее применения в международной практике. Сравнительном формате оценено принципиальное отличие - снижения тарифов на природный газ и электроэнергию для потребителей посредством дифференцированных тарифов и внедрение на эти же энергоносители акцизного налога, обоснованы преимущества введения акцизного налога на природный газ и электроэнергию - для непосредственных выгодоприобретателей и всех других участников процесса.

**Ara Karyan**

Ph.D. in Economics, EREA

## **ECOLOGIZATION THE TAX SYSTEM OF ARMENIA – THE ECONOMICAL IMPERATIVES**

***Keywords** – environmental taxes, concept of «double dividend», of environmental taxes, excise tax on electricity and natural gas, differentiated tariffs on natural gas and electricity for consumers*

The article is disclose the importance of goal-setting of greening (or ecologization) of the tax system for the RA, presented it theoretical and methodological basis, objectives and approaches of its application in international practice. It presents comparative evaluation of core differencies between reduction of tariffs for natural gas and electricity to consumers through the differentiated tariffs and introduction on the same source of energies excise tax and justified advantages of the introduction of the excise tax on natural gas and electricity for immediate beneficiaries and all other participants of the process.

*Ներկայացվել է՝ 06.12.2018 թ.*

*Ընդունվել է տպագրության՝ 21.12.2018 թ.*

**Գնել Խաչատրյան**

«BDO Հայաստան», Աուդիտի ղեկավար, Գործարար ղեկավարման մագիստրոս, որակավորված երդվյալ հաշվապահ

**ԱՌԻԴԻՏԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐԻ  
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ՀՀ- ՈՒՄ  
2017-2018ԹԹ-ՆԵՐԻՆ**

*Հիմնաբառեր– Աուդիտի միջազգային ստանդարտներ (ԱՄՄ-ներ), անկախ աուդիտորի եզրակացություն, առանցքային աուդիտորական հարցեր, ցուցակված կազմակերպություն*

Այս հոդվածում կներկայացնենք ԱՄՄ-ներում վերջին տասնամյակում կատարված առավել նշանակալի զարգացման՝ անկախ աուդիտորի եզրակացության փոփոխության և առանցքային աուդիտորական հարցերի, կիրառումը ՀՀ-ում 2017-2018թթ-ներին:

Նաև կդիտարկենք բացահայտված բացերի պատճառները, և դրանց բարելավման վերաբերյալ կառաջարկենք միջոցառումներ:

***Անկախ աուդիտորի եզրակացության ձևի ու բովանդակության փոփոխություն***

Երկար ժամանակ ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ անկախ աուդիտորի եզրակացությունը ուներ խիստ ստանդարտ ձևաչափ և բովանդակություն՝ կազմելով մոտ երկու էջ, այն փաստարկմամբ, որ ֆինանսական հաշվետվություններ օգտագործողների համար այն լինի համադրելի և որքան հնարավոր է պարզ:

Սակայն աուդիտորի եզրակացության ձևաչափը և բովանդակությունը այլևս չէր բավարարում արդի օգտագործողների պահանջներին, և համաշխարհային ամենաբարձր

մակարդակով հնչում էին պահանջներ<sup>39</sup> աուդիտում նշանակալի փոփոխության վերաբերյալ<sup>40</sup>:

Աուդիտորի եզրակացությանն ուղղված քննադատություններին արձագանքելու նպատակով 2015թ.-ի հունվարին Հաշվապահների Միջազգային Դաշնության (ՀՄԴ) ներքո գործող Աուդիտի և Երաշխավորման Միջազգային Ստանդարտների Խորհուրդը (ԱԵՄՍԽ) հրապարակեց աուդիտի եզրակացությանը վերաբերող թարմացված և նոր ստանդարտները<sup>41</sup>.

- ԱՄՄ 700, Ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ կարծիքի ձևավորում և եզրակացության ներկայացում:
- ԱՄՄ 701, Առանցքային աուդիտորական հարցերի ներկայացումը անկախ աուդիտորի եզրակացությունում:
- ԱՄՄ 705, Անկախ աուդիտորի եզրակացությունում կարծիքի ձևափոխում:
- ԱՄՄ 706, Անկախ աուդիտորի եզրակացությունում հանգամանքի շեշտադրում և այլ հանգամանք պարբերություններ:
- ԱՄՄ 570, Անընդհատության հիմունք:
- ԱՄՄ 260, Հաղորդակցում կառավարման լիազոր անձանց հետ:

---

<sup>39</sup> “Audit under fire: a review of post-financial crisis enquires”, Association of Certified Chartered Accountants (ACCA), May 2011; by Ian Welch, Head of policy, ACCA, London, UK,

<http://www.accaglobal.com/content/dam/accaglobal/PDF-technical/publications/pol-af-auf.pdf>

<sup>40</sup> «Աուդիտի եզրակացության նշանակալի փոփոխությունը և ՀՀ-ում կիրառումը», Գնել Խաչատրյան, «Այլընտրանք» եռամսյա գիտական հանդես, 2017 #3. <<http://alternative.am>>

<sup>41</sup> “Handbook of International Quality Control, Auditing, Review, Other Assurance, and Related Services Pronouncements”, Jan 2015, International Auditing and Assurance Standards Board, <[www.iaasb.org](http://www.iaasb.org)>.

Նշված փոփոխությունների կիրառման ժամկետը ԱԵՄՄԽ-ի կողմից սահմանվել էր 15.12.2016թ.-ին կամ դրանից հետո ավարտված ժամանակաշրջանների ֆինանսական հաշվետվությունների աուդիտի դեպքում: Որով, ըստ էության, ՀՀ-ում այն պետք է կիրառվեր 01.01.2017թ.-ից հետո տրամադրվող աուդիտորական եզրակացությունների դեպքում:

Նշված ստանդարտների թարգմանությունները ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հրապարակվել են 2017թ.-ի սեպտեմբերին<sup>42</sup>:

### ***Նոր ստանդարտի կիրառումը ՀՀ-ում 2017թ.-ին և 2018թ.-ին***

Մեր կողմից ուսումնասիրվել է ՀՀ-ում գործող կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ 2017թ.-ին և 2018թ.-ին տրամադրված աուդիտորական եզրակացությունները, դիտարկելով, թե որքանով են դրանք համապատասխանում ԱՄՄ-ների նորացված եզրակացությանը:

Քանի որ ՀՀ-ում հրապարակված ֆինանսական հաշվետվությունները հաճախ ամբողջական չեն, և գուտ աուդիտորական եզրակացությունից հնարավոր չէ հետևություն կատարել իրականացված աուդիտի որակի կամ աուդիտի ընթացքում ձեռք բերված ապացույցների ու եզրահանգումներին համապատասխանության վերաբերյալ, ապա մեր կողմից դիտարկվել է միայն երկու հարց.

- ✓ Որքանով է հրապարակված եզրակացության ձևաչափը և բովանդակությունը ըստ էության համապատասխանում ԱՄՄ 700-ի պահանջներին, և

---

<sup>42</sup> «ՀՀ Կառավարության 29.12.2011թ.-ի N1931 որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին» ՀՀ Կառավարության 14.09.2017թ.-ի N1121 որոշում; <<http://www.minfin.am/hy/page/standartner/>>

- ✓ Արդյո՞ք աուդիտորական եզրակացությունը պարունակում է ԱՄՍ 701-ով պահանջվող «Առանցքային աուդիտորական հարցեր» պարագրաֆ:

Վերոնշյալ հարցերը սկզբում ուսումնասիրել ենք 2017թ.-ի աշնան ընթացքում, իսկ 2018թ.-ի հուլիսին նաև դիտարկել ենք 2018թ.-ին հրապարակված եզրակացությունները, որպեսզի կարողանանք հնարավոր բացահատված փոփոխությունների դեպքում կատարել եզրահանգումներ:

Կարևոր է նշել, որ ՀՀ-ում աուդիտորական եզրակացությունների մեծ մասը հրապարակվում է մարտ-հունիս ամիսներին, ուստի նշված վերլուծություններում ընդգրկվել են սովյալ տարվա հրապարակված աուդիտորական եզրակացությունների զգալի տոկոսը: Աուդիտորական եզրակացությունները հիմնականում արտահանել ենք հետևյալ կայքերում հրապարակումներից.

- ՀՀ պաշտոնական հայտարարությունների կայքում, [www.azdarar.am](http://www.azdarar.am), հրապարակված աուդիտորական եզրակացություններ,
- Արժեթղթերի շուկայում ցուցակված կազմակերպությունների հրապարակված աուդիտորական եզրակացություններ<sup>43</sup>:

Այդ կայքերից ընտրված կազմակերպությունները ներառում են տարաբնույթ ոլորտներ՝ բանկեր, վարկային ու ապահովագրական կազմակերպություններ, արտադրական էներգետիկ, հանքարդյունաբերական, հիմնադրամներ, ՀԿ-ներ և այլն:

ՀՀ-ում վերջին տարիներին գործում են մոտ 30 աուդիտորական ընկերություններ, այդ թվում համաշխարհային

---

<sup>43</sup> ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ Արմենիա-Ցուցակում-Թողարկողներ, <http://nasdaqomx.am/am/18/listing/23/issuers>

աուդիտորական կազմակերպությունների խոշոր տասնյակից համարյա բոլորը<sup>44</sup>:

Մեր կողմից նշված երկու կայքերից ընտրված կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտորի եզրակացությունները տրվել էին 25 աուդիտորական կազմակերպությունների կողմից, այդ թվում նաև միջազգային ցանցեր ներկայացնող բոլոր աուդիտորական կազմակերպությունների: Ուստի, այս առումով նույնպես այն բավականին ներկայացուցչական է:

***Նորացված եզրակացության ձևաչափի և բովանդակության կիրառում***

Աուդիտորական եզրակացության վերաբերյալ ուսումնասիրության հիմնական արդյունքները հետևյալն էին՝ յուրաքանչյուր տարվա 50-ական եզրակացությունների ամփոփման.

<b>Տրամադրված եզրակացության ձևաչափ</b>	<b>2017թ.</b>	<b>2018թ.</b>
Նոր ձևաչափով եզրակացություն	31	45
Կիրառվել է հին ձևաչափով եզրակացությունը, սակայն նշվել է համապատասխանություն ԱՄՄ-ներին	10	5
Կիրառվել է հին ձևաչափով եզրակացություն, սակայն նշվել է համապատասխանություն ՀՀ Կառավարության կողմից 2011թ.-ին հրապարակված աուդիտի ստանդարտներին	9	-
<b>Ընդամենը</b>	<b>50</b>	<b>50</b>

Որով, կարելի է եզրահանգել հետևյալը.

<sup>44</sup> Լիցենզավորված աուդիտորական ծառայություններ իրականացնող անձանց ցանկ, ՀՀ Ֆինանսների նախարարություն  
[http://www.minfin.am/hy/page/hh\\_taratsqum\\_licenzavorvats\\_auditorakan\\_tsar\\_ayutyunner\\_irakanacnogh\\_andzanc\\_cank/](http://www.minfin.am/hy/page/hh_taratsqum_licenzavorvats_auditorakan_tsar_ayutyunner_irakanacnogh_andzanc_cank/)



- 2018թ.-ին աուդիտորական եզրակացություններից 45-ում՝ 90%, կիրառվել է նոր ստանդարտի ձևաչափը, որը զգալի դրական տեղաշարժ է 2017թ.-ի 62%-ի համեմատ: Այս բարելավման փաստը տրամաբանական է, հաշվի առնելով որ 2017թ.-ի սեպտեմբերին ԱՄՄ-ների թարգմանությունը արդեն հրապարակվել էր, և աուդիտորական հանրության համար այս մասով 2017թ.-ի երկրորդ կեսին ու 2018թ.-ի առաջին կեսին կազմակերպվել էր բազմաթիվ դասընթացներ և իրազեկումներ:
- Հին ձևաչափը 2018թ.-ին շարունակվել է կիրառվել երկու տեղական աուդիտորական կազմակերպությունների կողմից, որոնք, հավանաբար մինչև այսօր, տեղյակ չեն ստանդարտներում փոփոխության մասին՝ չնայած բազում իրազեկումների և դասընթացների:
- 2017թ.-ին թարգմանության ուշացման հետ կապված առկա էր իրավական անորոշություն, թե արդյո՞ք կարելի է հայտարարել ԱՄՄ-ներին համապատասխանություն, եթե այն չի համապատասխանում ԱԵՄՄԻ-ի կողմից հրապարակված ԱՄՄ-ներին, սակայն համապատասխանում է ՀՀ-ում ԱՄՄ-ների գործող թարգմանությանը: Այս հարցը մանրամասն վերլուծված է մեր նախորդ տարի հրապարակված հոդվածում<sup>45</sup>, որտեղ հստակեցվում է, որ թարգմանության ուշացումը հիմք չէ ԱՄՄ-ներին համապատասխանություն նշելու դեպքում: Այլապես, ընդունելի է կատարել հղում հրապարակված թարգմանությանը համապատասխանությանը, որը և 2017թ.-ին կիրառ-

---

<sup>45</sup> «Աուդիտի եզրակացության նշանակալի փոփոխությունը և ՀՀ-ում կիրառումը», Գնել Խաչատրյան, «Այլընտրանք» եռամսյա գիտական հանդես, 2017 #3. <<http://alternative.am>>

վել է 18% դեպքերում, իսկ 2018թ.-ին նման փաստ մեր ուսումնասիրության ընթացքում չենք հանդիպել:

Այս ուղղությամբ ՀՀ-ում վիճակի բարելավման համար առաջարկում ենք.

1. Ժամանակին հրապարակել և ուժի մեջ դնել ԱՄՄ-ների նոր և փոփոխված ստանդարտները:
2. ԱՄՄ-ներում կատարվող փոփոխությունների վերաբերյալ ժամանակին իրազեկել աուդիտորական կազմակերպություններին և կազմակերպել դասընթացներ:
3. Արդյունավետ վերահսկողություն սահմանել աուդիտորների կողմից տրամադրվող եզրակացությունների նկատմամբ:

### ***Առանցքային աուդիտորական հարցերի կիրառում***

Համաձայն ԱՄՄ 701, կետ 8-ի, «Առանցքային աուդիտորական հարցերը նրանք են, որոնք, ըստ աուդիտորի մասնագիտական դատողության, առավել նշանակալի էին ընթացիկ ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվությունների աուդիտի ընթացքում»:

Հաշվի առնելով այս ստանդարտի կարևորությունը, սակայն, նաև կիրառման բարդությունը, ԱՄՄ 701-ը պարտադիր կիրառելի է ցուցակված կազմակերպությունների համար, ինչպես նաև կարող է կիրառվել այն դեպքերում, երբ աուդիտորն, ըստ իր դատողության, որոշում է ներկայացնել այն, կամ, երբ օրենքով կամ այլ իրավական նորմերով պահանջվում է նման ներկայացում:

Առանցքային աուդիտորական հարցերի կարևորության և կիրառման շրջանակի վերաբերյալ առավել մանրա-

մասն տեղեկատվությունը ներկայացված է մեր հետևյալ հոդվածում<sup>46</sup>:

Այս հարցի վերաբերյալ ուսումնասիրության արդյունքների ամփոփը հետևյալն է.

	2017 թ.	2018 թ.
Ուսումնասիրված ցուցակված կազմակերպությունների քանակը	20	16
Առողիտորական եզրակացությունում առկա էր «Առանցքային առողիտորական հարցեր» պարագրաֆ	4	10
Նախորդ բաժնում դիտարկված 50 ոչ-ցուցակված կազմակերպություններում «Առանցքային առողիտորական հարցեր» պարագրաֆի առկայություն	1	2

Որով, կարելի է եզրահանգել հետևյալը.

- 2018թ.-ին առկա է զգալի բարելավում ցուցակված կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ առողիտորական եզրակացությունում «Առանցքային առողիտորական հարցեր» պարագրաֆի ներառման մասով՝ 20%-ից հասնելով 60%-ի: Այս բարելավումը հավանաբար պայմանավորված է ստանդարտի թարգմանության առկայության և առողիտորական կազմակերպությունների կողմից ԱՄՄ 701-ի կիրառման վերաբերյալ գիտելիքների զարգացման հետ:

Սակայն, նշենք, որ այն կիրառվել է միայն ցուցակված բանկերի և վարկային կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աու-

<sup>46</sup> «Առանցքային առողիտորական հարցերի կիրառումը ՀՀ-ում», Գնել Խաչատրյան, «Ֆինանսներ և Բյուջե» ամսագիր, #9-10, 2017; <[https://www.fineco.am/?pg=view&vid=3830&sfx=\\_am](https://www.fineco.am/?pg=view&vid=3830&sfx=_am)>

դիտորական եզրակացություններում. քանկ կամ վարկային կազմակերպություն չհանդիսացող կազմակերպությունների աուդիտորական եզրակացությունում նման պարագրաֆ չի ներառվել, չնայած այդ պահանջը հատակ սահմանված է ԱՄՄ 701-ի կողմից:

- Ոչ ցուցակված կազմակերպությունների, այդ թվում քանկերի ու վարկային կազմակերպությունների, կամ ցուցակված այլ կազմակերպությունների դեպքում, ինչպես 2017թ.-ին, այնպես էլ 2018թ.-ին առանցքային աուդիտորական հարցեր համարյա չեն ներառվել:
- ԱՄՄ 701-ը խիստ կախված է աուդիտորական կազմակերպության կարողություններից, քանի որ այն պահանջում է բարձր ունակություններով աուդիտի ղեկավարի առկայություն: Ինչպես ուսումնասիրությունը ցույց է տալիս, միջազգային աուդիտորական ցանցի անդամ չհանդիսացող աուդիտորական կազմակերպության կողմից աուդիտորական եզրակացությունում «առանցքային աուդիտորական հարցեր» պարագրաֆի ներառումը հազվադեպ է հանդիպում:

Որով ԱՄՄ 701-ի անբավարար կիրառումը պայմանավորված է.

- Որոշ աուդիտորական կազմակերպությունների կողմից այդ պահանջի անտեսման կամ կիրառման ունակությունների բացակայությամբ:
- Աուդիտորների կողմից արտահայտված եզրակացության նկատմամբ անբավարար վերահսկողությամբ:
- Արժեթղթերի գործող շուկայի կարգավորողի կողմից աուդիտորական եզրակացությունների նկատմամբ անբավարար վերահսկողությամբ: Օրինակ, մեկ դեպքում, աուդիտորի եզրակացության փոխարեն ցու-

ցակված կազմակերպությունը հրապարակել է աուդիտորական նամակ-պարտավորագիրը:

- ԱՄՍ 701-ի կիրառման համար անհրաժեշտ իրավական հստակեցումների բացակայությամբ:

Կարծում ենք, հետևյալ միջոցառումները էապես կբարելավեն նշված թերությունները.

- արդյունավետ վերահսկողություն իրականացում հրապարակված աուդիտորական եզրակացությունների նկատմամբ:
- «Աուդիտորական գործունեության մասին» ՀՀ օրենքով հստակեցնել այն կազմակերպությունների շրջանակը, ի հավելումն ցուցակված կազմակերպությունների, օրինակ, բանկեր և այլ հանրային նշանակություն ունեցող կազմակերպություններ, որոնց համար առանցքային աուդիտորական հարցերի ներկայացումը աուդիտորի եզրակացությունում կլինի պարտադիր:
- Առաջարկել ՀՀ ԿԲ-ին սահմանել, որ բանկերի, վարկային կազմակերպությունների և ապահովագրական ընկերությունների աուդիտորական առաջադրանքում ներառվի պահանջ առանցքային աուդիտորական հարցերի ներկայացման վերաբերյալ՝ համաձայն ԱՄՍ 701-ի:

## ԱՄՓՈՓՈՒՄ

Սույն աշխատանքում ներկայացվել է ԱՄՍ-ներում նշանակալի փոփոխությունների, մասնավորապես՝ աուդիտորական եզրակացության ձևի ու բովանդակության, «առանցքային աուդիտորական հարցեր» պարագրաֆի, ՀՀ-ում 2017-18 թթ-ների ընթացքում կիրառման ուսումնասիրությունը: Ու-

սումնասիրության արդյունքները ցույց են տալիս, որ չնայած 2018թ.-ին առկա է զգալի դրական տեղաշարժ 2017թ.-ի համեմատ այդ կարևոր փոփոխությունների ՀՀ-ում կիրառման առումով, սակայն դեռևս առկա են նշանակալի բացեր: Նաև, առաջարկվում է նշված բացերի բարելավմանն ուղղված միջոցառումներ:

**Gnel Khachatryan**

Partner, 'BDO Armenia', MBA (US), ACCA (UK)

## **APPLICATION OF ISA DEVELOPMENTS IN REPUBLIC OF ARMENIA DURING 2017-2018**

***Keywords*** – *International audit standards (ISAs), independent auditor's report, key audit matters (KAM), listed entities*

This article presents the application of significant development in ISAs, particularly those related to auditor's report format and content and key audit matters (KAM), in the Republic of Armenia during years 2017 and 2018. The evaluation results reveal that though there is considerable positive changes in the implementing those developments in ISAs in year 2018 in relation to that of in year 2017, there is still significant drawbacks. Also, the related challenges in the Republic of Armenia and possible actions for improvement is presented.

**Гнел Хачатрян**

MBA (US), ACCA (UK),

Руководитель аудита, 'БДО Армения'

## **ПРИМЕНЕНИЕ ИЗМЕНЕНИЙ МЕЖДУНАРОДНЫХ СТАНДАРТОВ АУДИТА В РА В 2017-18гг.**

**Ключевые слова** – *Международные стандарты аудита (МСА), отчет независимого аудитора, ключевые вопросы аудита (КАМ)*

В этой статье представлено внедрение в РА в 2017-2018 годах значительное развитие международных стандартов аудита: изменение аудиторского отчета и ключевые вопросы аудита. Результаты оценки показывают, что, несмотря на значительные позитивные изменения в реализации этих событий в МСА в 2018 году в сравнение с 2017 года, все еще существуют существенные недостатки. Также представлены проблемы внедрение и возможные решения.

*Ներկայացվել է՝ 03.12.2018 թ.  
Ընդունվել է տպագրության՝ 21.12.2018 թ.*

**Նարինե Մելիքյան**

Կորպորատիվ Կառավարման Կենտրոնի ղեկավար, ս.գ.թ

## **ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ ՓՈՔՐ ՈՒ ՄԻՋԻՆ ՁՈՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ**

**Հիմնարատեր** – *կորպորատիվ կառավարում (ԿԿ), փոքր ու միջին ձեռնարկություններ*

Փոքր ու միջին ձեռնարկությունները (ՓՄՁ-ներ) շնորհիվ իրենց ճկունության, նորամուծություններին հակվածության և դրանք ընկալելու ունակության՝ շուկայական տնտեսության կայուն զարգացումն ապահովող գործուն կառուցակարգ են: ՓՄՁ-ները ակտիվացնում են տնտեսության կառուցվածքային փոփոխությունները, ձևավորում մրցակցային միջավայր, նպաստում շուկայական ենթակառուցվածքների

զարգացմանը, զբաղվածության հիմնախնդրի լուծմանը, բնակչության կենսամակարդակի և բարեկեցության բարձրացմանը, ձեռնարկատիրական «ոգու» զարգացմանը: Դրանք հատուկ դերակատարում ունեն սոցիալական լարվածության նվազեցման և միջին խավի ձևավորման հարցում:

Տնտեսական և սոցիալական կյանքում ՓՄՁ-ների դերակատարման շնորհիվ առանձնահատուկ կարևորվում են դրանց կենսունակությանը, մրցունակությանը, դրանցում ձեռնարկատիրական մշակույթի կայացմանն աջակցող գործիքները, որոնցից է կորպորատիվ կառավարումը: Եթե նախկինում կորպորատիվ կառավարումը դիտարկվում էր միայն խոշոր, ցուցակված ընկերությունների համար, ապա ժամանակակից միջազգային մոտեցումները կարևորում են դրանց կիրառումը նաև ՓՄՁ-ներում:

ՓՄՁ-ների համար ԿԿ գործիքների կիրառման պրակտիկան հատուկ է: Սրա համար հիմք է հանդիսանում այն, որ կորպորատիվ կառավարման սկզբունքները, կառուցակարգերը և գործիքակազմը ձևավորվել են խոշոր, ցուցակված ընկերությունների պրակտիկան հաշվի առնելով, և դրանք կարող են չարտահայտել ՓՄՁ-ների առանձնահատկությունները<sup>47</sup>: Միաժամանակ, եթե խոշոր, ցուցակված ընկերությունների կառավարման համակարգի ձևավորումն ի սկզբանե պայմանավորվում է տարբեր տեսակի կարգավորումներով, կորպորատիվ կառավարման կանոնադրերով, բորասայական ցուցակման պայմաններով, ապա ՓՄՁ-ները կորպորատիվ կառավարման իրենց համակարգը ձևավորելիս ինքնուրույն են և ունեն ստեղծագործելու ազատություն: ՓՄՁ-ների համար կորպորատիվ կառավարումը ինքնակարգավորման գործիք է: ՓՄՁ-ների կորպորատիվ կառավար-

---

<sup>47</sup> Governance for all: the Implementation Challenge for SMEs. The Association of Chartered Certified Accountants June 2015.



ման պրակտիկայի մեկ այլ առանձնահատկություն վերաբերում է բաժնետերերի (մասնակիցների) իրավունքների պաշտպանությանը: ՓՄՁ-ների համար այս հարցը, հատկապես հսկող բաժնետիրոջ իրավունքների պաշտպանության հետ կապված, առանձնակի սրություն չունի<sup>48</sup>: Խոշոր, ցուցակված ընկերություններում կորպորատիվ կառավարումն առնչվում է գործակալական հակամարտությունների խնդրի հետ, քանի որ կապիտալի սեփականատիրոջ (պրինցիպալի) և կապիտալը կառավարող անձանց (գործակալների) դերերի բաժանումն ակնառու է. Գործակալներն իրականացնում են ձեռնարկատիրական գործառույթներ, իսկ պրինցիպալները հանդես են գալիս կապիտալ մատակարարողների դերում: Չունենալով կառավարման պրոֆեսիոնալ հմտություններ՝ պրինցիպալները հաճախ օտարվում են ընկերությունների կառավարման և վերահսկման համակարգից, և դրանք փաստացիորեն կառավարվում և վերահսկվում են գործակալների կողմից, որոնք ընկերության ռեսուրսները կարող են օգտագործել ի նպաստ իրենց կամ պրինցիպալի շահերից տարբերվող այլ նպատակներով: Գործակալական հակամարտություններն իրենց հերթին աղբյուր են հանդիսանում գործակալական ծախսերի, որոնք ուղղվում են բաժնետերերի լավագույն շահերից գործելու ղեկավարների դիրքորոշումը խրախուսելուն և վերահսկելուն:

ՓՄՁ-ներում գործակալական հակամարտություններ, հատկապես զարգացման սկզբնական փուլերում, կարող են և չծագել, քանի որ բաժնետերերն անմիջականորեն ներգրավված են ընթացիկ կառավարման մեջ: Սակայն այստեղ հակամարտությունների աղբյուր կարող են հանդիսանալ ընկերության այլ շահառուների (աշխատակիցներ, գործըն-

---

<sup>48</sup> Corporate Governance Guidance and Principles for Unlisted Companies in Europe. First edition: March 2010. ecoDa. [www.ecoda.org](http://www.ecoda.org).

կերներ, հաճախորդներ, տեղական համայնքներ, շրջակա միջավայր և այլն) շահերը, այդ թվում՝ ընտանիքի անդամների կամ փոքր բաժնետերերի, ովքեր ակտիվորեն չեն մասնակցում բիզնեսի կառավարմանը: Նրանց շահերի պաշտպանվածությունը երաշխավորելու համար ՓՄՁ-ներում խնդիր է դրվում ներդնել կորպորատիվ կառավարման որոշակի կառուցակարգեր:

ՓՄՁ-ներում բաժնետերերը (մասնակիցները), որպես կանոն, իրենց բաժնետոմսերի (բաժնեմասերի) վաճառքի հետ կապված առնչվում են որոշակի սահմանափակումների հետ: ՓՄՁ-ների բաժնետոմսերը չեն գնանշվում և չեն վաճառվում ֆոնդային բորսաներում: Օրենսդրությունը սահմանում է դրանց վաճառքի որոշակի ընթացակարգ, որոշ կարգավորումներ կարող են նախատեսվել նաև բաժնետիրական համաձայնագրում: Բաժնետոմսերի իրացվելիության բացակայության պայմաններում բաժնետերը կարող է հայտնվել ընկերության «գերության» մեջ, ինչը ներդրումային ռիսկ է: Ի տարբերություն ցուցակված ընկերությունների բաժնետերերի՝ ՓՄՁ-ների բաժնետերերը չեն կարող անմիջապես վաճառել իրենց բաժնետոմսերը, եթե տարաձայնություններ ունեն ընկերության ռազմավարության, հաշվետվությունների, մատուցվող տեղեկատվության առնչությամբ: Արդյունավետ կորպորատիվ կառավարումը մեղմացնում է այդ ռիսկը: Այն երաշխավորում է բաժնետերերի իրավունքների պաշտպանվածությունն ու առաջնային լինելը, նպաստում դրանց իրացմանը, ապահովում հավասար վերաբերմունք բոլոր բաժնետերերի նկատմամբ, իսկ իրավունքների ոտնահարման դեպքում հնարավորություն է տալիս վերականգնել դրանք, նախատեսել ընկերությունից դուրս գալու եղանակներ, որոնք անվնաս են թե՛ ընկերության և թե՛ բաժնետիրոջ համար:

Այսինքն՝ ՓՄՁ-ներում կորպորատիվ կառավարման պատշաճ համակարգի ձևավորման համար խթան են հանդիսանում բաժնետոմսերի իրացվելիության ցածր մակար-

դակը և ներդրումային գրավչություն ապահովելու անհրաժեշտությունը<sup>49</sup>:

Կարևորելով կորպորատիվ կառավարման դերը ՓՄՁ-ների երկարաժամկետ զարգացման հարցում, Կորպորատիվ Կառավարման Կենտրոնը նախաձեռնել և իրականացրել է «Կորպորատիվ կառավարումը ՓՄՁ-ներում» հետազոտությունը: Հետազոտությունն իրականացվել է փորձագիտական հարցման միջոցով՝ «ձնագնդի մեթոդով» փորձագետների ընտրանքի ձևավորմամբ: Հարցմանը մասնակցել են 30 փորձագետներ: Հարցումն իրականացվել է 2018 թվականի ապրիլի 15-ից մայիսի 15-ը ընկած ժամանակահատվածում: Հարցման ժամանակ կիրառվել է ստանդարտացված հարցաթերթ:


Հետազոտությունը մեկնարկել է ՓՄՁ-ների զարգացման վրա ազդող արտաքին և ներքին գործոնների բացահայտման նպատակադրմամբ: Ինչպես հետևում է 1-ին գծապատկերից, փորձագետները որպես ՓՄՁ-ների վրա ազդող էական արտաքին գործոններ նշել են հետևյալ խնդիրները. կոռուպցիա, կաշառք, բյուրոկրատիա (75%), անարդարացի մրցակցային միջավայր (69%), տնտեսական անբարենպաստ իրավիճակ (69%): Հարկ է նշել, որ առանձնացված խնդիրները շաղկապված են և ՓՄՁ-ների վրա ունեն համալիր ազդեցություն: Կոռուպցիայի առնչությամբ մասնավոր հատվածի դերը դեռևս միանշանակ գնահատական չի ստացել: Շատերը մասնավոր հատվածին դասում են կոռուպցիայի հրահրման մեղավորների շարքին, քանի որ բիզնես հնարավորությունների ձեռքբերման մրցավազքում ընկերությունները կարող են գործարքի մեջ մտնել իրենց խղճի հետ և ներքաշվել կոռուպցիոն սխեմաներում: Սակայն չի բացառվում

---

<sup>49</sup> Corporate Governance Guidance and Principles for Unlisted Companies in Europe. First edition: March 2010. ecoDa. [www.ecoda.org](http://www.ecoda.org).


նան բիզնեսի գոհի կարգավիճակը, որն առավելապես վերաբերում է ՓՄՁ-ներին: Ունենալով բավական համեստ ֆինանսական միջոցներ՝ նրանք մրցունակ չեն մասնակցել կոռուպցիոն սխեմաներում կամ, եթե մասնակցում են, գրկվում իրենց երկարաժամկետ զարգացման համար կենսական նշանակություն ունեցող միջոցներից՝ փոխարենը ստանալով կարճաժամկետ և միայն պահի դրությամբ նշանակություն ունեցող հաղթանակները: Հետևաբար, ՓՄՁ-ների զարգացման և ընդհանրապես բիզնես միջավայրի առողջացման հարցում էական է կոռուպցիայի նկատմամբ համակարգային զրո հանդուրժողականության ստանձնումը:

**Գծապատկեր 1. ՓՄՁ-ների վրա ազդող արտաքին խնդիրները**




Ինչ վերաբերում է ներքին գործոններին, ապա փորձագետներն առանձնացրել են խնդիրներ, որոնք անմիջականորեն վերաբերում են ՓՄՁ-ների կառավարման համակարգին (երկարաժամկետ զարգացման տեսլականի բացակայություն (71%), կառավարման համակարգում իշխանության կենտրոնացում (68%) և այլն): Սրանով փորձագետներն ընդգծել են կորպորատիվ կառավարման կարևորությունը ՓՄՁ-ներում:

## Գծապատկեր 2. ՓՄՁ-ների վրա ազդող ներքին խնդիրները




Անհրաժեշտ է նշել, որ ԿԿ իրենց համակարգը ձևավորելիս ՓՄՁ-ները խոշոր, ցուցակված ընկերությունների համեմատ ունեն առավելություններ: Փորձագետները, որպես նման առավելություններ, նշել են ՓՄՁ-ների ճկունությունը (84%), որոշումների ընդունման օպերատիվությունը (74%), ստեղծագործելու ազատությունը (61%) (զժ. 3):

## Գծապատկեր 3. ՓՄՁ-ների առավելությունները կառավարման համակարգը ձևավորելիս



Այն հարցին, թե ինչ օգուտներ կարող է տալ պատշաճ կորպորատիվ կառավարումը, փորձագետները մեկ անգամ ևս հավաստել են, որ կորպորատիվ կառավարումը ինքնապատակ գործընթաց չէ: Դրա գործիքների նկատմամբ պրագմատիկ և ճկուն մոտեցումները կարող են ապահովել շոշափելի արդյունքներ՝ ներդրումների և գործընկերների մատչելիության, գործունեության արդյունավետության բարձրացման, գործարար համբավի ու հեղինակության ամրապնդման տեսքով:

**Գծապատկեր 4.** Կորպորատիվ կառավարման հիմնական օգուտները ՓՄՁ-ներում



Փորձագետների գերակշիռ մեծամասնությունը (94%) հայտնել է իր համաձայնությունն առ այն, որ ՓՄՁ-ների կառավարման համակարգի ձևավորումը փուլային է: Պրակտիկան վկայում է, որ ՓՄՁ-ների կառավարման համակարգի էվոլյուցիոն զարգացման փուլերն են<sup>50</sup>.

1. **բիզնեսի կայացումը.** այս փուլում կորպորատիվ կառավարման համակարգում հիմնադրի<sup>51</sup> լրջագույն

<sup>50</sup> Ն. Մելիքյան, Ա. Զիլինգարյան, Խ. Ցոկոլակյան, «Կորպորատիվ կառավարումը ՓՄՁ-ներում» ձեռնարկ, 2018

ներդրումն են ընկերության առաքելության, տեսլականի, ռազմավարական զարգացման ուղղությունների սահմանումը, կորպորատիվ արժեքների որդեգրումն ու դրա շուրջ համախոհների թիմի ձևավորումը.

2. **ակտիվ աճը կամ բիզնեսի պրոֆեսիոնալացումը.** փուլի ընթացքում կորպորատիվ կառավարման համակարգում հիմնադիրը պետք է լուծի ընկերություն պրոֆեսիոնալների մուտքի ապահովման, պարտականությունների պատվիրական մշակույթի ձևավորման, կորպորատիվ «խաղի կանոնների» սահմանման, հակակշիռների և զսպումների համակարգի համար նախադրյալների ձևավորման խնդիրները.

3. **կազմակերպական զարգացումը,** որի ընթացքում հիմնադրի խնդիրն է կորպորատիվ կառավարման գործիքների միջոցով ապահովել պայմաններ նախորդ փուլերի ձեռքբերումները որակապես զարգացնելու և կորպորատիվ կառավարման հիմքերն ամրապնդելու համար.

4. **պատշաճ կառավարման** փուլում հիմնադրի ամենալուրջ ներդրումն է տնօրենների խորհրդի ձևավորումը, որն իր վրա է վերցնում ՓՄՁ-ի երկարաժամկետ առաջնորդման պատասխանատվությունը:

Փուլերի նկարագրությունը վկայում է, որ ՓՄՁ-ներում կորպորատիվ կառավարման պատշաճ համակարգի ձևավորման բեռն ընկնում է հիմնադրի վրա: Մա հիմնադրի լրջագույն ներդրումն է ընկերության առողջության և երկարակեցության մեջ:

Մրա հետ համաձայնել են հարցված փորձագետների շուրջ 80%-ը:

---

<sup>51</sup> Հոդվածում «հիմնադիր» եզրն օգտագործվում է սեփականության և կառավարման միասնականությունը, հսկող բաժնետիրոջ/մասնակցի հավաքական կերպարը ներկայացնելու և կառավարման որակի համար նրա պատասխանատվությունը շեշտադրելու նպատակով:

Հարկ է նշել, որ ներկայացված փուլերի հերթափոխումը տարբեր ընկերությունների մոտ տարբեր կերպ է ընթանում: Սա խիստ անհատական գործընթաց է: Մի փուլից մյուսին անցումն ամենևին էլ չի պայմանավորվում ընկերության գործունեության տարիներով: Ռազմավարական տեսլականի և կորպորատիվ կառավարման պատշաճ հանձնառության առկայությամբ ու համապատասխան ջանքերի շնորհիվ՝ պատմականորեն կարճ ժամանակահատվածում ընկերությունը կարող է հաղթահարել աճի դժվարությունները և իր համար բացահայտել զարգացման նոր հնարավորություններ: Հնարավոր է նաև, որ ընկերությունը տարիներ շարունակ պտտվի առաջին փուլի ուղեծրի շրջանակներում և երբևէ ի վիճակի չլինի հաղթահարել այն:

Առաջընթացը հնարավոր է դառնում, երբ ռազմավարական տեսլականը և կորպորատիվ կառավարման պատշաճ հանձնառությունը վեր են ածվում իրատեսական գործողությունների, և «փոքր քայլերի» մարտավարությամբ ընկերությունը կարողանում է հաղթահարել դեպի հաջողություն տանող ճանապարհը:

ՓՄՁ-ների կառավարման համակարգը բարելավելիս անհրաժեշտ է բավականին նրբանկատորեն մոտենալ կորպորատիվ կառավարման գործիքներին, ըմբռնել սովյալ պահի դրությամբ ընկերության կարիքները, գնահատել այդ գործիքներից օգտվելու հնարավոր արդյունքները և խուսափել կառավարման համակարգն անհարկի ծանրաբեռնելուց, քանի որ դա ոչ միայն չի օգնում ընկերությանը լուծել իր առջև ծառայած խնդիրները, այլև հիասթափություն է առաջացնում՝ կիրառված գործիքի ոչ օգտակար լինելու հանգամանքով պայմանավորված: Ամեն ինչ ունի իր ժամանակը, կորպորատիվ կառավարման գործիքները ևս ունեն իրենց ժամանակը:

ՓՄՁ-ներում ԿԿ սկզբունքների ներդրումը և դրանից շոշափելի արդյունքներ ակնկալելը ևս երկարատև գործըն-



թացներ են: Դա պահանջում է նպատակաուղղված ու մոտիվացված գործողություններ, որոնք օգնում են ՓՄՁ-ներին ոչ թե սահմանափակվել կորպորատիվ կառավարման առանձին քաղաքականության կամ ընթացակարգի ընդունմամբ, այլ կատարելագործել ընկերության կառավարման համակարգն ամբողջապես, ըմբռնել այդ համակարգի գրավչությունը արտաքին ներդրողների և շահառուների համար, դրա նշանակությունը մրցունակ պայքարում դիմակայելու և աճի հարցում, այսինքն՝ ստանձնել կորպորատիվ կառավարման հանձնառություն և ունենալ կամք այն իրագործելու համար: Հիմնադիրները, որոնք պատասխանատու են առանցքային որոշումների համար, պետք է համոզված լինեն, որ կորպորատիվ կառավարման գործիքների ներդրումը ընկերությունում կարևոր նշանակություն ունի գործունեության արդյունավետության բարձրացման հարցում, դա պետք է իրականացվի իրապես և ընկերության զարգացմանը համամասնորեն:

**Нарине Меликян**

Руководитель Центра Корпоративного Управления, к.э.н.

## **КОРПОРАТИВНОЕ УПРАВЛЕНИЕ В МАЛЫХ И СРЕДНИХ ПРЕДПРИЯТИЯХ**

***Ключевые слова** – корпоративное управление, малые и средние предприятия*

Малые и средние предприятия (МСП) являются действенным механизмом, обеспечивающий стабильное развитие рыночной экономики. В экономической и социальной жизни любой страны важное значение приобретают инструменты, способствующие жизнеустойчивости,

конкурентоспособности МСП и формированию в них предпринимательской культуры. Подобным инструментом является корпоративное управление.

В МСП практика внедрения инструментов корпоративного управления отличается. МСП самостоятельны при формировании собственных систем корпоративного управления и имеют свободу для действий. Для МСП корпоративное управление - инструмент самоконтроля.

Центр Корпоративного Управления инициировал и реализовал исследование “Корпоративное управление в МСП”, которое проводилось с 15 апреля по 15 мая 2018г. с помощью экспертного опроса. Выборка экспертов была сформирована “методом снежного кома”. При опросе была использована стандартизированная анкета.

Подчеркивая важность корпоративного управления в МСП, эксперты выразили свое согласие на то, что формирование системы корпоративного управления в МСП должно быть поэтапным. Они также подчеркнули, что при улучшении системы управления МСП следует довольно деликатно подходить к инструментам корпоративного управления, осознать потребности компании и избежать ненужных перегрузок системы управления. Последнее не только не помогает компании разрешить свои проблемы, но и вызывает разочарование из-за того, что используемый инструмент бесполезен.

Внедрение принципов корпоративного управления в МСП и ожидание ощутимых результатов являются долгосрочным процессом. Это требует целенаправленных и мотивированных действий в первую очередь со стороны учредителя.

**Narine Melikyan**

Head of the Corporate Governance Center, Ph.D. in Economics

## **CORPORATE GOVERNANCE IN SMALL AND MEDIUM ENTERPRISES**

***Keywords** – corporate governance, small and medium enterprises*

Small and medium enterprises (SMEs) form an effective mechanism ensuring a sustainable development of the market economy. Due to the role of SMEs in economic and social life, tools supporting their vitality, competitiveness and maintenance of entrepreneurial culture in them are given special importance. Corporate governance is one of them.

The practice of implementing corporate governance tools for SMEs is special. When forming their corporate governance system, SMEs are independent and have freedom of creation. Corporate governance is a self-regulatory tool for SMEs.

The Corporate Governance Center initiated and conducted the survey “Corporate Governance in SMEs”. The survey was conducted through expert poll using 'snowball method' to select experts. 30 experts participated in the survey. The latter was conducted from April 15 to May 15, 2018. A standardized questionnaire was used during the survey.

Highlighting the importance of corporate governance in SMEs, the experts gave their consent for step-by-step formation of governance system of SMEs.

When improving the governance system of SMEs, corporate governance tools need quite a careful approach, comprehension of company needs at the particular moment and avoidance of unnecessary overloading of governance system, because it not only prevents the company from solving its problems, but it also

causes disappointment conditioned by the uselessness of implemented tools.

The implementation of corporate governance principles in SMEs and the expectation of tangible results from them are long-term processes. They require focused and motivated actions primarily on the part of the founder.

*Ներկայացվել է՝ 04.12.2018 թ.  
Ընդունվել է տպագրության՝ 21.12.2018 թ.*

### **Վանո Ղազարյան**

Ասպիրանտ, ՀԱ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան տնտեսագիտության  
ինստիտուտ

## **ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԽԹԱՆՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ**

***Հիմնաբառեր** – շահութարկի արտոնություններ, հարկային օրենսգիրք, ներդրումների շահութաբերություն, ներդրումներից հարկեր:*

Ներդրումների իրականացումը ցանկացած երկրում հանգեցնում է տնտեսավարման ակտիվացմանը և կայուն զարգացմանը: Ընդ որում, ցանկացած պարագայում ներդրումային ծրագրերն իրենց սոցիալ-տնտեսական հետևանքներն են թողնում ինչպես տնտեսության միկրո, այնպես էլ մակրո մակարդակներում: Փորձը ցույց է տալիս, որ ներդրումների նկատմամբ պետությունը ցույց է տալիս առանձնա-

հատուկ կարգավորման քաղաքականություն<sup>52</sup>, քանի որ եթե միկրոմակարդակում ներդրումները դիտարկվում են գործարարության ընդլայնման կամ ակտիվացման տեսանկյունից, ապա մակրոմակարդակով դրանց կառավարումը խնդիր է դնում որոշելու ներդրումների մուլտիպլիկացիոն էֆեկտը, արդյունավետության դրսևորումները ոչ միայն կոնկրետ ոլորտում, այլև դրան հարող տնտեսական այլ հատվածներում:

Տնտեսության միկրո մակարդակում ներդրումները հիմնականում դրսևորվում են հիմնականում մի շարք արդյունքներով, ինչպիսիք են.

- ընթացող արտադրության ընդլայնումը և զարգացումը՝ ապահովելով եկամուտների աճ և ձեռնարկատիրական գործունեության կայուն մակարդակ,
- արդեն իսկ բարոյական և ֆիզիկական մաշվածություն ունեցող ոչ ընթացիկ ակտիվների վերափոխումը նորերով,
- արտադրության տեխնիկական մակարդակի բարձրացումը, կիրառելով տեխնոլոգիական նոր լուծումներ,
- մրցունակ ապրանքատեսակների արտադրություն և ծառայությունների մատուցումը
- ապրանքների և ծառայությունների որակի բարձրացում և նոր շուկաների ձեռքբերումը:<sup>53</sup>

Տնտեսության մակրոմակարդակով օտարերկրյա ուղղակի ներդրումները պատճառահետևանքային ազդեցություն են ունենում մի շարք ոլորտներում, ինչպիսիք են.

- մակրոտնտեսական մասշտաբով ընդլայնված վերարտադրության քաղաքականության իրականացումը

---

<sup>52</sup> Պողոսյան Ս., «Ներդրումների կառավարման հիմնախնդիրները զբոսաշրջության ոլորտում», «Հայաստան, ֆինանսներ և էկոնոմիկա», #3(153), մարտ, 2013 թ., էջ 12-13:

<sup>53</sup> Кузяев К. Прямые иностранные инвестиции::начало экономического чуда? // Общество и экономика. 2007. №4. С. 38-44.

- նորամուծությունների խթանումը՝ ուղղված որակի բարձրացմանը և մրցունակության ապահովմանը,
- տնտեսության տարբեր հատվածների զարգացման հավասարակշռության ձգտումը,
- բյուջետային մուտքերի ավելացմամբ՝ պետության սոցիալական գործառույթների իրականացման աջակցումը:<sup>54</sup>

«Օտարերկրյա ներդրումների մասին» ՀՀ օրենքը ներկայացնում է մեր հանրապետությունում ներդրումների հիմնական տեսակները, որոնք կարող են լինել ինչպես գույքային, ոչ նյութական ակտիվների, այնպես էլ դրամային կամ արժեթղթերի տեսքով (տես գծապատկեր 1): Ընդ որում, ՀՀ օրենսդրությամբ սահմանվում է օտարերկրյա ներդրումների իրականացման երաշխիքներ, որոնք վերաբերում են ակտիվների պաշտպանվածությանը, դրանց ազգայնացման և բռնագանձման ապահովագրությանը, օտարերկրյա կապիտալի ազատ տեղաշարժերին և այլն:<sup>55</sup>



<sup>54</sup> Иностранные инвестиции: Учебное пособие / Хазанович Э.С. — М.:1. Кнорус, 2009. С. 105-106

<sup>55</sup> «Օտարերկրյա ներդրումների մասին» ՀՀ օրենքը, 1994

**Գծապատկեր 1.** Օտարերկրյա ներդրումների հիմնական տեսակները ՀՀ-ում<sup>56</sup>

Դրան զուգահեռ, մասնագիտական գրականության մեջ ընդգծվում է, որ ՕՈՒՆ-ների ներգրավման հարցում լուրջ մակրոտնտեսական մարտահրավեր է հանդիսանում նաև հարկային ճկուն քաղաքականության իրականացումը: Մի կողմից, ՕՈՒՆ-ների ակտիվացմամբ, ընդունող երկրում արձանագրվող տնտեսական աճը հանգեցնում է լրացուցիչ հարկող եկամուտների աճի մի շարք հարկատեսակների գծով, ինչպիսիք են.

➤ շահութահարկը, քանի որ ձևավորվում են նոր արտադրություններ, ծառայությունների մատուցման ոլորտներ, որոնց գործունեությունը ուղեկցվում է հարկային հետևանքներով,

➤ եկամտային հարկը, քանի որ ներդրումների հետևանքով ձևավորվում են նոր աշխատատեղեր և վճարվող աշխատավարձի հավելած, անուղղակի հարկեր (ավելացված արժեքի հարկ, ակցիզային հարկ), քանի որ ներդրումների արդյունքում աճում է ապրանքաշրջանառությունը, աճում են արտադրանքի վաճառքի և ծառայությունների մատուցման ծավալները:<sup>57</sup>


Սակայն, մյուս կողմից, պետությունը ձգտում է օտարերկրյա ներդրումների գծով հնարավորինս սահմանել հարկային և մաքսային արտոնություններ, ավելի շատ ձգտելով

---

<sup>56</sup> Կազմված է հեղինակի կողմից:

<sup>57</sup> Պետրոսայան Ա., Գրկնակի հարկման կարգավորման բարելավման ուղիները ՀՀ ներդրումային ծրագրերում, //Սյլընտրանք, 2016, էջ 99-101

ոչ թե հարկերի գանձապետական (ֆիսկալ), այլ խթանիչ գործառույթների իրականացմանը (տես գծապատկեր 2): Եվ ստացվում է այնպես, որ անհրաժեշտություն է առաջանում գնահատելու ներդրումային գործունեության հարկային արտոնությունների արդյունքում բյուջե «թերհավաքագրված հարկերի» հիմնավորվածությունը, այսինքն վերլուծելու ներդրումների գծով հարկային քաղաքականության արդյունավետությունը:




**Գծապատկեր 2.** Տնտեսավարման համակարգում հարկերի գործառույթները<sup>58</sup>

Հատկանշական է, որ ներկայումս ՀՀ-ում պետությունը ներդրումների գծով թիրախավորում է հարկային այնպիսի գործիքների կիրառումը, որոնք նպաստում են նաև ներդրումների կարգավորիչ գործառույթների իրականացմանը: Այսպես, ՀՀ գործում է սահմանամերձ բնակավայրերում

<sup>58</sup> Կազմվել է հեղինակի կողմից:



հարկային արտոնություններ սահմանելու մասին օրենք<sup>59</sup>, որը նպատակ է հետապնդում աջակցելու ներդրումային քաղաքականության ակտիվացմանը և դրանով իսկ մարզերի համաչափ զարգացմանը:



**Գծապատկեր 3.** Օտարերկրյա ներդրումների խթանման օրենսդրական ուղիները ՀՀ-ում<sup>60</sup>

Ընդ որում, ՀՀ հարկային օրենսդրությունը ներդրումների խթանման առումով չի սահմանափակվում միայն սահ-

<sup>59</sup> «Սահմանամերձ բնակավայրերում իրականացվող գործունեությունը հարկերից ազատելու մասին» ՀՀ օրենքը, 2014

<sup>60</sup> Կազմվել է հեղինակի կողմից:

մանամերձ բնակավայրերով, այլ տրամադրում է նաև հարկային և մաքսային համընդհանուր որոշակի արտոնություններ (տես գծաստկեր 3): Այսպես, ԱԱՀ-ից ազատվում է ՀՀ կառավարության հավանությանն արժանացած ծրագիր իրականացնող ռեզիդենտ շահութահարկ վճարողների խմբի կողմից ԵՏՄ անդամ չհամարվող պետություններից ՀՀ տարածք ապրանքների ներմուծումը, եթե այդ ապրանքները կամ դրանց վերամշակման արդյունքում ստացված ապրանքները ներմուծման օրվանը հաջորդող 180 օրվա ընթացքում արտահանվում են:<sup>61</sup>

Շահութահարկի գծով գործող օրենսդրական դաշտում նույնպես առկա են դրույթներ, որոնք նպաստում օտարերկրյա ներդրումների խթանմանը: Այսպես, եթե շահութահարկի դրույթաչափը, որպես կանոն, սահմանված է 20%, ապա առանց մշտական հաստատության ՀՀ-ում գործունեություն իրականացնող ոչ ռեզիդենտ շահութահարկ վճարողի հարկման բազայի նկատմամբ շահութահարկը հաշվարկվում է հետևյալ նվազ դրույթաչափերով.

1) ապահովագրական հատուցումների, վերաապահովագրական վճարների և փոխադրման դիմաց ստացված եկամուտների մասով՝ հինգ տոկոս.

2) պասիվ եկամուտների մասով՝ տասը տոկոս,

3) Համահայկական բանկից ստացվող շահաբաժինների մասով՝ զրո տոկոս.

4) արժեթղթերի օտարումից ստացվող ակտիվների արժեքի հավելաճի մասով՝ զրո տոկոս:<sup>62</sup>

Բացի այդ, ՀՀ կառավարության հավանությանն արժանացած ծրագիր իրականացնող շահութահարկ վճարողի շահութահարկի գումարը հարկման բազայի նկատմամբ

---

<sup>61</sup> ՀՀ հարկային օրենսգիրք 64-րդ հոդված, 2-րդ կետ, 37-րդ ենթակետ:

<sup>62</sup> ՀՀ հարկային օրենսգիրք, հոդ. 125, կետ 4

հաշվարկվում է շահութահարկի նվազեցված հետևյալ դրույքաչափերով.

- հինգ տոկոս դրույքաչափով, եթե շահութահարկ վճարողների խմբի կողմից հարկային տարվա ընթացքում ՀՀ տարածքից «Արտահանում» մաքսային ընթացակարգով արտահանված ապրանքների մաքսային արժեքի հանրագումարը կազմում է առնվազն 40 միլիարդ դրամ.

- երկու տոկոս դրույքաչափով, եթե այդ գումարը կազմում է առնվազն 50 միլիարդ դրամ:<sup>63</sup>

Որպես կանոն, ներդրումները ուղեկցվում են նոր աշխատատեղերի ստեղծմամբ, և այս առումով մեր ՀՀ-ում նույնպես գործում են ներդրումներին աջակցման խթանիչ դրույթներ: Այսպես, ՀՀ կառավարության որոշմամբ հավանության արժանացած գործարար ծրագրի մեկնարկման ու դրան հաջորդող երկու հաշվետու տարիների շահութահարկի գումարը նվազեցվում է գործարար ծրագրի շրջանակներում ստեղծված նոր աշխատատեղերի մասով համապատասխան տարվա ընթացքում հաշվարկված լրացուցիչ աշխատավարձի և դրան հավասարեցված վճարումների 100 տոկոսի չափով, բայց ոչ ավելի, քան համապատասխան հաշվետու տարվա համար հաշվարկված փաստացի շահութահարկի գումարի 30 տոկոսը:

Մեր հանրապետությունում ներդրումների իրականացման օրենսդրական խթաններ են գործում ոչ միայն ուղղակի, այլև անուղղակի հարկերի գծով: Այսպես, ԱԱՀ-ի վճարման գումարի ժամկետը հետաձգվում է ԱՏԳԱՍ դասակարգչի 841920000, 841990150, 8422 (բացառությամբ 842211000 և 842290100 ծածկագրերի), 8426, 8429, 8430, 8435, 8441, 84431, 8452 (բացառությամբ 845210 և 845290000 ծածկագրերի), 8453, 8475, 8478, 8479, 85023100 կամ 870410 ծածկագրերին դասվող ապրանքների ներմուծման դեպքում:

---

<sup>63</sup> ՀՀ հարկային օրենսգիրք, հոդ. 125, կետ 4

Ընդ որում, հաշվարկված ԱԱՀ-ի գումարների՝ պետական բյուջե վճարման ժամկետը հետաձգվում է՝

1) մեկ տարի ժամկետով, եթե ԵՏՄ անդամ չհամարվող պետություններից ներմուծվող՝ նշված ծածկագրերին դասվող ապրանքների մաքսային արժեքը, իսկ ԵՏՄ անդամ պետություններից ներմուծվող՝ նշված ծածկագրերին դասվող ապրանքների՝ ԱԱՀ-ով հարկման բազան պակաս է 70 միլիոն դրամից.

2) երկու տարի ժամկետով, եթե ԵՏՄ անդամ չհամարվող պետություններից ներմուծվող՝ նշված ծածկագրերին դասվող ապրանքների մաքսային արժեքը, իսկ ԵՏՄ անդամ պետություններից ներմուծվող՝ նշված ծածկագրերին դասվող ապրանքների՝ ԱԱՀ-ով հարկման բազան կազմում է 70 միլիոն դրամից (ներառյալ) մինչև 300 միլիոն դրամ.

3) երեք տարի ժամկետով, եթե ԵՏՄ անդամ չհամարվող պետություններից ներմուծվող՝ նշված ծածկագրերին դասվող ապրանքների մաքսային արժեքը, իսկ ԵՏՄ անդամ պետություններից ներմուծվող՝ նշված ծածկագրերին դասվող ապրանքների՝ ԱԱՀ-ով հարկման բազան կազմում է 300 միլիոն դրամ և ավելի:<sup>64</sup>

Բացի այդ, ԱԱՀ-ից ընդհանրապես ազատվում են ազատ տնտեսական գոտու կազմակերպչին և ազատ տնտեսական գոտու շահագործողին ծառայությունների մատուցումը, ազատ տնտեսական գոտու տարածքում ապրանքների մատակարարումը<sup>65</sup>

Ազատ տնտեսական գոտում ներդրումներ կատարողները ազատվում են ինչպես գույքահարկից, ավելացված արժեքի հարկից, այնպես էլ ուղղակի հարկերից: Շահութահարկի վճարումից ազատվում են ազատ տնտեսա-

<sup>64</sup> ՀՀ հարկային օրենսգիրք, հոդվ. 79, կետ 1

<sup>65</sup> ՀՀ հարկային օրենսգիրք, հոդվ. 64, կետ 2, ենթակետ 23

կան գոտու շահագործող համարվող շահութահարկ վճարողները՝ ՀՀ տարածքում ստեղծված ազատ տնտեսական գոտուս իրականացվող գործունեությունից ստացվող եկամտի մասով:<sup>66</sup>

Սակայն, միայն հարկային օրենսդրությունը չէ, որ անուղղակի կերպով խթանում է ՀՀ-ում ներդրումների իրականացմանը: Վերլուծաբանները նշում են, որ ՀՀ կառավարությունը մշտապես կարգավորում է գերակա ոլորտներում իրականացվող ներդրումային ծրագրերը և սահմանում է մաքսային արտոնություններ:<sup>67</sup> Այսպես, ՀՀ կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 17-ի թիվ 1118-Ն որոշմամբ հաստատված հավելվածով սահմանված կարգով կարգավորվում են գերակա ոլորտում ներդրումային ծրագրի շրջանակներում ներմուծվող տեխնոլոգիական սարքավորումների, դրանց բաղկացուցիչ և համալրող մասերի, հումքի և նյութերի ներմուծումն օրենսդրությամբ սահմանված կարգով մաքսային մարմինների կողմից հաշվարկված մաքսատուրքից ազատելու արտոնության կիրառման համար անհրաժեշտ պայմանների հաստատման հետ կապված հարաբերությունները:

Մասնագիտական գրականությունում օտարերկրյա ներդրումների խթանման կարևոր գործոն են համարում նաև կրկնակի հարկման կանխարգելումը ինչպես ընդունող, այնպես էլ դոնոր երկրներում:<sup>68</sup> Դեռևս 2004թ. ՀՀ կառավարությունը ընդունել է որոշում եկամտունների և գույքի կրկնակի հարկումը բացառելու և հարկերի վճարումից խուսափելը

---

<sup>66</sup> ՀՀ հարկային օրենսգիրք, հոդ. 128, կետ 2

<sup>67</sup> Անանյան Ա. Ներդրումային գործունեության պետական կարգավորման հիմնախնդիրները, //Այլընտրանք, հոկտեմբեր-դեկտեմբեր 2017, էջ 77-85

<sup>68</sup> Եսայան Ե.Ս., Օտարերկրյա ուղղակի ներդրումային քաղաքականության պետական կարգավորումը, // Վիճակագրության արդի հիմնախնդիրները ՀՀ-ում, միջբուհական գիտաժողովի նյութեր, Եր. 2014 թ., էջ 179-180

կանխելու մասին ՀՀ գործող միջազգային համաձայնագրերի որոշ դրույթներ կիրառելու վերաբերյալ: <sup>69</sup> Այս առումով, հեղինակները օտարերկրյա ուղղակի ներդրումների պարագայում առաջարկում են կրկնակի հարկման կանխարգելման մոտեցումներ:

Հարկ է նշել, որ չնայած վերոնշյալ հարկային և մաքսային աջակցող լծակների, մեր կարծիքով, օտարերկրյա ներդրումային խթանման շրջանակը դեռևս կարիք ունի ընդլայնման և բարելավման: Նախ, այս ոլորտում թերևս շրջանցվում է սփյուռքի գործոնը, սակայն ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ մեծ է սփյուռքահայության ներուժը հայրենիքում ներդրումներ կատարելու առումով: Տնտեսության մի շարք ոլորտներում (աղամանդագործություն, ոսկերչություն, տեղեկատվական տեխնոլոգիաներ, տրանսպորտ, շինարարություն, ներկայումս ֆինանսական հատված, զբոսաշրջություն և առևտուր) իրականացված ներդրումների գերակշիռ մասը կապված է սփյուռքի հետ: Միայն 1994–2001թթ. ընթացքում ՀՀ տնտեսության մեջ ներդրումներ կատարած օտարերկրյա ներդրողների շուրջ 69%-ը սփյուռքի հետ կապված ներդրողներն են եղել, որոնց կողմից 1998–2004 թթ. կատարել են շուրջ 275 միլիոն ԱՄՆ դոլարի ներդրում, ինչը կազմել է վերոնշյալ ժամանակահատվածում կատարված ներդրումների շուրջ 25%-ը<sup>70</sup>:

---

<sup>69</sup> «Եկամտունների և գույքի կրկնակի հարկումը բացառելու և հարկերի վճարումից խուսափելը կանխելու մասին ՀՀ գործող միջազգային համաձայնագրերի որոշ դրույթներ կիրառելու մասին» ՀՀ կառավարության 2004 թ. 7 հոկտեմբերի 1398-Ն որոշումը

<sup>70</sup> Սփյուռքի ներդրումները ՀՀ տնտեսության մեջ, զարգացման հեռանկարներ, //Տնտեսագետ, ՀՊՏՀ, 2015, էջ 96

## ԱՍՓՈՓՈՒՄ

Այսպիսով, ներդրումների օրենսդրական խթանման հիմնախնդիրների վերլուծության հիման վրա մեր կողմից կատարվել են մի շարք եզրահանգումներ.

Առաջին, դեռևս ՀՀ-ում գործող օրենսդրական դաշտում հստակ չեն արձանագրվում դրույթներ, որոնք ուղղակիորեն վերագրվում են հարկային լծակներով ներդրումային գործունեության խթանմանը: Գործող օրենսդրական նորմերով արտոնությունները, որոնք գործում են ուղղակի և անուղղակի հարկերի հաշվարկման ոլորտում, անհրաժեշտ է կոնկրետացնել և հստակ թիրախավորել հենց ներդրումային գործունեությանը:

Երկրորդ, ՀՀ-ում անհրաժեշտ է ընդունել օրենք, որը կամբողջացնեք ոչ միայն օտարերկրյա ներդրումների, այլև տեղացի գործարարների և սփյուռքի ներդրումների աջակցման գործընթացը: Տեղական ներդրումների օրենսդրական պաշտպանվածության պակասը հաճախ ստիպում է հայաստանաբնակ գործարարներին դուրս հանել կապիտալը երկրից և գործունեություն ծավալել արտասահմանում:<sup>71</sup> Մյուս կողմից, սփյուռքահայ գործարարները չունենալով ոչ մի լրացուցիչ արտոնություն ներդրումների իրագործման ոլորտում, առանձնապես չեն մոտիվացվում հայրենիքում գործունեություն ծավալման ուղղությամբ:

Երրորդ, անհրաժեշտ է մշակել ներդրումների ոլորտում կիրառվող հարկային քաղաքականության իրագործման արդյունավետության գնահատման մեթոդաբանություն, նրանում հակակշռելով ներդրումային գործունեությունից ձևավորվող հարկերի հավաքագրման արդյունքները և ներդրումներին տրվող հարկային արտոնություններից կրճատ-

---

<sup>71</sup> Գապիտալի արտահոսքը մտահոգիչ է դառնում,  
// <https://www.aravot.am/2018/03/16/943016/>

վող հարկային մուտքերը: Դրանով իսկ կհիմնավորվեն ներդրումային ոլորտում կիրառվող հարկազանձման ֆիսկալ, խթանիչ և կարգավորիչ գործառույթների ֆինանսատնտեսական հետևանքները:

**Вано Казаян**

аспирант, НАН РА Институт Экономики им. М.Котаняна

## ПУТИ СТИМУЛИРОВАНИЯ ИНОСТРАННЫХ ИНВЕСТИЦИЙ В РА

*Ключевые слова – льготы по налогу на прибыль, налоговый кодекс, рентабельность инвестиций, налоги от инвестиций*

В статье анализируются пути законодательного стимулирования иностранных инвестиции в РА. В частности, в действовавшем Налоговом Кодексе РА четко не приводятся специальные статьи, прямо относящие к стимулированию иностранных инвестиций по налоговым рычагам. В этой связи, предлагается конкретизации статей налоговых льгот, нацеленные именно на иностранные инвестиции в РА. Кроме того, предлагается принять специальный закон, стимулирующее не только иностранные, но и внутренние и национальные инвестиции, имея ввиду также финансовые внедрения от диаспоры. Обосновывается необходимость применения методики оценки эффективности налоговой политики в области инвестиции.



**Vano Ghazazyan**

Ph.D. student, Institute of Economics, NAS RA after Kotanyan

## **THE INCENTIVES FOR FOREIGN INVESTMENTS IN THE RA**

***Keywords*** – profit tax allowance, tax code, return on investment, taxes on investments.

The article analyzes ways of legislative stimulation of foreign investments in the Republic of Armenia. In particular, the current Tax Code of Armenia does not clearly state special articles, directly related to the promotion of foreign investment in tax levers. It is proposed to specify the articles of tax benefits, aimed specifically at foreign investments in Armenia. In addition, it is proposed to adopt a special law, which stimulates not only foreign, but also domestic and national investments, having in view also financial implications from the Armenian diaspora. The article substantiates the necessity of applying the methodology for assessing the effectiveness of the tax policy implementation in the field of investment.

*Ներկայացվել է՝ 10.12.2018 թ.*

*Ընդունվել է տպագրության՝ 21.12.2018 թ.*

## **Գառնիկ Հարությունյան**

«ՀՈՒՄԿ» հիմնադրամ,

Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների

փորձագիտական կենտրոնի ղեղագործության

Էկոնոմիկայի բաժնի ղեկավար,

ԵՊԲՀ ղեղագործության կառավարման ամբիոնի դասախոս

## **Հակոբ Թոփյան**

բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ԵՊԲՀ

Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների

փորձագիտական կենտրոնի տնօրեն

## **Ալբերտ Սահակյան**

Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների

փորձագիտական կենտրոնի փոխտնօրեն

ղեղագիտության թեկնածու, դոցենտ, ԵՊԲՀ

## **ԴԵՂԵՐԻ ԳՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ՄԵԾԱԾԱԽ ԵՎ ՄԱՆՐԱԾԱԽ ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆ ՀԱՎԵԼԱԳՆԵՐԻ (MARK-UPS) ՄԱՀՄԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ**

*Հիմնաբառեր – հավելագին (Mark-Up), դեղերի գների պետական կարգավորում, մաքսային արժեք, դեղի ինքնարժեքը մեծածախ վաճառքի փուլում, դեղի ինքնարժեքը մանրածախ վաճառքի փուլում, դեղի իրացման մեծածախ գին, դեղի իրացման մանրածախ գին*

Դեղերի շուկաներին բնորոշ առանձնահատկությունների պատճառով դեղերի գները միայն շուկայական մեխանիզմներով գործնականում կարգավորել հնարավոր չէ: Այդ պատճառով Եվրամիության երկրներում <sup>72</sup>, ԱՊՀ բոլոր երկրներում (բացի Հայաստանից և Տաջիկստանից) ներդրվել են դեղերի գների

---

<sup>72</sup> Panos Kanavos, Overview of pharmaceutical pricing and reimbursement regulation in Europe.

[http://www.eco.uc3m.es/servicios/sesam/actividades/jornada\\_legislacion/DOC%209%20EMEARoadMap.pdf](http://www.eco.uc3m.es/servicios/sesam/actividades/jornada_legislacion/DOC%209%20EMEARoadMap.pdf)

պետական կարգավորման տարբեր համակարգեր<sup>73</sup>: «Դեղերի մասին» մշակվող նոր օրենքը<sup>74</sup> նախատեսում է Հայաստանում դեղերի գների պետական կարգավորման համակարգի մշակում և ներդրում: Դեղերի գների կարգավորման գործող համակարգերի վերլուծության<sup>75</sup> հիման վրա մշակվել են Հայաստանում դեղերի գների պետական կարգավորման մեխանիզմի սինթեզման գործընթացին վերաբերող առաջարկություններ:

Այս աշխատանքի հիմնական նպատակը բնակչության կողմից սպառվող դեղերի գների աճը զսպող պետական կարգավորման համակարգի սինթեզման համար հնարավոր մոտեցման մշակումն է, ինչն էլ ելակետ է հանդիսացել դեղի իրացման շղթայի 2 օղակների (մեծածախ, մանրածախ) և՛ մուտքերի, և՛ ելքերի վրա հնարավոր ներգործությունների թողած ազդեցությունների վերլուծության միջոցով այդ նպատակի իրագործելիությունը (feasibility) գնահատելու համար:

### **Նյութը և մեթոդները.**

Դեղերի իրացման շղթան իր մեջ ներառում է դեղերի մեծածախ և մանրածախ իրացման օղակները, որոնք վերլուծության նպատակով ներկայացվել են որպես «Input → Output» տիպի 2 մոդուլներից կազմված շղթա՝ համակարգ (Գծապատկեր N 1.)

---


<sup>73</sup> Результаты оценки доступности лекарственных препаратов на основе анализа потребительских цен и ценообразования на лекарственные препараты в РФ и на сопоставимых рынках стран, в том числе входящих в СНГ, Европейский союз и БРИКС, М. 2013.

[http://www.economy.gov.by/dadvfiles/002265\\_893807\\_3.pdf](http://www.economy.gov.by/dadvfiles/002265_893807_3.pdf)

<sup>74</sup> «Դեղերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը, ընդունվել է 17.05.2016թ., <http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=106446>







<sup>75</sup> Марущак И. И., Ольховская М. О., Системы ценообразования на лекарственные препараты в России и за рубежом.

<http://cyberleninka.ru/article/n/sistemy-tsenoobrazovaniya-na-lekarstvennye-preparaty-v-rossii-i-za-rubezhom>



**Գծապատկեր 1.** Ղեղերի գների կարգավորող ներգործությունների տեղաբաշխումը

Գծապատկեր 1-ում A, B, C և D տառերով նշանակված են ղեղերի շրջանառության երկփուլ համակարգի վրա կարգավորող հետևյալ հնարավոր կարգավորող ներգործությունները, մասնավորապես՝

-  - ղեղի մանրածախ գնի վրա կարգավորող ներգործությունն է – **D**,
-  - մեծածախ վաճառքի գնի անմիջական պետական Կարգավորումն է – **E**,
-  - ղեղի մեծածախ վաճառքի սահմանային հավելագինն է – **A**
-  - ղեղի մանրածախ վաճառքի սահմանային հավելագինն է – **B**
-  - ղեղի մաքսային արժեքն է կամ մեծածախ ռեֆերենտային գների հիման վրա հաշվարկված հենակետային գինն է, որը հիմք («հենակետ») է հանդիսանում մեծածախ և մանրածախ առավելագույն հավելագները կիրառելով մեծածախ և մանրածախ վաճառքի առավելագույն (սահմանային) գները հաշվարկելու և հաստատելու (գրանցելու) համար– **C**
-  - ը ներկրված ղեղի միավորի մաքսային արժեքն է, որը

ձևավորվում է **ExW** գնի<sup>76</sup> հիմքի վրա՝ համաձայն **ՀՀՄՍ 2 «Պաշարներ»** ստանդարտի պահանջների<sup>77</sup>

*հիմք մեծ*  
*input*

-ը ներկրված դեղի միավորի **ինքնարժեքն** է, որը ձևավորվում է համաձայն **ՀՀՄՍ 2 «Պաշարներ»** ստանդարտի պահանջների,

*P մեծ*  
*output*

-ը ներկրված դեղի միավորի մեծածախ վաճառքի գինն է,

*հիմք ման*  
*input*

-ը դեղատան կողմից գնված դեղի միավորի **ինքնարժեքն** է, որը ձևավորվում է համաձայն **ՀՀՄՍ 2 «Պաշարներ»** ստանդարտի պահանջների,

*P ման*  
*output*

-ը միավորի մանրածախ վաճառքի գինն է:

Այս համակարգի հիմնական նպատակը բնակչության կողմից սպառվող դեղերի գների աճի զսպումն է, ինչն էլ ելակետ է հանդիսացել շղթայի 2 օղակների և՛ մուտքերի, և՛ ելքերի վրա հնարավոր ներգործությունների թողած ազդեցությունների վերլուծության միջոցով այդ նպատակի իրագործելիությունը (feasibility) գնահատելու համար:

Մշակվել է դեղերի գների պետական կարգավորման առավել «ընդհանրական մոդելը»<sup>78</sup>, որը ներառում է (կարող է ներառել) ներկայումս աշխարհի երկրներում գործող համակարգերի կողմից կիրառվող բոլոր հնարավոր կարգավորող ներգործությունների ամբողջությունը<sup>79</sup>:

<sup>76</sup> Условия поставки EXW Инкотермс 2010, <http://anvay.ru/incoterms-exw, https://48ric.ru/bitrix/templates/ric/images/inkoterms-2010.pdf>

<sup>77</sup> Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտ 2 «Պաշարներ», [http://www.arlis.am/Annexes/3/PT43.1\\_13page4-934.doc](http://www.arlis.am/Annexes/3/PT43.1_13page4-934.doc)

<sup>78</sup> Հարությունյան Գ., Թոփչյան Հ., Սահակյան Ա. Հայաստանում դեղերի գների պետական կարգավորման արդյունավետ համակարգի մշակման մոտեցումների մասին., ՀՀ 4-րդ միջազգային բժշկական համագումար «Միասին՝ հանուն ազգի առողջության», հուլիս 2-4, 2015, Երևան

<sup>79</sup> Arutyunyan G., Sahakyan A., Topchyan H., Approaches to Pharmaceutical Price Government Regulation in Armenia, 3rd international PPRI Conference Pharmaceutical Pricing and Reimbursement Policies: Challenges Beyond the Financial Crisis, 12 - 13 October 2015, Vienna

## 1. Դեղի մանրաձախ գնի վրա կարգավորող D ներգործությունը

Առաջին հայացքից թվում է, որ հենց դեղերի մանրաձախ վաճառքի գներն են լինելու դեղերի գների կարգավորման անմիջական թիրախը: Այսինքն, հարկավոր է մշակել դեղերի մանրաձախ գների աճը զսպող, կարգավորող արդյունավետ մեխանիզմներ, իսկ դեղերի մեծաձախ վաճառքով զբաղվող կազմակերպությունները ստիպված կլինեն բանակցել և պայմանավորվել դեղերի մանրաձախ առևտրով զբաղվող սուբյեկտների (դեղատների) հետ՝ դեղերի իրացման շղթայի գումարային (մեծաձախ + մանրաձախ) հավելագինը իրար մեջ բաշխելու հարցում:

Սակայն կարգավորող D ներգործությունը որոշակի առարկայական փաստերով հնարավոր չէ հիմնավորել:

*P մաս  
output*

- ի կարգավորման դեպքում անմիջական D ներգործության միջոցով, առանց հաշվի առնելու մանրաձախ առևտրի ոլորտում վաճառվող դեղերի ինքնարժեքը (որի ձևավորման հիմքում ընկած է մեծաձախ վաճառքի գինը) և մանրաձախ օղակում գնի ձևավորման համար կիրառվող համախառն շահույթի հավելագինը, կստանանք դեղերի գների կարգավորման մի արհեստական, չհիմնավորված և չաշխատող համակարգ: Շատ հեղինակներ այս D ներգործության տակ հասկանում են ռեֆերենտային (հենակետային) գնագոյացման մեթոդը: Հարկավոր է նշել, որ դեղերի մանրաձախ առևտրի ոլորտում արտաքին ռեֆերենտային գների օգտագործումը տեղին չէ, քանի որ ռեֆերենտային երկրների դեղերի իրացման շղթաներում առկա բազում առանձնահատկությունների պատճառով դեղերի մանրաձախ գները այդ երկրներում համադրելի չեն լինի և այդ տեղեկատվությունը չի կարող հիմք լինել դեղերի մանրաձախ գների անմիջական սահմանման և/կամ կարգավորման համար: Հարկ է նշել նաև, որ ներքին ռեֆերենտային գները ևս գների կարգավորման (սահմանման) մեխանիզմի տարրեր չեն համարվում: Դեղերի իրացման մանրաձախ օղակում ներքին ռեֆերենտային գների վերաբերյալ հավաքված տեղեկատվությունը կարող է օգտագործվել միայն պե-

տության և այլ սուբյեկտների կողմից դեղերի գների փոխհատուցման սխեմաներում՝ դեղերի գների փոխհատուցման որոշակի շեմ սահմանելու համար: Այս մեթոդը ներքին ռեֆերենտային գների հիման վրա փոխհատուցվող դեղի համար կորոշի (կհաշվարկի) որոշակի գնային շեմ, որից բարձր գին ունեցող դեղերի համար պետության (կամ ֆինանսական այլ գործակալի) կողմից դեղի գնի լրիվ փոխհատուցում չի իրականացվում:

Սակայն, երբ փորձում են այս կարգավորող ներգործությունը (D)՝ օգտագործել նաև արտաքին (այլ երկրների) ռեֆերենտային մանրաձախ գներ համադրելու համար, ապա այս դեպքում, մեղմ սասած, ստացվում են ոչ համադրելի և որոշումներ կայացնելու համար ոչ պիտանի արդյունքներ: Նույնիսկ Եվրամիության երկրների համար համարվում է, որ ռեֆերենտ երկրների դեղերի մանրաձախ գները այնքան էլ չեն կարող համադրելի լինել, քանի որ դրանք առաջացել են անհավասար և ոչ նույնական պայմաններում: Մասնավորապես, այդ երկրներում դեղերի իրացման ամբողջ շղթայում գործող հավելագները տարբեր են, տարբեր են նաև դեղերի շրջանառության նկատմամբ կիրառվող ԱԱՀ-ի դրույքաչափերը<sup>80</sup>:

Բացի վերը թվարկված թերություններից, Գծապատկեր N 1-ից երևում է որ կարգավորում D-ն չի կարող միայնակ լուծել դեղերի իրացման շղթայում իրենից առաջ եղած և «իրենց գործը չկատարած կամ լավ չկատարած» **A, B, C** և **E 4** ներգործությունների չաշխատելու կամ այդ կարգավորող ներգործությունների բացակայության (չլինելու) պատճառով առաջացած գնագոյացման խնդիրներն ու բացերը:

## **2. Դեղի մեծածախ վաճառքի գնի անմիջական պետական կարգավորումը՝ – E**

Այսպիսի կարգավորումը ենթադրում է դեղի մեծածախ վաճառքի գնի անմիջական պետական կարգավորում՝ առանց **A** և

---

<sup>80</sup> Марущак И. И., Ольховская М. О., Системы ценообразования на лекарственные препараты в России и за рубежом.

<http://cyberleninka.ru/article/n/sistemy-tsenoobrazovaniya-na-lekarstvennyye-preparaty-v-rossii-i-za-rubezhom>

**С** կարգավորումների իրականացման, քանի որ դրանց իրականացման դեպքում **Е** կարգավորման անհրաժեշտությունը պարզապես չի լինի: Այսպիսի կարգավորումը շատ քիչ է կիրառվում, և միայն մեծածախ վաճառքի գնի անմիջական պետական կարգավորումը առանց **А**-ի և **С** -ի գուրկ է նաև որոշակի առարկայական հիմնավորումից:

Սակայն այս տեսակի կարգավորման կիրառումը արդարացված է համարվում այն հիմքով, որ դեղերի գների կարգավորման գործընթացին պետության մասնակցությունը էական է և անհրաժեշտ, իսկ կարգավորման հիմքում ընկած են պետության և դեղերի շուկայի մասնակիցների երկխոսությունը և բանակցությունների արդյունքում ձեռք բերված պայմանավորվածությունները:

### 3. **Դեղի մեծածախ վաճառքի սահմանային հավելագինը - А**

Կարգավորող **А** ներգործությունը դեղերի մեծածախ վաճառքի սահմանային (առավելագույն) հավելագին (Mark Up մեծ.) սահմանումն է և ներդրումը, որպես դեղերի գների պետական կարգավորման համակարգի կարևորագույն բաղադրիչներից մեկը: (Գծապատկեր 1).

Դեղերի գների կարգավորման նպատակով դեղերի շրջանառության ինչպես մեծածախ, այնպես էլ մանրածախ օղակներում (փուլերում) կիրառվող հավելագները տարբերվում են սովորաբար օգտագործվող համախառն շահույթի հավելագնից, (որը սահմանվում է որպես իրացումից հասույթի և վաճառքի ինքնարժեքի (իրացված ապրանքների ինքնարժեքի) տարբերության, այսինքն՝ համախառն շահույթի հարաբերություն վաճառքի ինքնարժեքին).

$$\text{Համախառն շահույթի հավելագին} = \text{Հավելագին} = \frac{\text{Համախառն շահույթ}}{\text{Վաճառքի ինքնարժեք}} \times 100 \quad (1)$$



Այսինքն, i-րդ տեսակի դեղի միավորի համար հավելագինը (%) (*Mark Up*) հաշվարկվում է որպես դեղի գնի և դեղի միավորի ինքնարժեքի տարբերության հարաբերությունը դեղի միավորի ինքնարժեքին (1):

Դեղերի գների պետական կարգավորման նպատակով օգտագործվող դեղերի շրջանառության մեծածախ փուլում կիրառվող առավելագույն հավելագինը (*MarkUpMax<sup>մեծ</sup>*) սահմանվում է որպես (%).

$$MarkUpMax^{մեծ} = \frac{P_{output}^{մեծ} - C_{input}^{մաքս}}{C_{input}^{մաքս}} \times 100 \quad (2)$$

Նույն նպատակով դեղերի շրջանառության մանրածախ փուլում կիրառվող հավելագինը (*MarkUpMax<sup>ման</sup>*) սահմանվում է որպես (%).

$$MarkUpMax^{ման} = \frac{P_{output}^{ման} - C_{input}^{մաքս}}{C_{input}^{մաքս}} \times 100 \quad (3)$$

(2)-ից և (3)-ից հետևում է, որ և *MarkUpMax<sup>մեծ</sup>* -ը և *MarkUpMax<sup>ման</sup>* -ը հաշվարկվում են միևնույն «բազիսի», «հենակետային» արժեքի՝  $C_{input}^{մաքս}$  -ի հիմքի վրա:

Հավելագների այսպիսի յուրօրինակ համակարգի սահմանումը պայմանավորված է երկու կարևոր հանգամանքով.

1. Դեղերի շրջանառության մեծածախ և մանրածախ փուլերում դեղերի ինքնարժեքների հիմքով ( $C_{input}^{մեծ,ինք}$  և  $C_{input}^{ման,ինք}$ )

հավելագների հաշվարկումը և դեղերի

համապատասխանաբար  $P_{output}^{մեծ}$  մեծածախ և  $P_{output}^{ման}$

մանրածախ պետական գրանցման ենթակա առավելագույն գների հաշվարկումը և դրանց պետական գրանցումը՝ այնքան էլ արդյունավետ չէ: Դա պայմանավորված է այն հանգամանքով, որ դեղերի շրջանառության և մեծածախ և

մանրածախ փուլերում գործունեություն իրականացնող բոլոր տնտեսավարող սուբյեկտներից անհրաժեշտ կլինի դեղերի յուրաքանչյուր տեսակի համար ստանալ դրանց ինքնարժեքների՝  $C_{input}^{մեծ,ինք}$  և  $C_{input}^{ման,ինք}$  վերաբերյալ

հավաստի տեղեկատվություն: Հետևաբար այդ գործընթացը ծախսատար կլինի, իսկ այս եղանակով հավաքագրված տեղեկությունը այնքան էլ հուսալի չի համարվի:

2. Պետական գրանցման ենթակա մեծածախ՝  $P_{output}^{մեծ}$  և մանրածախ՝  $P_{output}^{ման}$  առավելագույն գների հաշվարկման համար ելակետ ընդունելով ներմուծվող դեղերի մաքսային արժեքները՝  $C_{input}^{մաքս}$  կխուսափենք վերը նշված թերություններից: Կարևոր է նշել, որ ներմուծվող բոլոր դեղերի մաքսային արժեքների վերաբերյալ բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոնում առկա է հավաստի և օպերատիվ տեղեկատվություն:

ՀՀ տարածքում դեղերի իրացման շղթայի մեծածախ իրացման օղակի (փուլի) համար սահմանվում է մեկ ընդհանուր սահմանային (առավելագույն) հավելագին, անկախ այն բանից, թե տվյալ դեղի մեծածախ շրջանառությանը քանի մեծածախ վաճառք իրականացնող կազմակերպություն է մասնակցել:

#### 4. Դեղի մանրածախ վաճառքի սահմանային հավելագինը - B

Կարգավորող B ներգործությունը դեղերի մանրածախ վաճառքի առավելագույն հավելագինի ( $MarkUpMax^{ման}$ ) սահմանումն է և ներդրումը որպես դեղերի գների պետական կարգավորման համակարգի կարևորագույն բաղադրիչներից մեկը (Գծապատկեր N 1):

Կարևոր է նշել նաև, որ  $և'$  մեծածախ և  $մանրածախ$  հավելագինները սահմանվում են մեծածախ վաճառքի փուլում՝ ներմուծվող դեղերի մաքսային արժեքի կամ ռեֆերենտ երկրներից

ստացված տեղեկությունների հիման վրա հաշվարկված «հենակետային» արժեքի հիմքի վրա:

Մանրաձախ իրացման հավելագինը ևս կարող է տարբերակված լինել՝ ըստ մանրաձախում իրացվող դեղի ինքնարժեքի մեծության:

## **5. Դեղերի «հենակետային» արժեքի ձևավորման վրա իրականացվող կարգավորող ներգործությունը - C**

Կարգավորող C ներգործությունը դեղ ներկրող կազմակերպություններին կմղի արդյունավետ աշխատել արտաքին շուկայում, իսկ դեղ արտադրող կազմակերպություններին կստիպի վարել ծախսարդյունավետ մենեջմենթ.

- Կարող են օգտագործվել արտաքին ռեֆերենտ գների գնահատման վրա հիմնված զսպման մեխանիզմներ, ինչպես նաև
- Ներքին ռեֆերենտ գների գնահատման վրա հիմնված զսպման մեխանիզմներ:

## **Արդյունքները**

«Հնդհանրական մոդելում» ներառված հնարավոր բոլոր ներգործությունների համակարգված վերլուծության արդյունքում հիմնավորվել են հնարավոր կարգավորող ներգործությունների առավել արդյունավետ համախմբի (վեկտորի, տարբերակի) ընտրության մոտեցում(ներ)ը, որոնք կարող են հիմք հանդիսանալ ՀՀ-ում դեղերի գների պետական կարգավորման համակարգի մշակման և ներդրման համար:

ՀՀ դեղերի շուկայի առանձնահատկություններից ելնելով, առաջարկվում է մշակել դեղերի գների պետական կարգավորման արդյունավետ համապարփակ մի համակարգ, որն իր մեջ ներառում է ընդամենը երեք կարգավորող ներգործություն (գործիք).

1. դեղի մեծաձախ վաճառքի առավելագույն հավելագնի սահմանում,

2. դեղի մանրաձախ վաճառքի առավելագույն հավելագնի սահմանում,

3. արտաքին (ներքին) ռեֆերենտային գների հիման վրա ՀՀ տարածք ներկրվող դեղի հենակետային արժեքի սահմանում:

### **Եզրակացություններ**

Մշակված «Ընդհանրական մոդելը» ներառում է դեղերի գների կարգավորման բոլոր հնարավոր ներգործությունների ամբողջությունը և կարող է կիրառվել որպես վերլուծությունների իրականացման, ինչպես նաև՝ դեղերի գների պետական կարգավորման համակարգերի մշակման արդյունավետ գործիք:

Աշխատանքում հիմնավորվել է ՀՀ-ում դեղերի գների պետական կարգավորման մշակվող համակարգի համար դեղերի և՛ մեծածախ և՛ մանրածախ իրացման շրջանառությունների առավելագույն հավելագների սահմանման անհրաժեշտությունը, ինչպես նաև՝ միայն մեծածախ փուլում գների կարգավորում մտցնելու անարդյունավետությունը:

**Гарник Арутюнян**

ՄЦОБ՝ Образовательный Фонд,

Научный Центр Экспертизы Лекарств и Медицинских Технологий (НЦЭЛМТ), Руководитель Отдела Экономики Фармации

ЕГМУ, Кафедра Управления Фармации, преподаватель

**Акоп Топчян**

ЕГМУ, Кафедра Технологии Лекарств,

Зав. кафедрой, д.м.н., профессор

Научный Центр Экспертизы Лекарств и

Медицинских Технологий (НЦЭЛМТ), Директор

**Алберт Саакян**

ЕГМУ, Кафедра Управления Фармации, к.ф.н., доцент

Научный Центр Экспертизы Лекарств и Медицинских

Технологий (НЦЭЛМТ), Заместитель Директора

## ОБ УСТАНОВЛЕНИИ МАКСИМАЛЬНЫХ ОПТОВЫХ И РОЗНИЧНЫХ НАДБАВОК (MARK-UPS) В СИСТЕМЕ ГОСУДАРСТВЕННОГО РЕГУЛИРОВАНИЯ ЦЕН НА ЛЕКАРСТВА

*Ключевые слова* – надбавка (Mark-Up), государственное регулирование цен на лекарства, таможенная стоимость, себестоимость лекарства в этапе оптовой продажи, себестоимость лекарства в этапе розничной продажи, оптовая цена лекарства, розничная цена лекарства.

Разработанная “Обобщенная модель” охватывает совокупность всех вероятных воздействий регулирования цен на лекарства и может быть использована в качестве эффективного инструмента в процессе проведения анализов, а также при разработке систем государственного регулирования цен на лекарства. В результате системного анализа всех вероятных воздействий рассмотренных в “Обобщенной модели” были обоснованы подходы к выбору наиболее эффективного комплекса (вектора, варианта), способного стать базой для разработки и внедрения в Республике Армения системы регулирования цен на лекарства.

В частности, исходя из особенностей рынка лекарств в РА, предлагается разработать всеобъемлющую эффективную систему государственного регулирования цен на лекарства, которая включает в себя всего три воздействия регулирования (инструмент):

1. установление максимальной надбавки оптовой продажи лекарств,
2. установление максимальной надбавки розничной продажи лекарств,

3. установление базисной стоимости лекарства импортируемого на территорию РА на основе внешних (внутренних) референтных цен.

**Garnik Arutyunyan**

“IATC” Fund,  
The Scientific Center of Drug and  
Medical Technologies Expertise (SCDMTE),  
Head of Department of Economics of Pharmacy  
YSMU, Department of Pharmacy Management, Lecturer

**Hakob Topchyan**

YSMU, Head of Department of Drug Technology,  
DMSc, Professor  
Director of the Scientific Center of Drug &  
Medical Technologies Expertise (SCDMTE)

**Albert Sahakyan**

YSMU, Department of Pharmacy Management,  
PhD, Associate Professor  
Deputy Director of the Scientific Center of Drug  
& Medical Technologies Expertise (SCDMTE)

**ON SETTING THE HIGHEST MARK-UPS FOR  
WHOLESALE AND RETAIL DRUG PRICES IN THE  
STATE REGULATORY SYSTEM**

**Keywords** – Mark-Up, state regulation of drug prices, the customs value, drug cost in wholesale stage, drug cost in retail stage, the wholesale price of the drug, the retail price of the drug.

The designed ‘comprehensive model’ involves the complex of all possible regulatory influences of medicine prices and could

be used as an effective tool for carrying out analysis and for developing Pharmaceutical Price Regulation systems.

The analysis of all possible regulatory influences allows making approaches to the selection of the most effective set (vector) of possible regulatory influences included in the 'comprehensive model'. These approaches could serve as a basis for development and implementation of Pharmaceutical Price Regulation Scheme in Armenia.

Taking into account the peculiarities of Armenian pharmaceutical market, it is proposed to develop an effective and comprehensive Pharmaceutical Price Regulation Scheme including only three regulatory influences (tool), such as:

1. To define the maximum wholesale Mark-up,
2. To define the maximum retail Mark-up,
3. To define basic cost for imported medicines by using external (internal) reference prices as a base.

*Ներկայացվել է՝ 10.11.2018 թ.  
Ընդունվել է տպագրության՝ 21.12.2018 թ.*

## ՀԱՐԿԱԳԱՆՁՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ ՀՀ ԼԵՌՆԱՀԱՆՔԱՅԻՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ

*Հիմնաբառեր*–հանքարդյունաբերություն, հարկում, բնապահպանական հարկեր, ռոյալթի, հարկազանձման արդյունվետություն:

Լեռնահանքային արդյունաբերությունը առանցքային դերակատարում ունի ՀՀ հարկային համակարգում, և ոչ միայն այն պատճառով, որ այն ապահովում է հարկային մուտքերի շուրջ 30%-ը, այլև ունի հարկման դիվերսիֆիկացված կառուցվածք: ՀՀ ներկայիս առաջին 100 խոշոր հարկատուներից 4-ը լեռնահանքային արդյունաբերության կազմակերպություններն են, որոնց կողմից 2017 թվականին մուծված հարկերը այդ հարյուրակում կազմում են 24,3%:<sup>81</sup>

Ներկայումս ՀՀ-ում գործում է օգտակար հանածոների արդյունահանման համար տրամադրված է 494 թույլտվություն, որից մետաղական օգտակար հանածոների՝ 29, ոչ մետաղական օգտակար հանածոների՝ 439, հանքային ջրերի՝ 26:<sup>82</sup> Ընդերքօգտա-գործման ոլորտում իրականացված գործունեության արդյունքում տարեկան բյուջետային մուտքերը կազմում են ուսումնասիրության կամ հանքարդյունահանման լիցենզառուի կողմից վճարվող կոնցեսիոն վճար՝ 0,342

<sup>81</sup> ՀՀ ՊԵԿ պաշտոնական կայք, //www.taxservice.am

<sup>82</sup> <https://www.panorama.am/am/news/2016/01/21>



մին դրամ, մետաղական օգտակար հանածոների արդյունահանումից վճարվող բնօգտագործման վճար (ռոյալթի)՝ 21,1 մլրդ դրամ, ոչ մետաղական օգտակար հանածոների արդյունահանումից վճարվող բնօգտագործման վճար՝ 991,4 մլն դրամ, ընդերքօգտագործման թույլտվությունների համար վճարված պետական տուրք՝ 517,6 մլն դրամ:


Բնականաբար, օգտակար հանածոների արդյունաբերական արդյունահանումը կազմակերպություններում պետք է զուգակցվեն բնապահպանական և բնօգտագործման հարկային պարտավորություններով: Միայն, 2016թ. վիճակագրական հաշվառման դաշտում ընդգրկված կազմակերպությունների բնապահպանական և բնօգտագործման վճարները կազմել են 2 480.4 մլն. դրամ, որից 1 043.0 մլն. դրամը կամ 42.0%՝-ը բնապահպանական (վնասակար նյութերը շրջակա միջավայր (օդային և ջրային ավազան) արտանետելու, արտադրության և սպառման թափոնները շրջակա միջավայրում տեղադրելու, շրջակա միջավայրին վնաս պատճառող ապրանքների արտադրության և սպառման համար), 1 437.4 մլն. դրամը կամ 58.0%՝ բնօգտագործման (ջրօգտագործման, ոչ մետաղական հանածոների մարված պաշարների) համար:<sup>83</sup>

Վիճակագրությունը ցույց է տալիս, որ հանքարդյունաբերության տեսակարար կշիռը հանրապետության արդյունաբերական արտադրանքի կազմում զգալի է և հատում է 18%-ի շեմը, դրան հավելվում է նաև 2% թափոնների կառավարման գործունեության տեսակարար կշիռը (տես

---

<sup>83</sup> ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության պաշտոնական կայք, [//www.minenergy.am](http://www.minenergy.am)

գծապատկեր 1): Ընդ որում, կառուցվածքային այդ միտումը ՀՀ-ում գրեթե չի փոփոխվում վերջին հինգ տարիներին (տես գծապատկեր 2):




**Գծապատկեր 1.** Արդյունաբերական արտադրանքի կառուցվածքը ՀՀ-ում<sup>84</sup>

Մյուս կողմից, ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ մետաղական հանքաքարի արդյունահանման և վերամշակման ծավալները վերջին տարիներին ՀՀ-ում աճել են (տես աղյուսակ 1): Բնականաբար, բաց հանքերի շահագործումը և մետաղի հանքաքարի արդյունահանումն ու վերամշակումը բազում բնապահպանական խնդիրներ են առաջացնում, քանի որ ավելանում են պոչանքների ծավալները, հանքաքարի քիմիական վերամշակումից հետո ջրավազանների լցոնումը, բաց հանքերի պարագայում կենսապաշարներին վնասի հասցնումը, օդի ախտոտումը, որոնք հանքարդյունաբերող կազմակերպություններում բնապահպանական վճարային պարտավորություններ են առաջացնում (տես աղյուսակ 2):

<sup>84</sup> Կազմվել է հավելված 1-ի տվյալներով:

**Աղյուսակ 1.** Հանքագործական արդյունաբերության աճի միտումները ՀՀ-ում (մլն դրամ)<sup>85</sup>

	2012	2013	2014	2015	2016
Արդյունաբերություն, այդ թվում	1 121 906.7	1 242 070.3	1 291 274.1	1 342 700.1	1 432 708.9
Հանքագործական արդյունաբերություն այդ թվում	193 326.4	196 778.9	193 142.5	220 666.9	256 481.4
մետաղական հանքաքարի արդյունահանում	187 426.1	191 338.6	188 237.5	215 512.7	251 098.7
բաց հանքերի շահագործում	5900.3	5 440.3	4 905.0	5 154.2	5 382.7



**Գծապատկեր 2.** Հանքարդյունաբերության տեսակարար կշիռը արդյունաբերական արտադրանքի կազմում (%)<sup>86</sup>

<sup>85</sup> ՀՀ ԱՎԾ, Տարեգիրք, 2017 թ., էջ 259

<sup>86</sup> Կազմվել է հավելված 1-ի տվյալներով:

Այնուհանդերձ, վերջին տարիներին մետաղական հանքաքարի արդյունահանման աճին զուգընթաց (տես աղյուսակ 1) ՀՀ-ում բնապահպանական վճարների կառուցվածքում նվազում են թափոնակուտակումների դիմաց կատարվող հարկային պարտավորությունները (տես աղյուսակ 2): Հարկային վճարումների անհամաչափություններ են նկատվում նաև կազմակերպությունների կողմից բնօգտագործման վճարների կառուցվածքային փոփոխությունների միտումներում: Այսպես, վերջին տարիներին բնօգտագործման վճարների կառուցվածքում կենսապաշարների օգտագործման դիմաց կատարվող վճարները նվազել են (տես գծապատկեր 3) այն դեպքում, երբ ՀՀ-ում աճ արձանագրվող հանքարդյունաբերությունը հիմնականում չի իրականացվում փակ եղանակով և լուրջ վնասներ է պատճառում ՀՀ-ում առկա կենսապաշարներին:

## Աղյուսակ 2


Բնապահպանական վճարների կառուցվածքը (%)<sup>87</sup>

	2012	2013	2014	2015	2016
Զրավազան թափված վնասակար նյութերի համար	40,9	33,7	15,5	18,3	19,3
Մթնոլորտի աղտոտման համար	29,9	18,9	9,2	17,5	20,9
Թափոնակուտակումների համար	12,1	10,4	4,5	6,3	8,1
Շրջապատին վնաս պատճառող ապրանքների համար	17,1	37	70,8	57,9	51,7

<sup>87</sup> ՀՀ ԱՎԾ Տարեգիրք, 2017 թ, էջ 117

Հանքաարդյունաբերության զարգացումը ուղեկցվում է արտադրական թափոններով, որոնք բնորոշվում են վտանգավորության տարբեր աստիճաններով և ըստ այդմ էլ հարկվում են բնապահպանական վճարներով: Եվ դա է պատճառը, որ ոլորտի կազմակերպությունները հնարավորինս փորձում են արտադրական թափոնները ներկայացնել բնապահպանությանը առնչվող իրենց ոչ վտանգավորության աստիճանով (տես աղյուսակ 3): Հետևաբար, հարկազանձման գործընթացում լուրջ ուշադրություն է դարձվում պոչամբարներում ըստ վտանգավորության աստիճանի կուտակված թափոնների մեկնաբանման վրա, որը երբեմն իրատեսական չի համարվում և ՀՀ հանքաարդյունաբերական կազմակերպություններում իր թերագնահատումն է ստանում:

**Գծապատկեր 3.** Բնօգտագործման վճարների կառուցվածքը ՀՀ-ում<sup>88</sup>.



<sup>88</sup> Կազմվել է հավելված 1-ի տվյալներով:

### Աղյուսակ 3

Արտադրական թափոնների քանակական շարժը ըստ վտանգավորության դասերի (տ)<sup>89</sup> 2016

	Առաջացել են տարվա ընթացքում	Տրվել են այլ կազմակերպությունների	Տեղափոխվել են տեղադրման վայրեր
1-ին դասի	28,7	27,8	0
2-րդ դասի	20	40,3	0
3-րդ դասի	95348,7	56440,7	863,7
4-րդ դասի	20373,2	6758,2	14819,4
Ոչ վտանգավոր	55045627	76768	48335020

Այսպես, բազմաթիվ փորձագետներ պնդում են, որ հատկապես մետաղական հանքերի շահագործումը ՀՀ-ում մեծ վտանգ է ներկայացնում թե՛ բնապահպանական տեսանկյունից, և թե՛ առողջապահական առումով: Այդ վնասների մեծ մասն արդեն ենթակա չէ փոխհատուցման կամ դրա համար անհրաժեշտ են ֆինանսական հսկայական միջոցներ, որոնք շատ անգամ գերազանցում են հանքարդյունաբերության շահագործման օգուտներից: Ավելին, ՀՀ-ում այսօր շահագործվող հանքավայրերը արդեն շատ են և համաչափ չեն այդ տարածքի համար:<sup>90</sup> Հարկ է նշել նաև, որ ՀՀ-ում ամենախոշոր բնապահպանական և բնօգտագործման վճարները կատարում են հանքարդյունաբերության կազմակերպությունները, ինչ էլ վկայում է դրանց կողմից ՀՀ բնությանը մեծագույն վնաս հասցնելու մասին:

<sup>89</sup> ՀՀ Ա.Վ.Ծ, Երջակա միջավայրը և բնական պաշարները ՀՀ-ում, էջ 63

<sup>90</sup> Հանքարդյունաբերության չնչին օգուտների ու հսկայական վնասների թվաստիստակ, 18 օգոստոս, 2017, //www.econews.am

#### Աղյուսակ 4

Կազմակերպություններում առաջացած թափոնների քանակական տեսակարար ցուցանիշներն ըստ ՀՀ մարզերի և Երևան քաղաքի, 2016թ.<sup>91</sup>

	Առաջացել են թափոններ		
	ընդամենը, տ	մեկ բնակչի հաշվով, կգ	մեկ կմ <sup>2</sup> հաշվով
Երևան	15 766.1	14.7	70 700.0
Արագածոտն	1 171.2	9.1	425.0
Արարատ	693.9	2.7	332.0
Արմավիր	13 486.7	50.7	10 858.9
Գեղարքունիկ	29 291 917.1	126 665.6	7 192 436.6
Լոռի	94 981.6	425.9	25 001.7
Կոտայք	4 111.8	16.2	1 971.1
Շիրակ	51 890.4	215.1	19 362.1
Սյունիք	25 686 423.3	184 513.0	5 700 493.4
Վայոց ձոր	602.6	11.9	261.1
Տավուշ	353.0	2.8	130.5
Ընդամենը	55 161 397.7	18 434.1	1 937 758.6

Հատկանշական է նաև, որ հանքարդյունաբերության կազմակերպության ներդրումների առյուծի բաժինը պատկանում է օտարերկրացիներին, որոնք չեն կարողանում նման ներդրումներ կատարել իրենց երկրներում, որտեղ բնապահպանական նորմաները և պետական հարկային պատժամիջոցները շատ ավելի խիստ են և այդ իսկ պատճառով հանքարդյունաբերական գործարարություն են ծավա-

<sup>91</sup> ՀՀ ԱՎԾ, Շրջակա միջավայրը և բնական պաշարները ՀՀ-ում, էջ 63

լում ՀՀ-ում:<sup>92</sup> Միայն 2017 թվականին հանրապետության օտարերկրյա ներդրումների 67%-ը՝ շուրջ 31.6 մլրդ դրամ, կատարվել է հանքարդյունաբերությունում:<sup>93</sup>

Թափոնների գծով հարկազանձման միտումների վերլուծությունը նույնպես վկայում է ոլորտի հարկային քաղաքականության անարդյունավետության մասին:

Այսպես, վիճակագրական ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ կազմակերպություններում առաջացած թափոնների քանակական տեսակարար ցուցանիշներն ըստ ՀՀ մարզերի և Երևան քաղաքի անհամաչափ են բաշխված (տես աղյուսակ 4): Եթե Սյունիքում, Գեղարքունիքում կամ Լոռիում արձանագրվում են թափոնների խոշոր կուտակումներ, կապված հանքարդյունաբերության գործունեության հետ, ապա այդ մարզերում ազգաբնակչության սոցիալ տնտեսական վիճակի վրա հանքերի շահագործման հարկազանձման եկամուտների հավաքագրման և վերաբաշխման ազդեցությունը գրեթե չի զգացվում: Եվ այն դեպքում, երբ մեկ բնակչի հաշվով կամ մեկ քառ. կմ-ի հաշվով նշված մարզերում թափոնային կուտակումները տասնյակ, եթե ոչ հարյուրապատիկ անգամ գերազանցում են ՀՀ մնացած մարզերի նկատմամբ (տես աղյուսակ 4):

Ավելին, աղյուսակ 3-ի տվյալները վկայում են, որ ձևավորված ոչ վտանգավոր դասին պատկանող թափոնները հիմնականում չեն վերամշակվում և կուտակվում են պոչամբարներում: Նման իրավիճակի պատճառներից են հանդիսա-


---

<sup>92</sup> Օտարերկրյա ներդրումներ. Փող միայն հանքերի համար, //www.armtimes.com/hy/article134510

<sup>93</sup> www.express.am/2017/24/12



նում ոչ միայն վերամշակման ժամանակակից տեխնոլոգիական եղանակների ներդրաման դժվարությունները, այլև ոլորտին առնչվող հարկային խթանիչ գործիքակազմի բացակայությունը, քանի որ ներկայումս կազմակերպություններում ՀՀ հանքաքարի արդյունահանման ոլորտում թափոնների վերամշակման հարկային մոտիվացի չի ձևավորվում, և դրան չի նպաստում ոչ վտանգավոր թափոնների կուտակման նկատմամբ բնապահպանական համեմատաբար ցածր դրույքաչափերի կիրառումը:



**Գծապատկեր 4.** Հանքարդյունաբերության հարկա-գանձման կառուցվածքը ՀՀ-ում<sup>94</sup>

Այսպիսով, ՀՀ լեռնահանքային արդյունաբերությունում հարկագանձման գործընթացը բազմաշերտ է և կազմակերպությունների մոտ ձևավորում է ոչ միայն գործարարությանը առնչվող ավանդական հարկատեսակներ (ԱԱՀ, շահութահարկ, եկամտային հարկ), այլև ոլորտին բնորոշ

<sup>94</sup> ՀՀ ՊԵԿ պաշտոնական կայք, //www.taxservice.am

հարկային գանձումներ (ռոյալթի, բնօգտագործման և բնապահպանական վճարներ, ընդերքօգտագործման թույլտվությունների համար պետական տուրք, հանքարդյունահանման լիցենզառուի կողմից վճարվող կոնցեսիոն վճար): Դրանով իսկ, լեռնահանքային ոլորտում հարկային պարտավորությունների առաջացման կառուցվածքը (տես գծապատկեր 4) էապես տարբերվում է արդյունաբերության մյուս ենթաճյուղերից, որն էլ թույլ է տալիս իրականացնելու հետևյալ եզրահանգումները.

Առաջին, ՀՀ լեռնահանքային արդյունաբերության ոլորտի հարկազանձման գործընթացում անհրաժեշտություն է առաջանում ձևավորել այնպիսի հարկային քաղաքականություն, որով ներդաշնակություն կստեղծվի տարբեր հարկատեսակների գծով պարտավորությունների ձևավորման շրջանակում:

Երկրորդ, հարկազանձումը լեռնահանքային արդյունաբերության ոլորտում հնարավորինս պետք է կառուցվի հարկերի հիմնական գործառույթների հայեցակարգի վրա, հաշվի առնելով ինչպես գանձապետական, այնպես էլ վերահսկողական ու մոտիվացիոն լուծումները:

Երրորդ, լեռնահանքային արդյունաբերության ոլորտում հարկազանձումը, նպաստելով ՀՀ տարածքային զարգացվածության համահարթեցմանը, միաժամանակ պետք է թիրախավորվի այն մարզերի սոցիալ տնտեսական զարգացմանը, որտեղ առավել ակտիվ է ընթանում հանքագործական գործունեությունը:

## ԱՄՓՈՓՈՒՄ

Հողվածում մեկնաբանվել են հարկազանձման առանձնահատկությունները լեռնահանքային արդյունաբերությունում և վերլուծվել են հարկերի և տուրքերի ձևավորման միտումները այդ ոլորտում: Ներկայացվել են եզրակացություններ ՀՀ լեռնահանքային արդյունաբերությունում հարկազանձման ներկա վիճակի և հետագա բարելավումների ուղղությամբ: Կատարվել են համապատասխան առաջարկություններ լեռնահանքային արդյունաբերությունում հարկային քաղաքականության բարելավման ուղղությամբ:

**Светлана Мурадян**

Соискатель, Северный университет

## ТЕНДЕНЦИИ НАЛОГООБЛОЖЕНИЯ В ГОНОРУДНОЙ ПРОМЫШЛЕННОСТИ РА

***Ключевые слова** – добыча полезных ископаемых, налогообложение, экологические налоги, роялти, эффективность налогообложения.*

В статье рассматриваются особенности налогообложения в горнодобывающей промышленности и анализируются тенденции налогообложения в этой сфере. Представлены выводы о текущем состоянии налогообложения в горнодобывающей промышленности РА и дальнейших улучшениях. Соответствующие рекомендации были сделаны для улучшения налоговой политики в горнодобывающей промышленности.

**Svetlana Muradyan**

Ph.D. student, Northern University

## TENDENCIES OF TAXATION IN THE MINING INDUSTRY OF THE RA

*Keywords* – mining, taxation, environmental taxes, royalties, effectiveness of taxation.

The article examines the peculiarities of taxation in the mining industry and analyzes trends in taxation in this area. The conclusions about the current state of taxation in the mining industry of the Republic of Armenia and further improvements are presented. Appropriate recommendations were made to improve the tax policy in the mining industry.

*Ներկայացվել է՝ 11.12.2018 թ.*

*Ընդունվել է տպագրության՝ 21.12.2018 թ.*

**Farnoosh Khoshbakht**

Ph.D. Student, European University

## WOMAN MANAGERS AND WORK FORCES VERSUS MEN COUNTERPARTS

*Keywords* – women managers, male counterparts, strengths, weaknesses, communicating, making employees empowered, positive feedback, better leaders.

**Abstract:** In different terms such as motivating and leading methodologies, men and women managers are being compared specially in recent decades. Many surveys have been done on female and men managers in this field and it is concluded that each of them has certain strengths and weaknesses which have roots in biological and psychological differences between these two genders. According to this line of thinking, women tend to be good at such things as communicating and making employees feel empowered and handing out positive feedback. Men are thought to be more decisive, are better at planning and have greater technical skills<sup>95</sup>. Nonetheless eminently according to most reports women are better managers than men. In 2012, Gallup asked 11,434 adults in the US that same question. They tend to be better leaders than their male counterparts, finds Gallup. The survey discovered that employees who work for a female boss are, on average, 6% more engaged than those who work for a male manager<sup>96</sup>.

About 62 years ago, market research firm Gallup asked a group of adults in the US: "If you were taking a new job and had your choice of a boss, would you prefer to work for a man or a woman?"<sup>97</sup> A whopping 66% said they preferred a male boss; 5% said they preferred a female boss; and 25% claimed it made no difference to them. Fast-forward six decades to Gallup's latest report, "State of the American Manager," which reveals a slight shift in those numbers. In 2012, Gallup asked 11,434 adults in the US that same question. This time, only 33% said they preferred a male boss, while 20% said female, and 46% said they have no preference. After these

---

<sup>95</sup> <http://www.selectpro.net/index.php/ScrArtWomenMen>.

<sup>96</sup> <http://www.businessinsider.com/why-women-are-better-managers-than-men-2015-4>

<sup>97</sup> <http://www.businessinsider.com/why-women-are-better-managers-than-men-2015-4>

results this question was asked “is it true that female managers are better than male managers? And if it is so why?”

For five years data was collected on 2,482 managers (1727 male and 755 females) from 459 organizations across nineteen organizations in the United States. It included managers at all levels, using a method known as a 360-degree feedback. The data included each manager’s self- evaluation with evaluations from his other boss and direct reports. The study attempted to measure each manager’s ability in twenty different skills area: setting goals, planning, technical expertise, delegation, approachability, strategy, empowering, trust, self-confidence, communication, teamwork, resourcefulness and decisiveness<sup>98</sup>.

The results were so amazing. The women managers were rated higher than their male counterparts. Women managers also evaluated higher not only by their bosses but also by their employees. The amazing tips were that female managers were evaluated higher in seventeen of the twenty skill areas (as mentioned before), fifteen at a statistically significant level and men and women tied in the other three areas which are technical expertise, delegation and self-confidence. After these results have been shown many theories about the reasons were considered. Men and women have significant psychological and physical differences that affect their future social lives directly. As a distance, it has been proven that women are more adept at the softer skills primarily as a result of their early socialization. Men, meanwhile, are taught to be more aggressive and focus on individual accomplishment. Therefore in recent decades, bosses prefer to hire women forces and specially women managers \ in a work-place.

---

<sup>98</sup><http://www.selectpro.net/index.php/ScrArtWomenMen.html>

In the perspective of recognition at work, women are less likely to pursue recognition. Perhaps unsurprisingly, female managers show a lower desire to seek power ‘for power’s sake’ compared to men. It seems that, rather than pursuing status and recognition, female managers are more inclined to lead with their conscience, focusing on providing support and treating all team members fairly.


The findings support previous research that found that female managers are more likely to prioritize helping team members to work to their full potential, through regularly checking in with their progress, providing helpful feedback and praising good performance. Female managers tend to be more level-headed in their work style.

Compared to male managers, women tend to be more creative and open-minded. They are likely to consider all aspects of any situation or decision to be made, including interpersonal and emotional factors that are sometimes overlooked or disregarded. Again, this would appear to link to their higher levels of empathy.

Female managers also seem to be more dutiful and methodical in their approach to working, making them a bit more level-headed. This fits with the findings that women managers are also less motivated by thrill-seeking than men, and more likely to enter an engaged state of ‘flow’ whilst working on a task.

Taking this in combination with their creativity, it seems that women adopt a generally open-minded, yet focused, thinking style as managers. In a survey which has been done in 2011, the wages and salaries of full-time wages of whole worker from all levels were evaluated on the basis of gender and race and the following conclusion are achieved:

Median usual weekly earnings of full-time wage and salary workers by sex, race, and Hispanic or Latino ethnicity, 2011 annual averages



NOTE: Persons whose ethnicity is identified as Hispanic or Latino may be of any race.  
 SOURCE: U.S. Bureau of Labor Statistics.

This chart shows the gap between men and women salary rates. Women’s salaries and wages are less than their men counterparts’ worldwide and among most races and tribes. On the other hand, another survey has been done in 2011 on random groups of women and men leaders on the basis of sixteen competences of leaders and managers and the results showed by t values as below:

The chart shows that women leaders are more competent than their men counterparts in fifteen competencies element. Develop strategic perspective element, is the only scope which men have priority to women. By considering the outcomes of these two surveys we can reach to considerable consequences.



### The Top 16 Competencies Top Leaders Exemplify Most

	Male Mean Percentile	Female Mean Percentile	T value
Takes Initiative	48	56	-11.58
Practices Self-Development	48	55	-9.45
Displays High Integrity and Honesty	48	55	-9.28
Drives for Results	48	54	-8.84
Develops Others	48	54	-7.94
Inspires and Motivates Others	49	54	-7.53
Builds Relationships	49	54	-7.15
Collaboration and Teamwork	49	53	-6.14
Establishes Stretch Goals	49	53	-5.41
Champions Change	49	53	-4.48
Solves Problems and Analyzes Issues	50	52	-2.53
Communicates Powerfully and Prolifically	50	52	-2.47
Connects the Group to the Outside World	50	51	-0.78
Innovates	50	51	-0.76
Technical or Professional Expertise	50	51	-0.11
Develops Strategic Perspective	51	49	2.79

Source: Zenger Folkman Inc., 2011

The first survey compares the wage as an economic issue and considers the gap of that by means of the gender deference; the latter considers the sociological factors according to gender. As we can see in the first chart, the women wages are less than men', and in the next chart we see that the women's competencies in almost all sociological factors are stronger than men. By considering these two surveys together we can come to this conclusion that despite of earning fewer wages, women cope with their responsibilities much better than men from the lowest positions to the top ones. This consequence can consider as a valuable recommendation for developing corporations and newborn businesses as a novelty to come to success.

## Conclusion

In the competitive global market, paying special attention to the managerial issues considers as a crucial need to survive in the market. A very considerable change which has been done in the world of management and economics in this recent decade is the priority of women leaders and work force to men. Women in lots of fields have been developed in spite of their psychological and sociological limitations. This admiring shift has caused the bosses in many spots in the world; prefer women work forces from the low to the top positions. This transition can be considered as a novelty for developing and newborn businesses and projects to overcome their competitors.

### Տառնուշ Խոշբախտ

Ասպիրանտ, Եվրոպական համալսարան

## ՄԵՆԵՋԵՐ ԿԱՆԱՅՔ ԵՎ ՏՂԱՄԱՐԴԻԿ. ԱՇԽԱՏՈՒԺԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

*Հիմնաբառեր – կառավարիչ, կառավարչական հմտություններ և կարողություններ, առաջնորդություն, կին և տղամարդ կառավարիչներ*

Վերջին տասնամյակների ընթացքում կազմակերպությունների երկու սեռերի՝ իգական և արական, ղեկավարները համեմատվում են մոտիվացիոն և առաջնորդական հմտությունների առումով: Վերջիններս հաշվի առնելով, բազմաթիվ հարցումներ են կատարվել կին և տղամարդ ղեկավարների շրջանում: Արդյունքում հանգել են այն եզրակացության, որ նրանցից յուրաքանչյուրն ունի որոշակի ուժեղ և թույլ կողմեր: Վերջիններս պայմանավորված են երկու սեռե-

րի կենսաբանական և հոգեբանական տարբերություններով: Կանայք առավել հմուտ են հաղորդակցվելու ոլորտում, իսկ տղամարդիկ ավելի վճռական են, ավելի լավ են պլանավորում և ունեն ավելի մեծ տեխնիկական հմտություններ: Հոդվածում կատարվել է տղամարդ և կին մենեջերների հմտությունների համեմատական վերլուծություն:

**Фарнуш Хошбахт**

*Аспирант, Европейский Университет*

## **МЕНЕДЖЕРЫ МУЖЧИНЫ И ЖЕНЩИНЫ. СРАВНИТЕЛЬНЫЙ АНАЛИЗ РАБОЧЕЙ СИЛЫ**

**Ключевые слова** – менеджеры, управленческие навыки и способности, лидерство, менеджеры мужчин и женщин.

За последние десятилетия мужчины и женщины, занимающиеся с управлением в организациях, сравнивались по-разному. например, мотивация и лидерские навыки. Было сделано много запросов о женских и мужских управленческих навыков в организациях и сделан вывод о том, что каждый из них имеет некоторые сильные и слабые стороны, которые связаны с биологическими и психологическими различиями между этими двумя полами. Женщины с большей вероятностью общаются на местах и ощущать чувство сотрудников, давая положительные отзывы. Мужчины считают, что они более решительны, лучше планируют и улучшают технические навыки. В статье анализируются отличительные навыки способности менеджеров мужчин и женщин.

*Ներկայացվել է՝ 12.12.2018 թ.*

*Հնդուկվել է տպագրության՝ 21.12.2018 թ.*

Հրատարակության է երաշխավորել «Հաշվապահության  
Ուսուցման Միջազգային Կենտրոն» կրթական հիմնադրամի  
գիտական խորհուրդը

Գիտական հանդեսի էլեկտրոնային տարբերակը տեղադրված է  
«Հաշվապահության Ուսուցման Միջազգային Կենտրոն» կրթական  
հիմնադրամի պաշտոնական կայքէջում՝ [www.iatc.am](http://www.iatc.am) :

Երևան, Չարենցի 1, 9-րդ հարկ  
հեռ.՝ (+37410) 575940, e-mai՝ info@iatc.am

Չափսը՝ 60x84 <sup>1</sup>/<sub>16</sub>  
Տպագրություն օֆսեթ՝ 10,19 մամուլ  
Տպաքանակ՝ 200  
Տպագրված է՝ Ա/Չ «Արսեն Ժամհարյան» տպարանում  
Երևան-25, Ալեք Մանուկյան 1/5

Գիտական հանդեսի էլեկտրոնային տարբերակը տեղադրված է  
«Հաշվապահության Ռեսուրսների Միջազգային Կենտրոն»  
կրթական հիմնադրամի պաշտոնական կայքէջում՝ [www.iatc.am](http://www.iatc.am):



ՀՀ, Երևան 0025, Չարենցի 1, 9-րդ հարկ, [www.iatc.am](http://www.iatc.am), [info@iatc.am](mailto:info@iatc.am)  
հեռ.՝ 010 575 940, 055 575 940, 099 575 940